«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Կանանց հանդեպ բռնությունների կանխման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամ

ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ՝ ՏԱՐԲԵՐ, ԲԱՅՑ ՀԱՎԱՍԱՐ: ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ Է ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԵՐԵՎԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ

2016

ՀՏԴ 316.346.2:396(07)
ԳՄԴ 60.54+66.74g7
Կ 490

Կ 490 ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ՝ ՏԱՐԲԵՐ, ԲԱՑՑ ՀԱՎԱՍԱՐ: ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ.- ԵՐ.: ՏԻԳՐԱՆ ՄԵԾ, 2016. - 164 էջ:

Սույն ուսուցողական ձեռնարկը պատրաստվել է «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ի կողմից «ՀՀ 2011-2015 թթ. ազգային ռազմավարական ծրագրի շրջանակներում գենդեր և գենդերային բռնություն առարկայի ներդրումը ուսումնական պլանում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է Միավորված ազգերի կազմակերպության կանանց հանդեպ բռնությունների կանխման հավատարմագրային հիմնադրամի (UN Trust Fund to End Violence against Women) ֆինանսական աջակցությամբ:

Այն կիրառելի է հասարակագիտության ուսուցիչների համար՝ հասարակագիտության դասաժամեր վարելիս, դպրոցի հոգեբանների ու դասղեկների համար՝ դասղեկի ժամեր վարելիս և աշակերտների ու ծնողների հետ անհատական, փոքր և մեծ խմբերով աշխատելիս: Ձեռնարկը նախատեսված է միջին և ավագ դպրոցի սաների համար:

ՀՏԴ 316.346.2:396(07)
ԳՄԴ 60.54+66.74g7

ISBN 978-99941-0-713-1

© «ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ԲՌՆՈՒԹՅԱՆ» ՀԿ, 2016

Ձեռնարկի կազմողներ՝

ըստ այբբենակարգի

Անուշ Ալեքսանյան
Կրթության փորձագետ, հոգեբան

Արմինե Իվանյան
Կրթության փորձագետ

Աննա Նիկողոսյան
Գենդերային փորձագետ

Գլխավոր խմբագիր՝

Աննա Արուճյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Աննա Նիկողոսյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Նկարազարդող՝

Վահե Ներսեսյան

Ձեռնարկի պատրաստման աշխատանքների համակարգող՝

Մարիա Աբրահամյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Մարինե Ադամյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Լիդա Մինասյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

Համակարգչային ձևավորում՝

«Տիգրան Մեծ» հրատարակչություն

Բովանդակություն

Նախաբան 6

Գործնական խորհուրդներ, ցուցումներ ուսուցիչներին գենդերային թեմատիկայով դասեր և քննարկումներ վարելու համար 8

Տեսական մաս 10

Ինչ է «գենդեր»-ը 11

Ինչ է կարծրատիպը: Գենդերային կարծրատիպեր 13

Ինչ է գենդերային խտրականությունը: Որոնք են դրա դրսևորման ձևերը 16

Գենդերային հավասարություն: Ինչու՞ է պետք պայքարել հանուն գենդերային հավասարության 19

Գենդերային հավասարության իրավական նախադրյալները: Միջազգային և տեղական օրենսդրության կարևոր փաստաթղթերը 25

Ինչ է ֆեմինիզմը: Ֆեմինիզմի գաղափարախոսությունը 29

Ինչ է բռնությունը: Բռնության տեսակները 35

Ինչ է ընտանեկան բռնությունը 37

Գենդերային բռնություն 42

Հասարակության մեջ առկա թյուր պատկերացումներ բռնության տարբեր տեսակների վերաբերյալ 44

Ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության կիրառման պատճառները և հետևանքները 47

Ինչպե՞ս ճանաչել բռնության ենթարկված երեխային: Ինչպե՞ս օգնել նրան 50

Ինչպե՞ս են պայքարում գենդերային բռնության դեմ Հայաստանում և ամբողջ աշխարհում 52

Հասկացությունների բառարան 56

Գործնական մաս 58

Գործնական վարժություններ 60

Ինչո՞վ ենք մենք տարբերվում միմյանցից 62

Ինչ է գենդերը 64

Ես կարող եմ և ես կկարողանայի 67

Մենք բալիկի ենք սպասում 68

Սպասելիքներ, պահանջներ և պարտավորություններ 70

Գենդերային ուղերձներ 72

Այբուբեն 74

Իսկ դու ձախլի՞կ ես 76
Ի՞նչ է կարծրատիպը..... 78
Գենդերային կարծրատիպեր..... 80
«Իսկական» տղամարդ, «իսկական» կին..... 82
Ինձ դուր է գալիս, ինձ դուր չի գալիս 84
Կողմ եմ, դեմ եմ..... 86
Բացահայտենք կարծրատիպերը 88
Մեկ օր մեկ ընտանիքի կյանքից 92
Իմ երազանքի տունը 94
«Նայիր հայելու մեջ» 95
Գենդերային դերեր 96
Ֆորում թատրոն 98
Անհավասարություն..... 100
Կանանց դրախտը..... 103
Դիրքի կամ կարգավիճակի ձգտելով 105
Կանայք՝ առաջնորդներ 107
Երբ ղեկավարում են կանայք..... 109
Պատմական էքսկուրս 113
Մի՛ վախեցիր հավակնոտ թվալուց..... 121
Մեկ օր առանց կնոջ/ մեկ օր առանց տղամարդու..... 124
Գենդերային հավասարության իրավական հիմքերը 126
Հետազոտում ենք մեդիան..... 131
Ճակատագրական պատմություն գետի վրա 133
Ի՞նչ է բռնությունը..... 137
Բռնությունը մեր կյանքում 139
Արդյո՞ք բռնություն է, երբ 140
Մոլորություններ և փաստեր բռնության վերաբերյալ..... 143
Մի քանի ճակատագրեր մեր իրականությունից
կամ «մեր կողքին, մեր հարևանությամբ» 146
Ականատեսի վկայություններ 152
Կարելի է փախչել 157
Բռնությունից զերծ ընտանիք 159
Օգտագործված գրականություն 160

ՆԱԽԱԲԱՆ

Մի շարք տեղական սոցիոլոգիական հետազոտությունների համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում ամեն երրորդ կին ենթարկվում է ընտանեկան բռնության առնվազն մեկ տեսակի: Բռնության ենթարկված կանանց մոտ 40 %-ը հայտնում է, որ երեխաներն ականատես են լինում բռնությանը: Կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպությունները բռնության դեպքերի մասին տարեկան 4000-ից ավելի ահազանգ են ստանում: Ոստիկանության պաշտոնական տվյալների համաձայն՝ միայն 2014-2015 թթ.-ին ընտանեկան բռնությունից մահացել է 13 կին:

Որպես կանոն, Հայաստանում կանայք գրեթե ընդգրկված չեն որոշումների կայացման գործընթացներում՝ լինեն այդ որոշումները անձնական, ընտանեկան, համայնքային, թե պետական մակարդակներում: Վերջինիս ապացույց կարելի է համարել կանանց փոքր թիվը Հայաստանի իշխանության տարբեր ճյուղերում: Համաձայն Ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ Հայաստանում չկան կին մարզպետներ և քաղաքապետներ, գյուղապետների 2.2 տոկոսն է կին, նախարարների՝ 11, պատգամավորների՝ 10.7, դատավորների՝ 22 տոկոսը:

Կանանց նկատմամբ խտրականությունը, հասարակության բնականոն զարգացումն ու աճը խոչընդոտող գենդերային կարծրատիպերը և բռնությունը բերում են նրան, որ կանայք չեն կարողանում ամբողջովին իրացնել իրենց իրավունքները և ներուժը: Իրավունքների ոտնահարումը բերում է անձնական սահմանափակ զարգացման, իսկ դրանից տուժում են ոչ միայն կանայք, այլև հասարակությունն առհասարակ, քանի որ բնակչության կեսից ավելիի ներուժը լիարժեքորեն չի օգտագործվում ի բարօրություն տվյալ հասարակության:

Հայտնի ճշմարտություն է, որ հասարակական գիտակցության փոփոխման արդյունավետ գործիքներից մեկը կրթությունն է: Հայաստանի Հանրապետությունն անցնում է պետականության կայացման և քաղաքացիական հասարակության կառուցման դժվարին ճանապարհ: Այս գործընթացում հսկայական է նոր սերնդի դաստիարակության կարևորությունը: Կրթության համակարգի խնդիրն է ակտիվ քաղաքացու ձևավորումը, ով նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների արժեքների կրողը և ջատագովը կլինի: Այդ իսկ պատճառով կրթությունը պետք է միտված լինի ոչ միայն մտավոր կապիտալի կուտակմանը, այլև գիտակցության փոփոխմանը, ինչն իր հերթին կհանգեցնի համապատասխան փոփոխությունների հասարակական կյանքում:

Կրթության բովանդակությունն ընդգրկում է ոչ միայն զուտ գիտելիքներ, այլ նաև կարողություններ և հմտություններ, արժեքային համակարգ, վերաբերմունք, աշխարհայացք: Այս առումով մեծ պատասխանատվություն է դրված հանրակրթական դպրոցի վրա, որի գլխավոր նպատակներից մեկն անձի՝ որպես քաղաքացու ձևավորումն է: Ուստի վերոնշյալ խնդիրների լուծման կարևորագույն քայլերից մեկը կարելի է համարել այն, որ գենդերային բաղադրիչը գիտելիքների, հայացքների և արժեքային կողմնորոշումների միջոցով ընդգրկվի կրթության բովանդակության և դպրոցի սոցիալական համակարգի մեջ:

Սույն ուսուցողական ձեռնարկը կոչված է նպաստելու այդ կարևորագույն գործընթացին: «Կին և տղամարդ՝ տարբեր, բայց հավասար: Տեսական և գործնական ուղեցույց» ձեռնարկը նախատեսված է ուսուցիչների, մանկավարժական գործունեություն ծավալողների ու դասընթացավարների համար և պարունակում է օգտակար տեղեկատվություն և գործնական վարժություններ վերոնշյալ թեմաներով:

Միևնույն ժամանակ ձեռնարկն օգնելու է գալիս նաև պետությանը՝ հասնելու կրթության ոլորտում իր իսկ կողմից սահմանված նպատակներից մի քանիսին, այն է՝ «սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացիների դաստիարակում, էգալիտար գենդերային մշակույթի ձևավորում, աջակցություն հասարակությունում գենդերային հավասարության, սոցիալական արդարության և սոցիալական ազատությունների ձեռքբերմանը, գենդերային խտրականությունից և գենդերային բռնությունից զերծ հասարակության և կրթական միջավայրի ձևավորում»:

Հուսով ենք՝ այս ձեռնարկն ուրույն կերպով կնպաստի Հայաստանում կանանց նկատմամբ բռնության և խտրականության վերացմանը և կօգնի նրանց՝ ամբողջովին օգտագործելու իրենց իրավունքներն ու ներուժը:

Աննա Նիկողոսյան
«Հասարակություն առանց բռնության» ՀԿ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ, ՖՈՒՖՈՒՄՆԵՐ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԹԵՄԱՏԻԿԱՅՈՎ ԴԱՍԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ՎԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ***Պարզեք գենդերային հարցերում Ձեր սեփական նախապաշարմունքներն ու կարծրատիպերը. դրանք կարող են փոխանցվել Ձեր աշակերտներին***

Զգույշ եղեք, որպեսզի չխորացնեք այն կարծրատիպերը, որոնց վերացնելուն են ուղղված այս վարժությունները:

- ***Անկողմնակալ վերաբերմունք ցուցաբերեք երկու սեռի ներկայացուցիչների հանդեպ***

Գովելիս, խրախուսելիս կամ նկատողություն անելիս երկու սեռի ներկայացուցիչներին նույն կերպ վերաբերվեք:

- ***Ընդգծեք, որ գենդերային հավասարությունը չի նշանակում բացարձակ նույնություն***

Դեռ մանկությունից պետք է սերմանել երկու սեռի գոյության անհրաժեշտության ու փոխլրացման գաղափարը, ընդգծել դրանց նշանակությունը, ցույց տալ, որ նրանք չեն կարող գոյատևել առանց մեկը մյուսի, և շատ կարևոր է, որ երկու սեռերն էլ օժտված լինեն հավասար իրավունքներով: Գենդերային հավասարություն նշանակում է հավասար իրավունքներ և հնարավորություններ երկու սեռերի համար, ոչ թե նրանց նույնականացում:

- ***Խուսափեք տղաներին և աղջիկներին հակադրելուց***

Դասերն անցկացրեք այնպես, որ երկու սեռերի ներկայացուցիչները դեմ առ դեմ դուրս չգան և քննարկումները չվերածվեն վիճաբանությունների և ընդհարումների: Աշակերտների մոտ ձևավորեք սեփական կարծիքը պաշտպանելու ունակություն և բանավեճերի ընթացքում ռացիոնալ հատիկը տեսնելու կարողություն:

- ***Հետաքրքրություն առաջացրեք աշակերտների մոտ***

Դասերն անցկացրեք ուսուցման ինտերակտիվ մեթոդներով՝ բանավեճեր, խաղեր, զրույցներ, իրավիճակների վերլուծություն, դերային խաղեր, տեսանյութերի ցուցադրում և քննարկում: Ստեղծեք անկաշկանդ, ազատ մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուրը կարող է արտահայտել իր կարծիքն ու չքարկոծվել դրա համար:

Սովորեցրեք աշակերտներին բանավիճելու կանոնները, վերլուծելու, քննադատաբար մտածելու, փաստը կարծիքից տարբերելու կարևորագույն ունակությունները:

Եթե անհրաժեշտ է, աշակերտներին տվեք տեղեկատվական գրքույկներ, այլ լրացուցիչ ուսումնական նյութեր, որպեսզի նրանք չստանան խեղաթյուրված, կարծրատիպերով լի տեղեկատվություն:

♦ ***Աշխատանք տարեք նաև ծնողների հետ***

Ծնողները լսում են ուսուցչի խորհուրդները երեխաների դաստիարակության հարցերում: Կարելի է խոսել գենդերային կարծրատիպերի, հավասար հնարավորությունների մասին ծնողական ժողովների, անհատական հանդիպումների ժամանակ և նպաստել գենդերային զգայունության բարձրացմանը: Միևնույն ժամանակ պետք չէ այդ խորհուրդները վերածել բարոյախրատական քարոզների:

Արժե ծնողներին ներգրավել ուսուցման գործընթացի մեջ, այլապես նրանց սահմանափակ գիտելիքներն այդ ոլորտում կարող են վնասել այն քաղաքականությանը, որը տարվում է դպրոցում:

Հայկական շատ ընտանիքներում առկա է կնոջ նկատմամբ բռնություն, ինչը հաճախ փորձում են արդարացնել ավանդույթներով: Կան դպրոցականներ, որոնք գալիս են ընտանիքներից, որտեղ առկա են բռնության տարբեր տեսակներ: Երեխաները խաղալիք են դառնում ծնողների փոխհարաբերությունների մեջ: Շատ կարևոր է օգնել նրանց՝ խնդիրները հասկանալու, եզրահանգումներ անելու ու ճիշտ որոշումներ կայացնելու հարցում:

ՏԵՍԱԿԱՆ ՄԱՍ



Ձեռնարկի այս հատվածում ներկայացված են նյութեր՝ հասկացություններ, սահմանումներ, հարցադրումներ, հիմնախնդիրներ, ինչպես նաև խորհուրդներ, որոնք կօգնեն ուսուցիչներին առավել պատրաստված և վստահ լինել գենդերային թեմատիկայով դասեր, դասղեկի ժամեր, արտադասարանային քննարկումներ և բանավեճեր անցկացնելիս:

Նյութը հիմնականում ներկայացված է հարց ու պատասխանի ձևով: Հարցերը և հարցադրումներն ուղղված են ուսուցիչների և սովորողների գենդերային իրազեկվածության բարձրացմանը և ընտրված են՝ հաշվի առնելով այդ ոլորտում առկա բացերը:

ԻՆՉ Է «ԳԵՆԴԵՐ»-Ը

Գենդեր հասկացության մեկնաբանությունը և նշանակությունը

Կինը և տղամարդը տարբերվում են իրարից, և այդ տարբերությունները բազմաթիվ են ու բազմաբնույթ: Սակայն կան տարբերություններ, որոնք պայմանավորված են կենսաբանական գործոններով, և կան տարբերություններ, որոնք կապված են հասարակության մեջ կնոջ և տղամարդու ունեցած դերերի, ակնկալիքների և վարքականոնների հետ:

Նպատակ ունենալով առանձնացնել կնոջ և տղամարդու միջև ֆիզիոլոգիական տարբերությունը սոցիալ-մշակութային կերտվածքից՝ առաջ քաշվեցին «սեռ» և «գենդեր» հասկացությունները:

Եթե ***սեռ*** հասկացությունը բնութագրում է կանանց և տղամարդկանց կենսաբանական, ֆիզիկական, ֆիզիոլոգիական և բնության կողմից տրված այլ առանձնահատկությունները, ապա ***գենդերը*** մատնանշում է կնոջ և տղամարդու միջև առկա սոցիալական տարբերությունները և հասարակության կողմից նրանց վերագրված դերերի առանձնահատկությունները:

Սեռը կենսաբանական կատեգորիա է. սեռի դեպքում մենք խոսում ենք կնոջ և տղամարդու մարմինների միջև կենսաբանական, ֆիզիոլոգիական տարբերությունների մասին: Օրինակ՝ կանանց մոտ՝ հղիություն, ծննդաբերություն, կրծքով կերակրում, տղամարդկանց մոտ՝ բամբ ձայն, ավելի խիտ մազածածկույթ և այլն:

Գենդերը սոցիալական կատեգորիա է, հասարակության մեջ սոցիալապես ամրագրված, կանանց և տղամարդկանց վերագրվող ընդունելի վարքագիծ: Այսինքն՝ դրանք այն հատկանիշներն են, ընկալումները, ակնկալիքներն ու վարքականոնները, որոնք ոչ թե բնությունն է տվել կնոջը կամ տղամարդուն, այլ հասարակությունը՝ տվյալ ժամանակահատվածում և տվյալ պատմամշակութային համատեքստում:

Օրինակ՝ տղամարդիկ ասոցացվում են «ուժեղ», «քաջ», «ընտանիքի հացը վաստակող» հատկանիշների հետ: Իսկ կանայք նույնացվում են «քնքուշ», «հնազանդ», «համեստ» հատկանիշների հետ: Սակայն այս հատկանիշները և վարքագծերը տղամարդուն և կնոջը չեն տրվել ի ծնե. հասարակությունն է դրանք բաժանել՝ անվանելով «կանացիություն» և «տղամարդկայնություն»: Նման վարքագծերն ու սպասելիքները մարդիկ սովորում, յուրացնում և կիրառում են դեռ մանուկ հասակից՝ ընդօրինակելով իրենց ընտանիքի անդամներին, դաստիարակներին և ուսուցիչներին, հեռուստատեսությունում, գովազդներում առկա կերպարներին և, առհասարակ, շրջապատին:

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

«Գենդեր»՝ լատիներեն “genus”, նշանակում է ծնունդ, ընտանիք, գեն և ցեղ: Գենդեր հասկացությունն առաջինը կիրառել է Կալիֆորնիայի համալսարանի հոգեբանության պրոֆեսոր Ռոբերտ Ստոլլերը 1968 թվականին՝ նպատակ ունենալով առանձնացնել կնոջ և տղամարդու միջև ֆիզիոլոգիական տարբերությունը սոցիալ-մշակութայինից:

Գենդերային հատկանիշները ձեռքբերովի են պատմամշակութային համատեքստում և քարացած չեն, այսինքն՝ ժամանակի ընթացքում փոփոխվում են: Այսպես, օրինակ, 18-րդ դարում Ֆրանսիայում տղամարդիկ շպարվում էին, հագնում բարձրակրունկ կոշիկներ, զուգագուլպաներ և կրում կեղծամ, իսկ կանայք լայն և ուռուցիկ շրջազգեստներ էին կրում: Մինչդեռ այժմ ո՛չ տղամարդիկ, ո՛չ կանայք նման տեսք չունեն: Մեկ այլ օրինակ, նախկինում կանանց սոցիալական կարգավիճակը նրանց թույլ չէր տալիս մասնակցել քաղաքական ընտրություններին, մինչդեռ այժմ կանայք ***դե յուրե*** հավասարապես կարող են նախագահ դառնալ կամ մասնակցել քաղաքական գործընթացներին:

Կանայք և տղամարդիկ նաև տարբեր են տարբեր մշակույթներում: Այսինքն՝ սոցիալական դերերը բնածին չեն, քանի որ այդ դեպքում դրանք նույնը կլինեին բոլոր մշակույթներում: Այսպես, օրինակ, հայ կինը հասարակությունում ունեցած իր դիրքով, իրեն վերագրված վարքականոններով ու իրենից ունեցած ակնկալիքներով զգալիորեն տարբերվում է կանադացի, թայլանդացի կամ պակիստանցի կնոջից:

Գենդերային հատկանիշներն անվանում են ձեռքբերովի, քանի որ և՛ տղաները, և՛ աղջիկները յուրացնում են այն վարքը, որն ընդունված է տվյալ հասարակության մեջ: Օրինակ՝ տղաներից ակնկալվում է, որ նրանք լինեն ամուր, զուսպ, ավելի ուժեղ, համառ, կոպիտ, նրանց սովորեցնում են զսպել հույզերը, չլացել, ընտրել տեխնիկական կամ մտավոր բարձր ունակություններ պահանջող մասնագիտություններ, իսկ աղջիկներից ակնկալվում է ավելի պասիվ, հարմարվող, զիջող, զգացմունքային վարքագիծ, նրանց սովորեցնում են լինել համեստ, ընտրել առավելապես հումանիտար ուղղվածությամբ մասնագիտություններ:

ԻՆՉ Է ԿԱՐԾՐԱՏԻՊԸ: ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

Կարծրատիպերը մարդկանց ու երևույթների մասին կարծրացած պատկերացումներն են, որոնք արմատավորվում են մարդկանց մտածելակերպում, վերածվում համընդհանուր կարծիքի և հեշտությամբ տարածվում են հասարակության մեջ: Կարծրատիպային կարող են լինել վարքագծի, սովորությունների, կենսակերպի մասին պատկերացումները (ամերիկացիները հարուստ են, ակնոց կրողները խելացի են, շիկահերները գեղեցիկ են, թուրքերը արյունարբու են և այլն):

Գենդերային կարծրատիպերը տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ գոյություն ունեցող կայուն պատկերացումներն են տղամարդկանց և կանանց վերաբերյալ:

Գենդերային կարծրատիպերը յուրացվում են մանուկ հասակից, շատ կայուն են, դժվար են փոփոխվում, յուրացվում են նույնիսկ այն խմբերի կողմից, որոնց նկատմամբ ձևավորվել են: Գենդերային կարծրատիպերը գործում են ինչպես անհատական, այնպես էլ հասարակական մակարդակում: Տարածված գենդերային կարծրատիպեր են՝

Կինը ստեղծված է ընտանիքի համար:
Կանայք տղամարդկանցից թույլ են:
Ղեկավարելը տղամարդու առաքելությունն է:
Կանայք տեխնիկայից գլուխ չեն հանում:
Տղամարդու սիրտ տանող ճանապարհին անցնում է նրա ստամոքսով և այլն:

Տարբեր հասարակություններ կարող են ունենալ տարբեր կարծրատիպեր՝ կախված ազգային առանձնահատկություններից, կյանքի պայմաններից, տարիքից, կրթությու-



նից և այլն: Կան նաև ունիվերսալ, ընդհանրական գենդերային կարծրատիպեր, որոնք հատուկ են ցանկացած աշխարհագրական և սոցիալական կտրվածքներին: Բոլոր հասարակություններում տղամարդու հետ նույնացնում են ուժ, իշխանություն, կայունություն, կերակրողի դեր, սպորտային վիճակ, առաջնորդություն, ագրեսիվություն հատկանիշները, իսկ կին գաղափարի հետ նույնացնում են քնքշություն, թուլություն, հարմարվողականություն, ընտանիք, հավատարմություն, պասիվություն, հոգատարություն, ամոթխածություն, զգացմունքայնություն հատկանիշները:

2010-2011 թթ.-ին «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից Հայաստանում իրականացված «Ձերծ պահիր ինձ քո կարծրատիպերից»[1] սոցիոլոգիական հարցման համաձայն՝

- Կանանց 43.7 %-ը և տղամարդկանց 56.6 %-ը կարծում է, որ կինն է դրդում տղամարդուն իր վրա ձեռք բարձրացնել:
- Տղամարդկանց 60.4 %-ը և կանանց 36.9 %-ը կարծում է, որ կինը չի կարող լինել լավ ղեկավար:
- Հարցվողների 24.2 %-ը կարծում է, որ եթե կինը զբաղված է կարիերայով, ապա խնդիրներ ունի անձնական կյանքում:
- Կանանց 63.8 %-ը ափսոսում է, որ տղամարդ չի ծնվել:

Գենդերային կարծրատիպերի զոհեր կարող են լինել ինչպես կանայք, այնպես էլ տղամարդիկ: Շատ հաճախ գենդերային կարծրատիպերի հետևանքով մարդիկ չեն կարողանում ինքնարտահայտվել, մասնագիտական հաջողությունների հասնել, կայանալ որոշակի ոլորտներում կամ ընտանիքում, փոխարենը դառնում են շրջապատի կարծրացած մտածելակերպի զոհ՝ գնալով որոշ զիջողությունների: Այդ պատճառով կարևոր է կարծրատիպերի դեմ պայքարելը և դրանք կոտրելը:

Գենդերային կարծրատիպերի արդյունքում ձևավորվում են ***գենդերային նորմեր***, որոնք կանանց և տղամարդկանց վարքի որոշակի ընդունված կանոններ են: Գենդերային նորմերը պարտադրվում են մարդկանց՝ նրանց կենսաբանական սեռից ելնելով՝ հասարակությունում իշխող պատկերացումներին և սպասելիքներին համապատասխան:

Ելնելով այդ պատկերացումներից՝ տղամարդիկ և կանայք կատարում են ***գենդերային դերեր***, որոնք հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ են:

Կատարել այս կամ այն գենդերային դերը նշանակում է ունենալ տղամարդուն կամ կնոջը համապատասխան արտաքին տեսք, հագուստ, շարժուձև, խոսք, հասարակական կամ քաղաքական դիրք, ստանձնել հասարակության մեջ այդ գենդերին հատկացված գործառույթը:

---

1 «Ձերծ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցում, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, Երևան, 2011. Կապուղի՝ http://bit.ly/1QJ2tc9

ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԴՐԱ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Գենդերային խտրականությունը մի գործելակերպ է, երբ տղամարդկանց և կանանց միջև սեռի հատկանիշով պայմանավորված տարբերակում է դրվում, և նախապատվություն է տրվում որևէ սեռի, ինչը հանգեցնում է նրանց իրավահավասարության սահմանափակմանը կամ վերացմանը:

Այդ նախապատվությունները կարող են լինել թաքնված կամ ամրագրված օրենքում. վերջին դեպքում խոսքը բացահայտ խտրականության մասին է: Այսինքն՝ ***դե յուրե*** ամրագրված իրավունքները չեն բացառում ***դե ֆակտո*** խտրական վերաբերմունք և գործելակերպ:

Գենդերային խտրականությունը դրսևորվում է ուղղակի կամ անուղղակի ձևերով:

Գենդերային ուղղակի խտրականության ձևեր են՝

- Ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը՝ ընտանեկան պարտավորությունների անհավասար բաշխումը, հղիության ստիպողական ընդհատումը, արգելքներն ու տաբուները կանանց համար և այլն:
- Սեռի հատկանիշով աշխատավարձի տարբերակումը՝ միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը:
- Գենդերային բռնությունը, սեռական ոտնձգությունը: Սեռի հատկանիշով պայմանավորված անձի արժանապատվությունը նվաստացնող, վախեցնող, ստորացնող խոսքային կամ ֆիզիկական դրսևորումներ ունեցող գործողությունները (այդ թվում՝ սեռական բնույթի) կամ իրավիճակը:
- Սեռի հատկանիշով ցանկացած վատ կամ անբարենպաստ վերաբերմունքը՝ միևնույն կամ նմանատիպ իրավիճակում:

Գենդերային անուղղակի խտրականության դրսևորում է՝

- Գենդերային կարծրատիպերի վերարտադրությունը զանգվածային լրատվությամբ, կրթության և մշակույթի միջոցով: Օրինակ՝ հեռուստատեսությամբ, գովազդներում, դասագրքերում, հեքիաթներում, ժողովրդական բանահյուսությամբ, առակներում ու ասացվածքներում կարող են արտահայտվել, վերարտադրվել գենդերային կարծրատիպեր:

Գենդերային խտրականությունը հանգեցնում է կանանց և տղամարդկանց անհավասար ներկայացվածությանը, անհամաչափությանը կյանքի տարբեր բնագավառներում:

Սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումը՝ որպես գենդերային կարծրատիպերի և խտրականության արդյունք

Նորածինների սեռերի անհամամասնությունը սկսել է դիտարկվել աշխարհի բազմաթիվ երկրներում 1980-ականներից ի վեր, ընդ որում՝ երեխաների ընդհանուր թվաքանակում համընթաց աճում էր տղաների տոկոսային հարաբերակցությունը: Նորածինների սեռերի հարաբերակցության մեջ տղաների ծնունդների աստիճանական աճն առաջին հերթին սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման հետևանք է: Այսօրվա դրությամբ արական սեռի ավելի մեծ հարաբերակցությունը վկայում է կանանց նկատմամբ լուրջ խտրականության մասին:

ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի նախաձեռնած 2011 թ. հետազոտությունը հաստատեց, որ Հայաստանում ևս առկա է հղիության՝ սեռով պայմանավորված արհեստական ընդհատման երևույթը: Ավելին, Հայաստանի Հանրապետությունն իր ցուցանիշով ամբողջ աշխարհում 3-րդն[2] է՝ զիջելով միայն Չինաստանին և Ադրբեջանին: Մարզային մակարդակով Հայաստանն աշխարհում զբաղեցնում է 1-ին հորիզոնականը՝ Գեղարքունիքի մարզում ծնելիության ծայրահեղ անհամաչափության արդյունքում (124 տղա՝ 100 աղջկա դիմաց): Այսինքն՝ հայաստանյան ընտանիքների մի մասը հղիության արհեստական ընդհատման միջոցով թույլ չի տալիս աղջիկ երեխաներին ծնվել՝ նախընտրելով տղա երեխա ունենալ: Արդյունքում 1990-ականների սկզբից Հայաստանում շեղվել է նորածինների հարաբերակցությունը՝ 2012 թ.-ին կազմելով 114 տղա՝ 100 աղջկա դիմաց: Մինչդեռ բնականոն է համարվում 102-ից 106 տղա՝ 100 աղջկա դիմաց հարաբերակցությունը[3]:

Ինչպես այլ երկրներում, մեզանում ևս սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումները որոշ դրդապատճառներ ունեն:

Տղամարդկանց և կանանց միջև անհավասարության հիմքում շատ հաճախ հայրական գծով գերդաստանը շարունակելու նահապետական մշակույթն է: Հայ ընտանիքներում առկա է տղա երեխայի նախապատվությունը՝ որպես օջախի «ծուխը ծխեցնող», ազգանվան շարունակող, ժառանգորդ և այլն: Հայ հասարակության նահապետական կառուցվածքը սոցիալական անհամամասնություն է ստեղծում երեխաների շրջանում և միտված է նկատելիորեն շահեկան լինելու տղա երեխաների համար:

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Հայաստանում հղիության արհեստական ընդհատումն օրինական է համարվում սկսած 1920 թ.-ից: 1936-ին այն արգելվել է, ապա կրկին թույլատրվել 1955 թ.-ին: Անկախացած Հայաստանում հղիության արհեստական ընդհատման դրույթն ամրագրված է վերարտադրողական առողջության և իրավունքների մասին 2002 թ. օրենքում: Այժմ այն թույլատրելի է համարվում, եթե կինն այդ հարցով դիմում է հղիության առաջին 12 շաբաթվա ընթացքում: Ըստ 2002 թ. օրենքի՝ հղիության արհեստական ընդհատումն ավելի ուշ՝ մինչև 22 շաբաթական ժամկետում, կարող է իրականացվել միայն առողջական կոնկրետ պայմաններում կամ բռնաբարության դեպքում: Այն իրականացնում են պրոֆեսիոնալ բժիշկները՝ արտոնագրված պետական և մասնավոր

2 Գիլմոտո Ք. Զ., «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում» ժողովրդագրական տվյալների հավաքածու, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Երևան, 2013. Կապուղի՝ http://bit.ly/1U3X3tc:

3 Տես նույն տեղում:

բուժհաստատություններում: Հարկ է նշել, որ հղիության արհեստական ընդհատումը համարվում է կնոջ հիմնարար իրավունքը, հետևաբար՝ պայքարը սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ հարկավոր է իրականացնել կանանց իրավունքների համատեքստում՝ շեշտադրելով կրթության և իրազեկվածության բարձրացման անհրաժեշտությունը՝ որպես սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատման դեմ պայքարի արդյունավետ մեթոդ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ: ԻՆՉՈ՞Ւ Է ՊԵՏՔ ՊԱՅՔԱՐԵԼ ՀԱՆՈՒՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ

Գենդերային հավասարությունը (կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը) նշանակում է տղամարդու և կնոջ հավասար իրավունքներ, պարտականություններ և հնարավորություններ:

Գենդերային հավասարությունը չի նշանակում տղամարդկանց և կանանց նույնականացում: Հավասարությունը ենթադրում է, որ կանանց ու տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները չպետք է պայմանավորված լինեն վերջիններիս տղա կամ աղջիկ ծնվելու փաստով:

Տղամարդու և կնոջ միջև հավասարությունը դիտվում է որպես մարդու իրավունքների խնդիր և հասարակության կայուն զարգացման նախադրյալ ու ցուցանիշ:

Պետք է հիշել, որ գենդերային հավասարությունը միայն «կանանց խնդիրը» չէ. այն պետք է լիովին ներառի տղամարդկանց ևս:

2014 թ.-ի դրությամբ՝ 195 երկրնիերից 143-ը սահմանադրությամբ երաշխավորում են կանանց և տղամարդկանց միջև իրավահավասարությունը:

Այդուհանդերձ, բոլոր երկրներում կանանց նկատմամբ խտրականությունը շարունակում է ուղղակի կամ անուղղակի կերպով գոյություն ունենալ կյանքի բոլոր ոլորտներում: Մասնավորապես, խտրականությունը դրսևորվում է՝

- օրենքներում և քաղաքականություններում,
- գենդերային կարծրատիպերի միջոցով,
- հասարակական նորմերի և սովորույթների տեսքով:

Հարկ է հիշել, որ *դե յուրե* հավասարությունը դեռևս չի նշանակում հավասարության *դե ֆակտո* կիրառում: Այսինքն՝ հավասարության ամրագրումն օրենքներով դեռևս չի ենթադրում, որ կանայք և տղամարդիկ հավասար են գործնականում:

Գենդերային անհավասարությունը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն կանանց ու աղջիկների, այլև տղամարդկանց և տղաների, երեխաների, ընտանիքների, համայնքների և հասարակության վրա: Ստորև ներկայացված են մի քանի փաստեր հայ իրականությունից, որոնք վկայում են այն մասին, որ անհավասարությունը լուրջ հիմնախնդիր է Հայաստանում և հարկավոր է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ պայքարելու գենդերային անհավասարության և խտրականության դեմ, կամ նույնն է, թե պայքարել հանուն գենդերային հավասարության:

Փաստեր	Հետևանքներ
Հայաստանում կանայք վաստակում են նույն աշխատանքի դիմաց տղամարդու ստացած գումարի մինչև 70 %-ը:	Կանանց շրջանում աղքատությունն ավելի տարածված է: Կանայք հայտնվում են կախյալ վիճակում, չունեն ֆինանսական կայունություն և վստահություն:
Ընտանիքներում հիմնական որոշում կայացնողները տղամարդիկ են:	Կանայք չեն մասնակցում ընտանիքում կայացվող կարևոր որոշումների կայացմանը: Շատ հաճախ նրանք չեն ունենում հնարավորություն կայացնելու ինքնուրույն որոշում իրենց կյանքին վերաբերող հարցերում (օրինակ, աշխատանքի իրավունքի սահմանափակումը):
Հայաստանում կանանց նկատմամբ բռնությունը լուրջ հիմնախնդիր է: Ամեն 3 կանանցից մեկը ենթարկվում է բռնության գոնե մեկ տեսակի:	Ընտանեկան և գենդերային բռնությունը ծայրահեղ բացասական հետևանք է ունենում կանանց կյանքի և առողջության վրա: Բռնությունն ունենում է սոցիալ-տնտեսական հետևանքներ ինչպես կնոջ, այնպես էլ երեխաների, ընտանիքների, համայնքների և հասարակության վրա:
Հայ ընտանիքները նախընտրում են ունենալ տղա երեխաներ: Հայաստանում սեռերի հարաբերակցությունը 114 տղա է 100 նորածին աղջկա դիմաց:	Եթե սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների միտումը պահպանվի, ապա մինչև 2060 թ.-ը Հայաստանը կկորցնի մոտ 93000 կին: Տարեկան չի ծնվի 2000 աղջիկ, որն էլ բացասաբար կանդրադառնա ՀՀ ընտանիքների ստեղծման, ժողովրդագրական աճի վրա և կնպաստի արտագաղթին:

Փաստեր	Հետևանքներ
Հայաստանում կանանց փոքր տոկոսն է մասնակցում քաղաքական որոշումների կայացմանը:	ՀՀ բոլոր քաղաքացիների համար կարևորագույն քաղաքական որոշումները կայացվում են առանց կանանց հավասար մասնակցության կամ առանց կանանց դիրքորոշումը հաշվի առնելու: Հետևաբար, կանանց տեսակետները և կարիքները նման որոշումներում և քաղաքականություններում բացակայում են:
Հայ կանայք ընդգրկված չեն հակամարտությունների լուծման պաշտոնական գործընթացներում:	Թեև կանայք կրում են պատերազմների և հակամարտությունների անմիջական հետևանքներն իրենց ուսերի վրա, նրանք ընդգրկված չեն հակամարտությունների լուծման և խաղաղաշինական որևէ պաշտոնական գործընթացում: Կանանց ներուժն այս հարցում լիովին անտեսված է, կանանց խնդիրներն ու տեսակետները բացարձակապես չեն բարձրաձայնվում:
Կանայք հավասարապես ընդգրկված չեն տնտեսությունում, բիզնեսում, քաղաքականության մեջ՝ չնայած կազմում են բնակչության 52 %-ը:	Այդ ոլորտները չեն ունենում այնպիսի աճ, ինչպիսին կարձանագրվեր կանանց կողմից հավասար ընդգրկվածության և մասնակցության դեպքում:
Շատ հաճախ հավասար պայմանների դեպքում երիտասարդ կանանց չեն ընդունում աշխատանքի, որովհետև նրանք կարող են երեխա ունենալ և արձակուրդ գնալ:	Երիտասարդ կանայք դուրս են մնում ազատ մրցակցությունից: Գործատուները նախընտրում են տվյալ պաշտոնում ունենալ տղամարդ, ոչ թե կին, քանի որ նրանք հայր դառնալու դեպքում ստիպված չեն լինի աշխատանքից բացակայել:

Գենդերային հավասարությունը շահեկան է կանանց և աղջիկների համար: Միևնույն ժամանակ այն դրական է անդրադառնում ընտանիքի անդամների, երեխաների, տղամարդկանց և տղաների, համայնքների և ընդհանրապես հասարակության վրա: Այն երկրները, որտեղ կանայք և տղամարդիկ ունեն համեմատաբար հավասար իրավունքներ և հնարավորություններ, ավելի մրցունակ են, զարգացած և բարեկեցիկ: Համաշխարհային վիճակագրության համաձայն՝ այդպիսի երկրներում և՛ կանայք, և՛ տղամարդիկ իրենց ավելի ապահով և երջանիկ են զգում:

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

- ՀՀ-ում 7 վարորդներից 1-ն է կին: 100 նախարարներից ու փոխնախարարներից միայն 12-ն են կին: 866 գյուղապետներից 18-ն են կին: Կին քաղաքապետ և մարզպետ չունենք: Ազգային Ժողովի 131 պատգամավորներից 14-ն են կին:
- Քաղաքային ավագանու անդամներից 556-ը տղամարդ են, 30-ը՝ կին:
- Ուսուցչական անձնակազմի 75,3 %-ը, բժիշկների և կրտսեր բուժաշխատողների 80 %-ը կանայք են:
- Գյուղատնտեսության ոլորտում կանանց տեսակարար կշիռը մեծ է 55,8 % -ից:
- Գրեթե բոլոր գրադարանների աշխատակիցները կանայք են՝ 95,6 %:
- Գրադարանների ընթերցողների 68,3 %-ը կին է:
- Բարձրագույն կրթություն ավելի շատ կանայք ունեն՝ 57 %|38 % հարաբերակցությամբ: Իսկ գործազրկության ցուցանիշով կանայք ավելի շատ են տղամարդկանցից՝ 46 %|54 %:
- 2010 թ.-ին մագիստրոսական կրթություն ստացողների 65,8 %-ն է եղել կին, 34,2 %-ը՝ տղամարդիկ: Ասպիրանտուրայում սովորողների պարագայում պատկերը լրիվ հակառակն էր՝ 52,8 %|47,2 %: Դոկտորական կրթություն ստացողների միայն 21,7 %-ն է կին:
- ՀՀ-ում 3 ամենաբարձր վարձատրվող ոլորտներից երկուսում տղամարդկանց թիվը 4-8 անգամ գերազանցում է կանանց թվին:
- ՀՀ-ում բիզնեսների միայն 9 %-ն են կառավարում կանայք:
- Գենդերային հավասարության ցուցանիշով Հայաստանը 2015 թ.-ի դրությամբ 103-րդ տեղում է 145 երկրների շարքում:
- Հայաստանում օլիմպիական մարզաձևերի մարզիչ/մանկավարժների մեջ տղամարդկանց թիվը 6 անգամ գերակշռում է կանանց թվին (236 կին և 1357 տղամարդ): Կին մարզիչները նախընտրում են սպորտային (15) և գեղարվեստական (46) մարմնամարզությունն ու աթլետիկան (40), իսկ տղամարդիկ՝ ֆուտբոլը (143), ծանրամարտը (108) և ըմբշամարտը (159): Վերջին երեք մարզաձևերում կին մարզիչներ չկան:

Վիճակագրական տվյալների աղբյուրներ.

«Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2015. Կապուղի՝ http://bit.ly/1OV5Xbt :

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Երբ կանայք են ղեկավարում».
Կապուղի՝ http://bit.ly/1Gx6vwb:

Սիվիլնեթ առ ցա նց լրատվական կայք. «Կանայք Հայաստանի իշխանությունում» ինֆոգրաֆիկա.
Կապուղի՝ http://bit.ly/V1gwRB:

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց կանանց».
Կապուղի՝ http://bit.ly/1L6gq01:

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց տղամարդկանց».
Կապուղի՝ http://bit.ly/1kQFuPs:

Բարձրագույն պետական ուսումնական հաստատությունների գիտամանկավարժական աշխատակազմն ըստ զբաղեցրած պաշտոնների, 2014-2015 ուս. տարի (թվաքանակ)



1. «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2015

Կանանց և տղամարդկանց տնտեսական գործունեությունը Հայաստանում

Գծապատկերը ցույց է տալիս, որ Հայաստանում կանայք հիմնականում զբաղված են գյուղատնտեսությամբ, կրթական և առողջապահական գործունեությամբ և ավելի քիչ՝ շինարարության, ֆինանսական, անշարժ գույքի հետ կապված գործունեությամբ:



2. «Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2015

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

«ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» և « ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրի» մասին

Գենդերային հավասարությունը ենթադրում է հավասար իրավունքներ, հնարավորություններ և պարտականություններ և՛ կանանց, և՛ տղամարդկանց համար: Գենդերային հավասարությունն առաջին հերթին ամրագրված է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում (1948), որը լինելով մարդու իրավունքների առաջին միջազգային փաստաթուղթը, սահմանում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հավասարությունն օրենքի առջև և նրանց հակախտրականության իրավունքը: Հռչակագրում կիրառված է համընդհանուր լեզու, որում չկա սեռային տարաբաժանում:

Տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներն ու հնարավորություններն արտացոլող դրույթները՝ որպես համընդհանուր արժեքներ, ձևակերպված են նաև ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագրում (2000): Մասնավորապես, այդ արժեքներից «ազատությունը» սահմանում է, որ տղամարդիկ և կանայք իրավունք ունեն իրենց կյանքն ապրելու և արժանապատվորեն մեծացնելու իրենց երեխաներին՝ զերծ սովից, բռնության, ճնշման ու անարդարության վախից: «Համերաշխության» արժեքը զարգացնում է անաչառության և սոցիալական արդարության սկզբունքները բոլորի համար, իսկ «հանդուրժողությունը»՝ միմյանց նկատմամբ հարգանքը, այն գիտակցությամբ, որ մարդիկ տարբեր են, պետք է խրախուսել այս տարբերությունների գիտակցումն ու նպաստել նրանց միջև երկխոսությանը (ինչը վերաբերում է նաև կանանց և տղամարդկանց): Կարևորագույն արժեքներից է նաև «հավասարությունը» հետևյալ ձևակերպմամբ՝ տղամարդկանց և կանանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները պետք է ապահովված լինեն:

Այսպիսով՝ կանանց և տղամարդկանց իրավունքները հավասարապես պաշտպանված են մարդու իրավունքների մի շարք փաստաթղթերով, մինչդեռ կան նաև փաստաթղթեր, որոնք, հաշվի առնելով կանանց վերագրվող ավելի ցածր կարգավիճակը, վերաբերում են միայն կանանց, և միտված են պաշտպանելու վերջիններիս իրավունքները: Նման փաստաթուղթ է ՄԱԿ–ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան»:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան ինչի՞ մասին է

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան միջազգային փաստաթուղթ է կանանց և աղջիկների իրավունքների մասին: Այն կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների միջև հավասարությունը պաշտոնապես ամրագրող համաձայնագիր է: Կոնվենցիայի համաձայն՝ կանանց և աղջիկների նկատմամբ ցանկացած խտրականություն պետք է վերացվի:

Աշխարհի տարբեր երկրներում կանայք և աղջիկները ենթարկվում են խտրական և անարդար վերաբերմունքի իրենց՝ կին կամ աղջիկ լինելու պատճառով: Նման խտրականության հետևանքով նրանք ունենում են աշխատելու, կրթություն ստանալու, երկրի քաղաքական կյանքին մասնակցելու սահմանափակ հնարավորություններ: Շատ հաճախ կանայք և աղջիկները ենթարկվում են բռնության տարատեսակ դրսևորումների: Մի շարք խոցելի խմբեր ներկայացնող կանայք (հաշմանդամություն ունեցող կանայք, միայնակ մայրեր, ՄԻԱՎ-ով ապրող կանայք և այլն) ենթարկվում են ***կրկնակի խտրականության***:

Խտրականությունը վերացնելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպությունը 1979 թ.-ին ընդունել է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան: 2015 թ.-ի դրությամբ 189 երկրներ վավերացրել և/կամ միացել են կոնվենցիային[4]: Վավերացնել կոնվենցիան նշանակում է երաշխավորել կոնվենցիայում ամրագրված իրավունքները, այդ թվում՝ փոփոխել տեղական օրենսդրությունը՝ համապատասխանեցնելով կոնվենցիայի դրույթներին:

Սա նշանակում է, որ կոնվենցիան վավերացրած պետություններն ունեն միջազգային պարտավորություն՝ վերացնելու կանանց և աղջիկների նկատմամբ խտրականությունն իրենց երկրներում: Պետությունները պետք է ձեռնարկեն հնարավոր բոլոր միջոցները՝ ապահովելու կանանց և աղջիկների հավասար իրավունքներն ու հավասար հնարավորությունները կյանքի բոլոր ոլորտներում:

Ինչո՞ւ է կարևոր «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան

- Կոնվենցիան վերաբերում է աշխարհի բոլոր կանանց և աղջիկներին ու ամրագրում է նրանց իրավունքները:
- Կոնվենցիան կոչ է անում կառավարություններին՝ միջոցներ ձեռնարկելու կանանց և աղջիկների նկատմամբ խտրականությունը վերացնելու ուղղությամբ:
- Կոնվենցիան բարձրացնում է կանանց և տղամարդկանց իրազեկվածության մակարդակը գենդերային հավասարության մասին՝ որպես խտրականության վերացման կարևորագույն միջոց:

4 ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջ. Կապուղի՝ http://bit.ly/1jXbDRU

Ինչո՞ւ է «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիան կարևոր նաև տղամարդկանց համար

- Կանանց և աղջիկների կողմից իրենց իրավունքների յուրացումն ու իրացումը շահավետ է բոլորի համար, այդ թվում՝ տղամարդկանց և տղաների: Կրթված, առողջ և հմուտ կանայք, ինչպես նաև տղամարդիկ միասին են կառուցում իրենց, իրենց ընտանիքների, համայնքների և պետությունների ապագան:
- Տղաների և տղամարդկանց վերաբերմունքն այս հարցի շուրջ էական է: Երբ նրանք աջակցում են կանանց և աղջիկներին՝ պայքարելու հավասար իրավունքների համար, ապա կառուցում են շատ ավելի առողջ հարաբերություններ իրենց կյանքում:
- Տղաներն ու տղամարդիկ այս հարցում կարող են շատ տարբեր ճանապարհներով օգնել կանանց և աղջիկներին: Օրինակ, նրանք կարող են խրախուսել հավասար իրավունքներ և հնարավորություններ դպրոցում, համայնքում, տանը, բակում: Նրանք նաև կարող են միջոցներ ձեռնարկել, որպեսզի աղջիկներն ու կանայք իրենց զգան ապահով, խրախուսված և քաջալերված՝ ռեալիզացնելու կոնվենցիայով ամրագրված իրենց իրավունքները:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա

Կոնվենցիան բաղկացած է 30 հոդվածներից, որոնք բացատրում են, թե ինչ իրավունքներ ունեն կանայք և աղջիկները, և ինչ միջոցներ պետք է ձեռնարկեն պետությունները՝ կանանց և աղջիկների նկատմամբ խտրականությունը վերացնելու նպատակով:

Հոդված 1: Կանանց նկատմամբ խտրականություն հասկացության սահմանում

Հոդված 2: Խտրականության վերացման քաղաքականություն և միջոցներ

Հոդված 3: Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման երաշխիքներ

Հոդված 4: Հատուկ միջոցներ

Հոդված 5: Կարծրատիպերի վրա հիմնված դերեր

Հոդված 6: Թրաֆիքինգ և մարմնավաճառություն

Հոդված 7: Քաղաքական և հասարակական կյանք

Հոդված 8: Միջազգային մակարդակում մասնակցություն

Հոդված 9: Ազգություն

Հոդված 10: Կրթություն

Հոդված 11: Աշխատանք

Հոդված 12: Առողջություն

Հոդված 13: Տնտեսական և սոցիալական կյանք

Հոդված 14: Գյուղական վայրերում բնակվող կանայք

Հոդված 15: Օրենք

Հոդված 16: Ամուսնություն և ընտանեկան կյանք

Հոդված 17-22: Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեի հիմնումն ու գործունեությունը

Հոդված 23-30: Կոնվենցիայի իրագործում

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայի 2-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են վարել կանանց նկատմամբ խտրականության վերացման քաղաքականություն և այդ նպատակով տղամարդկանց և կանանց իրավահավասարության սկզբունքն ամրագրել իրենց ազգային սահմանադրություններում կամ համապատասխան օրենսդրության մեջ:

2013 թ.-ին ՀՀ կառավարությունն ընդունեց «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» օրենքը: Այն սահմանում է քաղաքական, սոցիալական, տնտեսական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման երաշխիքները: Օրենքի խնդիրն է ապահովել կանանց և տղամարդկանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարությունը, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը և խտրականության բացառումը, հնարավորությունների և արդյունքի հավասարությունը:

Օրենքը բաղկացած է 21 հոդվածներից[5], որոնք սահմանում են ոլորտին առնչվող կարևոր հասկացություններ (հոդված 3), ինչպես նաև ընդհանուր դրույթներ, որոնք ներկայացված են հետևյալ բաժիններով՝

- Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականությունը, դրա իրագործման մշտադիտարկումը և գենդերային վիճակագրությունը:
- Գենդերային հավասարության երաշխիքները պետության կառավարման և հանրային ծառայության մեջ:
- Գենդերային հավասարության ապահովման մեխանիզմը:
- Օրենքի կատարման իրավական երաշխիքները:
- Գենդերային հավասարության ապահովման պետական քաղաքականության իրագործման ֆինանսավորումը:

5 Օրենքի մի քանի կարևոր հոդվածներ աշակերտները հնարավորություն ունեն քննարկելու «Գենդերային հավասարության իրավական հիմքերը» գործնական վարժության ժամանակ (տես էջ 126):

ԻՆՉ Է ՖԵՄԻՆԻԶՄԸ: ՖԵՄԻՆԻԶՄԻ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ

Ֆեմինիզմը լայն իմաստով հասարակական շարժում է, որի կողմնակիցները գտնում են, որ կանայք և տղամարդիկ պետք է հավասար լինեն կյանքի բոլոր ոլորտներում, իսկ նեղ իմաստով՝ սոցիալ-փիլիսոփայական շարժում, որի նպատակն է վերջ դնել կանանց շահագործմանը և ապահովել կանանց իրավունքների իրացումը:

Այս տերմինը պատմության մեջ առաջին անգամ օգտագործվել է Ֆրանսիայում և Նիդերլանդներում 1872 թ.-ին, հետո նաև Մեծ Բրիտանիայում՝ 1890-ականներին և ԱՄՆ-ում՝ 1910 թ.-ին:

Ֆեմինիզմի գաղափարախոսության մեջ հիմնաքարային է համարվում ***ազատագրման*** (էմանսիպացիա) գաղափարը: Էմանսիպացիան (լատ. emancipatio) հին հռոմեացիների մոտ նշանակում էր հայրական իշխանությունից ազատագրվելը: Այստեղից էլ առաջ է եկել այս եզրույթի ընդհանուր նշանակությունը՝ ազատագրում կախվածությունից և սահմանափակումից:

Հետևաբար՝ կանանց ազատագրումը ենթադրում է կանանց անկախացում հայրիշխանական նորմերից, կախվածությունից և սահմանափակումներից:

Իսկ ինչ են իրենցից ներկայացնում ***հայրիշխանական նորմերը***: Դրանք բոլոր այն

նորմերն են, որտեղ կանանց շահերը և իրավունքները ստորադաս են տղամարդկանց շահերից ու տղամարդկանց իրավունքներից:

Ֆեմինիզմը և՛ մտավոր նվիրվածություն ու ընկալում է, և՛ քաղաքական շարժում է, որը որոնում է արդարություն կանանց նկատմամբ՝ պայքարելով ***սեքսիզմի***, այն է՝ անձի հանդեպ սեռով պայմանավորված խտրականության կամ նսեմացման դրսևորումների դեմ: Ֆեմինիզմն ինքնին սեռերի քաղաքական, տնտեսական, սոցիալական հավասարության ու կանանց իրավունքների և համատեղ շահերի համար կազմակերպված գործունեության ամբողջություն է:

Այսպիսով, ֆեմինիզմը

- քարոզում է գենդերային հավասարություն և ստեղծվել է հասարակության մեջ տղամարդկանց և կանանց համար հավասար հնարավորություններ հաստատելու նպատակով,
- պայքար է ընդդեմ սեռային ճնշումների:

Ֆեմինիզմի ալիքները

Ֆեմինիզմի պատմության մեջ առանձնացնում են երեք շրջան, որոնցից ամեն մեկին բնորոշ են իր յուրահատուկ նպատակները:

1-ին ալիքի սկիզբ է համարվում 1848 թվականը, երբ Անգլիայում և ԱՄՆ-ում սկիզբ առավ հասարակական շարժման հզոր ալիք՝ ի պաշտպանություն կանանց իրավունքների: Այդ ալիքը հենվում էր մինչև 18-րդ դարն ի հայտ եկած կանանց ակտիվիզմի դրսևորումների վրա:

Ֆեմինիզմի առաջին ալիքը սկիզբ առավ կանանց՝ ընտրելու իրավունքի համար պայքարից, հետագայում ներառելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են կանանց աշխատանքային իրավունքը, կրթության իրավունքը, սեփականության իրավունքը:

Առաջին ալիքի ձեռքբերումներից է կանանց մուտքը բարձրագույն ուսումնական հաստատություններ: Համարվում է, որ առաջին ալիքն ավարտվեց, երբ ընդունվեց ԱՄՆ Սահմանադրության 19-րդ լրացումը, ըստ որի կանայք ձեռք բերեցին ընտրության իրավունք: Սակայն Առաջին համաշխարհային պատերազմը սառեցրեց ֆեմինիզմի առաջին ալիքն ու պասիվություն մտցրեց պայքարի մեջ:

2-րդ ալիքը ներառում է 1960-ականներից 1980-ականներն ընկած ժամանակահատվածը: Համարվում է, որ այն առաջին փուլի շարունակությունն է ու գոյություն ունի նաև այժմ՝ համագոյակցելով երրորդ ալիքի հետ: Երկրորդ փուլի կարգախոս է դարձել Կեռոլ Խանիշի օգտագործած «Անձնականը քաղաքական է» («The Personal is Political») արտահայտությունը: Երկրորդ ալիքի ֆեմինիստները հասկանում էին, որ կանանց մշակութային և քաղաքական անհավասարության տարբեր ձևերն անքակտելիորեն կապված են միմյանց հետ: Նրանք կոչ էին անում կանանց գիտակցել, որ իրենց անձնական կյանքի առանձին կողմերը խորապես քաղաքականացված են և հանդիսանում են սեքսիստական (սեռական խտրականություն դնող) իշխանական համակարգի արտացոլումը:

Երկրորդ ալիքի ֆեմինիստները պայքարում էին գենդերային անհավասարության դեմ անձնական հարաբերություններում, սոցիալական, քաղաքական ու տնտեսական ոլորտներում, պայքարում էին կանանց սեռական և վերարտադրողական առողջության ու իրավունքների համար, այդ թվում՝ կանանց հակաբեղմնավորիչներ օգտագործելու և հղիության արհեստական ընդհատումներ իրականացնելու, ինչպես նաև ամուսնալուծվելու իրավունքի համար:

Երկրորդ ալիքի ֆեմինիզմը երկու շարժում ծնեց՝ կանանց իրավունքների շարժումը և կանանց ազատագրական շարժումը: 1960-ականներից սկսած մարդիկ սկսեցին բացեիբաց օգտագործել ֆեմինիզմ բառը:

3-րդ ալիքը (1990-ականների սկզբից մինչև մեր օրեր) առաջ եկավ ի պատասխան երկրորդ ալիքի արդյունքում ստեղծված նախաձեռնությունների և շարժումների ձախողմանը: Երրորդ ալիքի ֆեմինիստները շեշտադրում են, որ կանայք տարբեր են և բազմազան, այսինքն՝ ունեն տարբեր ռասայական և էթնիկ պատկանելիություն, ազգություն, կրոն, մշակույթ և այլն: Հետևաբար, ֆեմինիստական գաղափարախոսությունը պետք է հիմնված լինի այդ բազմազանության վրա:

Ֆեմինիզմը Հայաստանում

Ֆեմինիզմի պատմությունից գալով հայկական իրականություն՝ պետք է խոստովանել, որ մեր երկրում փաստացի երբևէ չի կազմավորվել ֆեմինիստական շարժում: Փոխարենը եղել են ու կան անհատներ, ովքեր բարձրաձայնել և բարձրաձայնում են կանանց խնդիրների մասին իրենց ապրած ժամանակաշրջանում:

Կանանց իրավունքների պաշտպանությանը նվիրված քայլարշավ 2015թ. մարտի 8, լուսանկարը՝ «Հասարակություն առանց բռնության» ՀԿ

20-րդ դարից ի վեր գենդերային հավասարության և կանանց իրավունքների մասին թեմաները սկսեցին առավել հաճախ արծարծվել նաև հայ կին մտավորականների, հասարակական գործիչների կողմից: Այդ շարքին դասվում են այնպիսի անուններ, ինչպիսիք են՝

- Սիրան Զարաֆյանը (Սեզա) (1903 - 1973 թթ.) - կանանց հնարավորությունների ընդլայնման և վերջիններիս կրթության ջատագով
- Սրբուհի Տյուսաբը (Վահանյան) (1841-1901 թթ.) - առաջին հայ ֆեմինիստ նովելագիր, «Կանանց իրավունքների հռչակագրի» նախագծի համահեղինակ
- Զապել Ասատուրը (Սիպիլ) (1863-1934 թթ.) - «Կանանց իրավունքների հռչակագիր» նախագծի համահեղինակ
- Զապել Եսայանը (1878-1943 թթ.) - գրող, թարգմանիչ և հրապարակախոս
- Առլենե Ավակյանը (1939 թ.) - Մասաչուսեթս համալսարանի կանանց ուսումնասիրությունների ծրագրի համահիմնադիր:

Սիրան Զարաֆյան
(Սեզա)
(1903-1973)

Սրբուհի Տյուսաբ
(1841-1901)

Զապել Ասատուր
(Սիպիլ)
(1863-1934)

Զապել Եսայան
(1878-1943)

Առլենե Ավակյան
(1939)

19-րդ դարի վերջում Կոստանդնուպոլսում հասարակական ակտիվ գործունեություն ծավալող կանանցից շատ հայտնի էին երկուսը՝ ***Սրբուհի Տյուսաբը (Վահանյան)*** և ***Զապել Ասատուրը***: Հենց նրանք էլ կազմեցին «Կանանց իրավունքների հռչակագրի» նախագիծը[6]:

Հռչակագիրը հեղափոխական մտքի արգասիք էր, կրում էր կնոջ ֆինանսական ինքնուրույնության ապահովման գաղափարախոսությունը և, ըստ էության, բարձրացրեց կնոջ դերը հանրային-հասարակական կյանքում:

Հայ առաջին կին վիպասան Սրբուհի Տյուսաբը հասարակական ասպարեզ իջավ 1880-ական թվականներին: Նա շատ մտահոգված էր Օսմանյան կայսրության գավառական կանանց կեցությամբ՝ բարձրաձայնելով տգիտության և տղամարդկանց ճնշման հետևում թաքնված ավանդական հայրիշխանական կառույցների դեմ: Ավելի ուշ նա նկատեց, որ անգամ մշակութային և կոսմոպոլիտ Պոլսում կանայք «դեռևս զրկված են ազատությունից և իշխվում են տղամարդկանց կողմից»: Տյուսաբը վստահ էր, որ առանց կանանց ազատագրման իրենց հասարակությունն ի վիճակի չէր լինի զարգանալ և առաջընթաց ունենալ:

Կնոջ բերանով կնոջ ազատագրության մասին խոսելը Պոլսում բավականին լուրջ անհնազանդություն էր: Նա այդ տարիներին գրում է մի քանի հոդվածներ այդ մասին. «Քանի մը խոսք կանանց անգործության մասին», «Կանանց աշխատության սկզբունքը»: Մ. Մամուրյանի խոսքերով՝ նա «դառն ճշմարտություն ասելու բարոյական արիություն ունեցավ՝ մատը դնելով ազգային ծանր վերքի վրա»: Նա կոչ էր անում հայ կանանց փշրել նախապաշարումները, անցնել աշխատանքի և այդպիսով, նախ, փրկել իրենց ընտանիքները աղքատությունից ու կործանումից, և երկրորդ՝ ապրել արժանապատիվ, անկախ, սեփական բարոյական ու մտավոր կարողությունները լիուլի գործի դնելով: Տյուսաբը այն օրենքների և հաստատությունների խստապահանջ ու կրքոտ քննադատն էր, որոնք օրինականացրել էին «մարդկության կեսի» ճնշումը կամ գործում էին մարդկությանն ի վնաս: Կնոջ դատի պաշտպանությունը դարձավ Տյուսաբի գրական ստեղծագործության առանցքը, և իբրև առաջին վիպասանուհի՝ նա առանձնահատուկ տեղ գրավեց հայ գրականության պատմության մեջ:

> **«Կինը աշխարհ չէ եկած մինակ հաճելի ըլլալու համար: Կինը եկած է իր խելքը, մտային, բարոյական և ֆիզիքական յատկութիւնները զարգացնելու համար: Ինքզինքնին յարգող բոլոր կիներուն միայն հաճելի ըլլալը պէտք չէ ըլլայ, այլ երկրիս վրայ գործօն բարերար տարր մը դառնալը»...**

Այս խոսքերը պատկանում են Զապել Եսայանին, ում անցած ճանապարհն անհանգիստ, հանրային կյանքի հանդեպ ակտիվ վերաբերմունքով մտավորական կնոջ կյանքի էպոպեա է՝ ամենատարբեր դժվարություններով, վտանգավոր հանգրվաններով և, ցավոք, եղերական ավարտով...

---

6 Հռչակագրի դրույթներին աշակերտները կարող են ծանոթանալ «Պատմական էքսկուրս» գործնական վարժության մեջ (տես էջ 113):

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Զապել Եսայանը կանանց անկախացման համար առաջ էր քաշում ամբողջ համակարգի փոփոխման անհրաժեշտության գաղափարը, և այս շարժումը սկսում է նախևառաջ իր կյանքում: Իր աղջկան ուղղված նամակներից մեկում նա գրում է. «Մի՛ վախեցիր հավակնոտ թվալուց: Վեհ իդեալների ձգտողը չի կարող համեստ մնալ, հեզ ու խոնարհ ապրել: Հարկավոր է, որ հիմիկվանից որոնես քո ուղին և այն գտնելուց հետո անշեղ քայլես դեպի նպատակակետը[7]...»:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո Կոստանդնուպոլիս վերադարձած Փարիզի Սորբոնի համալսարանի շրջանավարտ Զապել Եսայանը, ի տարբերություն շատ մարդկանց, սահմանադրական Թուրքիային ռոմանտիկ աչքերով չէր նայում: Եսայանը հեշտությամբ կարողացավ տեսնել, որ չնայած հեղափոխությանը, ոչինչ չի կարող փոխվել, իրավիճակը նույնիսկ ավելի է վատթարացել: Նման իրատես անձնավորություն լինելու և իրադարձությունները ճիշտ վերլուծելու ու գնահատելու հատկանիշի շնորհիվ՝ նա սկսեց ամեն օր մի քիչ ավելի քաղաքականացված խոսքով հանդես գալ և ժողովրդին հեղափոխության կոչեր անել:

1909 թ. ապրիլին Ադանայում տեղի ունեցած հայերի ջարդերը Զապել Եսայանին ցույց տվեցին, որ երիտթուրքերի հեղափոխության հարցում անհրավացի չէր: Իրադարձությունները տեղում ուսումնասիրելու և սկզբնաղբյուրից տեղեկատվություն ստանալու համար այլ քաղաքական գործիչների և մտավորականների հետ Ադանա մեկնեց նաև Զապել Եսայանը:

1915-ի Հայոց ցեղասպանությունից հրաշքով փրկվելուց և Բուլղարիայում ապաստանելուց հետո նա մի քանի մտավորականների կանանց ու երեխաների հետ գնում է Կովկաս՝ կազմակերպելով հայ տարագիրների և որբերի հավաքագրման ու տեղավորման գործը, որտեղ իրենց շատ է օգնում Հովհաննես Թումանյանը:

1933-ին գրողի հաստատվելը Խորհրդային Հայաստանում ճակատագրական եղավ. աշխատանքի հրավեր ստացավ Երևանի պետական համալսարանից: Ժամանակաշրջանը համընկավ խորհրդային ամենամռայլ ու մարդատյաց՝ ստալինյան բռնապետության տարիներին: 1936 թ. Գրողների միությունում իր ելույթին հաջորդում է այդ տարիներին զանգվածային դարձած չարագուշակ երևույթը՝ չսպասված ժամին դռան թակոցը, ապա և ձերբակալությունը:

Նրա կյանքի դրամատիկական ավարտը՝ ողբերգական մահվան հանգամանքները, մինչ այժմ անհայտ են:

7 Զապել Եսայանի ամբողջական նամակը աշակերտները հնարավորություն ունեն կարդալու և քննարկելու «Մի՛ վախեցիր հավակնոտ թվալուց» գործնական վարժության մեջ (տե՛ս էջ 122):

ԻՆՉ Է ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ: ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

«Բռնություն» հասկացությունը ներառում է յուրաքանչյուր արարք, որի հիմնական նպատակը այլ անձի կամ անձանց վարքի վերահսկումն ու կառավարումն է, որը իրականացվում է սեփական կամքը նրան կամ նրանց թելադրելով, առանց հաշվի առնելու նրա կամ նրանց հետաքրքրությունները, շահերը, ցանկությունները, զգացմունքները և այլն: Մասնագետները հանգել են այն եզրակացության, որ մարդու նկատմամբ բռնության հասկացությունն ավելի լայն է և չի սահմանափակվում միայն քրեական օրենսգրքով նախատեսված գործողություններով, այն ներառում է այլ արարքներ ևս, որոնցից են ահաբեկման, շանտաժի, ֆիզիկական և նյութական վնաս պատճառելու սպառնալիքի միջոցով, իշխանության չարաշահմամբ (ընդ որում՝ իշխանություն լայն իմաստով՝ տարիքի, ուժի, իշխանության, հեղինակության և այլն) այնպիսի գործողություններ կատարելու հարկադրանք, որոնք անձը չի ցանկանում կատարել:

Այսպիսով, բռնությունն ակտ է, որի նպատակն է դիմացինին ենթարկեցնել սեփական պահանջներին՝ գործադրելով ուժ, ստիպողականություն, իշխանություն կամ սպառնալիք:

Բռնությունը հարկադրական տարբեր ձևերի կիրառումն է սպառնալիքի կամ գործողության միջոցով:

Միջազգային նորմերով բռնությունը գնահատվում է որպես մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների խախտում:

Տարբերում են բռնության հետևյալ հիմնական տեսակները.

Ֆիզիկական բռնություն է համարվում հարվածելը (ձեռքով, ոտքով), հրելը, ծեծելը և այլ գործողությունները, որոնք հանգեցնում են վնասվածքների և ֆիզիկական ցավի:

Հոգեբանական բռնություն է համարվում վիրավորանքը, ստորացումը, սպառնալիքը և ցանկացած այլ դրսևորումներ, որը հանգեցնում է բացասական հուզական հակազդեցության և հոգեբանական ցավի: Հոգեբանական բռնությունը կարող է շատ ավելի ծանր հետևանքներ ունենալ՝ ի համեմատություն բռնության մյուս տեսակների:

Տնտեսական բռնություն է զբաղմունքի, աշխատանքի ընտրության կառավարումը, աշխատավարձի տնօրինումը, տնային տնտեսության վարման մեջ ձայնից զրկումը, ընտանեկան ֆինանսների տնօրինման գաղտնիությունը, գումարից զրկումը:

Սեռական բռնությունը ոտնձգության ձև է՝ սեռական հարաբերությունների և սեռական բնույթի գործողություններ կատարելու հարկադրում՝ զոհի կամքին հակառակ (ներառյալ բռնաբարությունն ու արյունապղծությունը):

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Ըստ Համաշխարհային առողջապահական կազմակերպության տվյալների՝ յուրաքանչյուր տարի բռնության հետևանքով մահանում է ավելի քան 1.600.000 մարդ, և այդպիսով բռնությունը 15-ից 44 տարեկան անձանց խմբում մահացության առաջնային պատճառներից մեկն է[8]:

Բռնության հետևանքները

Ֆիզիկական հետևանքներ՝ կապտուկ, քերծվածք, կոտրվածք, ներքին օրգանների վնասվածքներ, այրվածք և մարմնական այլ վնասվածքներ:

Հոգեբանական հետևանքներ՝ անվստահության, անապահովության զգացում, ցածր ինքնագնահատական, ամոթի զգացում, մեղքի զգացում, թերարժեքության զգացում, վախի զգացում, շփման խանգարումներ, ճնշվածություն, ընկճախտ:

Վարքային խնդիրներ՝ ագրեսիա, անհամարժեք դաժանություն, թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահում, ախորժակի խանգարումներ, քնի խանգարումներ, մեկուսացում կամ խնդիրներ միջանձնային հարաբերություններում:

Սեռական խնդիրներ՝ սեռավարակներ, սեռական ցանկության գերակտիվացում, վագինիզմ (հեշտոցի մկանների ակամա ջղաձիգ կծկում, որի պատճառով անհնար է դառնում սեռական ակտը), ֆրիգիդություն (սեռական սառնություն՝ սեռական մերձեցման ժամանակ սեռական բավարարություն ստանալու կնոջ անընդունակություն):

---

8 “Насилие и его влияние на здоровье” доклад о ситуации в мире, Всемирная организация здравоохранения, 2002. Կապուղի՝ http://bit.ly/1P3maHk

ԻՆՉ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ



Ընտանեկան բռնությունն ընտանիքի մի անդամի գործողությունը կամ անգործությունն է՝ ուղղված ընտանիքի մեկ այլ անդամի դեմ, որը կատարվում է ուժի կամ իշխանության առավելագույն օգտագործմամբ, խախտում է տուժածի իրավունքներն ու ազատությունները, սպառնում է նրա կյանքին և առողջությանը՝ նրան պատճառելով տառապանք և վնաս:

Ընտանեկան բռնությունն անձի կողմից մյուսի հանդեպ կիրառվող հարկադիր և վերահսկող վարքի կրկնվող մոդել է՝ ուղղված ուժի և իշխանության հաստատմանը:

Ընտանեկան բռնությունը տեղի է ունենում մարդկանց միջև, ովքեր մտերիմ հարաբերությունների մեջ են և հիմնականում հուզականորեն և ֆինանսապես կախված են միմյանցից: Ընտանեկան բռնություն կիրառվում է երեխաների, կնոջ/ամուսնու կամ զուգընկերուհու/զուգընկերոջ, տարեցների նկատմամբ: Որպես կանոն, ընտանեկան բռնության երկու կողմերն էլ պատահածը թաքցնում, գաղտնի են պահում շրջապատից:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ցանկացած հասարակության մեջ տարածված է տղամարդու կողմից բռնությունը կնոջ նկատմամբ: Տղամարդը բռնություն է կիրառում իր կնոջ նկատմամբ իշխանության հաստատման և վերահսկողության նպատակով:

Ընտանեկան բռնության ենթարկված կանանց հետ իրականացված հետազոտությունները բացահայտել են մի շարք ընդհանրություններ և թույլ տվել եզրակացնել, որ բռնությունն իրականացվում է որոշակի փուլերի հաջորդականությամբ.

Փուլ 1: Լարվածություն, երբ կուտակվում է զայրույթ, միմյանց հանդեպ չհասկացված լինելու զգացողություն:

Փուլ 2: Բռնության գործադրում, երբ կոնկրետ գործողություններ են իրականացվում՝ բղավոց, վիրավորանք, հայհոյանք, ֆիզիկական ուժի կիրառում:

Փուլ 3: Զղջում (հաճախ անվանում են «մեղրամիս»), երբ սկսվում է մեղքի գիտակցման, ներողությունների, նվերների շրջան: Երբ բռնարարը սկսում է ներողություն խնդրել իր արարքների համար, նաև ներկայացնել կատարվածը որպես իր ցանկությունից և վերահսկողությունից դուրս իրողություն:

Նշված փուլերը հաջորդում են մեկը մյուսին՝ ամբողջացնելով բռնության ցիկլը: Որքան ավելի շատ են ցիկլերը կրկնվում, այնքան բռնությունը դառնում է ավելի հաճախակի և ուժգին: Վերջին փուլի տևողությունը հետզհետե կրճատվում է կամ առհասարակ վերանում:

3. «Իշխանության և վերահսկողության անիվ»
Ընտանեկան բռնության միջամտության ծրագիր, Դուլութ մոդել

Առաջին փուլը բնորոշվում է վիրավորանքների ու նվաստացումների առանձին բռնկումներով, որոնք հիմնականում կարող են լինել խոսքային և հուզական: Սակայն դրանք իրենց ուժգնությամբ փոքր–ինչ տարբերվում են բռնարարից սպասվող վարքագծից: Միաժամանակ և՛ բռնարարը, և՛ տուժողը կարող են փորձել արդարացնել բռնարարի վարքը՝ բացատրելով դա, օրինակ, աշխատանքային կամ ֆինանսական սթրեսներով: Լարվածության աճի փուլի տևողությունը տարբեր անձանց հարաբերություններում տարբեր է: Մի դեպքում այն կարող է տևել մի քանի ժամ, մի քանի օր, այլ դեպքերում՝ ամիսներ ու տարիներ: Այս փուլում հիմնականում տուժողները դիմում են ընտանիքի մյուս անդամներին, բարեկամներին, ավելի հարազատ մարդկանց. հազվագյուտ դեպքերում՝ աջակցման և խորհրդատվական կենտրոններ:

Երկրորդ փուլը բնորոշվում է առավել ինտենսիվ ագրեսիայով, հիմնական բախումներով և ծայրահեղ բացասական և բուռն հուզական արտահայտումներով: Սա ամենակարճ փուլն է, որը տևում է երկուսից քսանչորս ժամ: Դրանից հետո բռնարարը սովորաբար մի փոքր սթափվում է, սկսում է ժխտել կատարվածի լրջությունը կամ նվազեցնել պատահածի բացասական հետևանքների ծավալները: Այս փուլում հնարավոր են դիմումներ ոստիկանություն, աջակցման ու խորհրդատվական կենտրոններ, ինչպես նաև բժշկի օգնությանը:

Երրորդ փուլում բռնարարը կարող է կերպարանափոխվել ու դառնալ շատ սիրալիր, զղջալ իր կատարածի համար և անհավանական բարություն ցուցաբերել: Սա ընտանիքում խաղաղության ու նախկին ընտանեկան երջանիկ մթնոլորտի վերականգնումն է կարծես թե, սակայն, որպես կանոն, բռնությունը որոշակի ժամանակ հետո կրկնվում է նախկինի նման՝ առաջին փուլից սկսելով:

Հարկ է նշել, որ վիճակագրական տվյալների համաձայն՝ կանանց նկատմամբ բռնությունները, ցավոք, ամենաշատը տեղի են ունենում ընտանիքում: Կանայք ավելի շատ են ենթարկվում ծեծի, ֆիզիկական բռնությունների և բռնաբարության ընտանիքի ներսում, քան ընտանիքից դուրս:

Ընտանեկան բռնության՝ խիստ անձնական և ներընտանեկան խնդիր լինելու պատճառն է, որ խոչընդոտում է այդ երևույթի դեմ պայքարին: Հաճախ երևույթը դիտվում է որպես տան չորս պատի ներսում կատարվող երևույթ, որը վերաբերում է միայն ընտանիքի անդամներին: Այնինչ ընտանեկան բռնությունը պետք է դիտարկել որպես հասարակությունում առկա գլոբալ խնդիր և համապետական միջոցներ ձեռնարկել՝ այդ երևույթը նվազեցնելու և կանխարգելելու նպատակով:

Կան մի շարք պատճառներ, թե ինչու են կանայք մնում բռնարարի հետ՝

- տնտեսական կախվածություն,
- երեխաներից զրկվելու վախ,
- այլընտրանքային ապրուստի բացակայություն,
- աշխատանքային հմտությունների բացակայություն,
- սոցիալական մեկուսացում,
- ոստիկանության, դատարանի, սոցիալական աշխատողների կողմից բացասական արտահայտությունները,

- անորոշության նկատմամբ վախ,
- ընտանիքի ճնշումը,
- ինչպես նաև մի շարք զգացումներ՝ անապահովություն, մերժում, սեր, մեղքի զգացում, ամոթ, ոչ իրատեսական լավատեսություն, պատասխանատվության զգացում, ցածր ինքնագնահատական, հուզական աջակցության բացակայություն, նաև հանդուրժողական, սովորական վերաբերմունք բռնության նկատմամբ:

Ընտանեկան բռնությունը հաճախ պայմանավորված է լինում նրանով, որ անձը տարիների ընթացքում յուրացնում է որոշակի վարքաձև, հարաբերությունների որոշակի մոդել, որտեղ բռնությունն ընդունելի և արդարացվող արարք է:

Երեխան, տեսնելով բռնություն իր ծնողների հարաբերություններում, բարեկամների, հարևանների ընտանիքներում, հեռուստատեսությամբ, փորձում է բռնություն կիրառելով հասնել իր ուզածին, և համոզվում է, որ բռնությունը արդյունքի հասնելու հեշտ և արդյունավետ միջոց է, որը հաճախ անգամ խրախուսվում է մեծահասակների կողմից:

Չնայած վերոնշյալի՝ շատ անգամ մարդիկ շփոթում են ընտանեկան բռնության պատճառները տարբեր սովորույթների և ընտանեկան բռնության հետ ուղեկցվող այլ երևույթների հետ, ինչպիսիք են՝ ալկոհոլը, գենետիկան, հիվանդությունը, զայրույթը, սթրեսը, զոհի վարքը, խնդրահարույց հարաբերությունները:

Ինչ է կորցնում կինը բռնության հետևանքով՝

Կյանքը, առողջությունը, շատ հաճախ ընտանիքը, կրթությունը, աշխատանքը, մասնագիտական հմտությունները, հավատը սեփական ուժերի նկատմամբ, հարգանքն իր անձի նկատմամբ և հասարակության կողմից (անձի հնարավոր դեգրադացիա, հանցագործություն, մարմնավաճառություն, թմրամոլություն, ալկոհոլիզմ):

Ինչ է կորցնում ընտանիքը՝

- Լիարժեք սերունդ, երեխաների նորմալ դաստիարակություն, ընտանիքի ստեղծագործ ֆունկցիա, տնտեսական կարգավիճակի իջեցում, որն էլ բերում է ընտանեկան հարաբերությունների քայքայման:

Ինչ է կորցնում հասարակությունը՝

- Անհատ, լիարժեք աշխատող, ընտանիքը որպես հասարակության բջիջ, իսկ որպես հետևանք՝ աշխատանքային և մտավոր ռեսուրս, կայունություն և վերջապես՝ զարգացման ներուժ:

Ինչ է կորցնում պետությունը՝

- Առաջին հերթին իր իրավական դեմքը (իմիջը) և, ամենակարևորը, սոցիալական և քաղաքական անվտանգությունը:

Խոսելով ընտանեկան բռնության վտանգների ու հետևանքների մասին՝ անհրաժեշտ է նկատի ունենալ, որ եթե նույնիսկ բռնի գործողություններն ուղղված են միայն մեկ անձին, ընտանիքի բոլոր անդամները միևնույն ժամանակ ենթարկվում են հոգեբանական նույն հետևանքների ազդեցությանը, ինչ բռնության անմիջական զոհը: Հատկապես ծանր ապրումներ են ունենում երեխաները, ովքեր հաճախ ականատես են լինում, թե ինչպես է իրենց հարազատ մարդկանցից մեկը վարվում մյուսի հետ: Բռնության միջսերնդային փոխանցումն ազդում է միլիոնավոր ընտանիքների վրա:

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Հայաստանում ամեն երրորդ կին ենթարկվում է բռնության առնվազն մեկ տեսակի:

Կանանց 66 %-ը ենթարկվում է հոգեբանական բռնության:

Կանանց 27 %-ը ենթարկվում է ֆիզիկական բռնության:

Ֆիզիկական բռնություն կիրառող բռնարարների 85 %-ը ամուսիններն են, 10 %-ը՝ սկեսուրները:

Բռնության ենթարկված կանանց մոտ 40 %-ը հայտնել է, որ երեխաներն ականատես են եղել բռնությանը:

Ընտանեկան բռնության ենթարկվածներից 88 %-ը կանայք են (ամուսնու կողմից), 12 %-ը տղամարդիկ՝ մեծամասամբ բռնության ենթարկված իրենց հայրերի կողմից:

Բռնության ենթարկվածների 66%-ը նշել է, որ կլքեր տունը, եթե ֆինանսական անկախություն և բնակարան ունենար:

Բռնության ենթարկվածների 42 %-ը չի դիմել իրավապահ մարմիններին, քանի որ ենթարկողը բարեկամ է, 22 %-ը ամաչել է բռնությունից և այն հասարակայնացնելուց, 7 %-ը չի վստահում իրավապահ մարմիններին:

2014 թ.-ին և 2015 թ.-ի սեպտեմբեր ամսվա դրությամբ ՀՀ-ում ընտանեկան բռնության հետևանքով մահացել է 13 կին: Ոստիկանությունում գրանցվել են 1500-ից ավելի ընտանեկան բռնության դեպքեր, մինչդեռ հասարակական կազմակերպությունները տարեկան հաշվով ունենում են ընտանեկան բռնության ավելի քան 4000 ահազանգ:

Վիճակագրական տվյալների աղբյուրներ.

«Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար» զեկույց, «Ամն եսթի Ինթերնեյշնլ», Երևան, 2008:

«Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում» համազգային հարցում, Կանանց իրավունքների կենտրոն և Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն», Երևան, 2007:

«Հասարակական կարծիքի հարցում ՀՀ-ում ընտանեկան բռնության վերաբերյալ», «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ, Երևան, 2011:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ

Կանանց նկատմամբ բռնությունը մարդու իրավունքների խախտման ամենատարածված տեսակներից է աշխարհում և ամենաքիչ պատժելի հանցագործությունն է: Շեշտելու համար այն փաստը, որ կանանց ստորադաս կարգավիճակը, անհավասարությունը և գենդերային խտրականությունը հասարակությունում կանանց նկատմամբ բռնության հիմքում ընկած հիմնական պատճառներն են, ստեղծվեց և շրջանառության մեջ դրվեց «գենդերային բռնություն» տերմինը: Պատահական չէ, որ հաճախ կանանց նկատմամբ բռնությունն ու գենդերային բռնությունը նույնացվում են, քա-

նի որ գենդերային բռնության արդյունքում զոհերի մեծամասնությունը կանայք են: Այսպես, ըստ վիճակագրական տվյալների, աշխարհում կանանց սպանությունների 40-70 %-ը իրականացվում է նրանց զուգընկերոջ կողմից, իսկ աշխարհում յուրաքանչյուր երրորդ կին կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ ենթարկվել է սեռական կամ ֆիզիկական բռնության:

Կանանց դեմ խտրականության վերացման կոմիտեն (Committee on the Elimination of Discrimination Against Women, CEDAW) սահմանում է գենդերային բռնությունը «որպես խտրականության ձև, որը լրջորեն խոչընդոտում է կնոջը՝ իր իրավունքներն ու ազատությունները տղամարդկանց հետ հավասար հիմունքով վայելելուն», որն «ուղղված է կնոջ դեմ, որովհետև նա կին է... »:

Գենդերային բռնություն տեղի է ունենում ամենատարբեր իրավիճակներում՝ աշխատավայրում, կրթական հաստատություններում, գյուղական և քաղաքային վայրերում՝ անկախ կնոջ ազգային կամ կրոնական պատկանելիությունից, հասարակական դիրքից, տնտեսական կարգավիճակից, տարիքից կամ այլ պայմաններից: Բռնության դեպքերը հատկապես զարհուրելի են, երբ տեղի են ունենում տանը՝ այնտեղ, որտեղ կինը պետք է որ ապահով լիներ անվտանգ ընտանեկան մթնոլորտում:

Հետազոտությունները հետևողականորեն ցույց են տալիս, որ կնոջն առավել հաճախ մարմնական վնասվածքներ է պատճառում, բռնաբարում կամ սպանում ներկայիս կամ նախկին ամուսինը, քան ուրիշ որևէ մեկը: Ուստի այն դիտվում է որպես «անձնական գործ» և դժվարացնում է միջամտությունը և աջակցությունը: Կնոջ և բռնարարի միջև մտերիմ հարաբերությունները նվազեցնում են արդյունավետ պաշտպանվելու հնարավորությունները և շատ հաճախ քողարկվում են հենց կանանց կողմից:

Կանանց նկատմամբ բռնության պատճառները շատ տարբեր կարող են լինել՝

- Մշակութային - հավատը տղամարդկանց բնական առավելության հանդեպ, արժեքները, որոնք տղամարդկանց օժտում են սեփականատիրական իրավունքներով կանանց նկատմամբ, ամուսնական ավանդույթները, գենդերային դերերի ակնկալիքները միջանձնային հարաբերություններում:
- Տնտեսական - զբաղվածության սահմանափակ հասանելիությունը կանանց համար, ֆինանսական միջոցներին սահմանափակ հասանելիությունը, հետևաբար՝ տնտեսական կախվածությունը:
- Իրավական - ամուսնալուծությանը, երեխաների խնամակալությանը, ունեցվածքին և ժառանգությանը վերաբերող օրենքները, ընտանեկան բռնության, ամուսնական բռնաբարության իրավական սահմանումների բացակայությունը, ոստիկանության և իրավապահ մարմինների վերաբերմունքը կանանց նկատմամբ, ինչպես նաև իրավագիտակցության ցածր մակարդակը կանանց շրջանում:
- Քաղաքական - ընտանեկան բռնությունը որպես լուրջ հիմնախնդիր չդիտարկելը, կանանց սակավ ներկայացվածությունը քաղաքականության, ՁԼՄ-ների, իրավական և նման այլ ոլորտներին առնչվող մասնագիտություններում:

ԻՍԿ ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

2004 թ.-ին զուգընկերոջ սեռական բռնության հետևանքով պետությունների տարեկան ծախսը հաշվարկվել է՝ 5,8 միլիարդ դոլար ԱՄՆ-ում, իսկ Անգլիայում և Ուելսում՝ 22,9 միլիարդ ԱՄՆ դոլար:

2009 թ.-ին Ավստրալիայում անցկացված ուսումնասիրությունը հաշվարկել է, որ կանանց և երեխաների նկատմամբ բռնության հետևանքով տարեկան ծախսը կազմում է 13,6 միլիարդ ԱՄՆ դոլար:

Վիճակագրական տվյալների աղբյուրներ.
The Cost of Violence Against Women and Their Children", The National Council to Reduce Violence against Women and their Children, Australia, 2009 UN WOMEN: Facts and Figures: Ending Violence against Women.

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՌԿԱ ԹՅՈՒՐ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

♦ ***Կինն է հրահրում բռնություն ու արժանի է դրան:***

Հաճախ հնարավոր է լսել այս միտքը հասարակության տարբեր շրջանակներում, սակայն պետք է հիշել, որ ոչ մի արարք, վարքային ոչ մի դրսևորում չի կարող արդարացնել բռնությունը կնոջ կամ այլ անձի նկատմամբ:

♦ ***Կինը, ով ենթարկվում է բռնության, հեշտությամբ կարող է հեռանալ բռնարարից:***

Ընտանեկան բռնության ենթարկվող կանայք ունեն բռնության իրավիճակից դուրս գալու մի շարք լուրջ խոչընդոտներ. հաճախ չունեն բավական գիտելիք այն մասին, թե ինչպես պաշտպանեն իրենց իրավունքները, նաև կարող են ունենալ այնպիսի մտերիմ շրջապատ, որտեղ արդարացվում է բռնությունը և կնոջից ակնկալվում է դիմանալ ամեն ինչի՝ հանուն ընտանիքի ֆիզիկական միասնականության:

♦ ***Բռնարար տղամարդը բոլորի հետ է ագրեսիվ ու կոպիտ:***

Ոչ, բռնարար տղամարդը հաճախ կարող է լինել զուսպ, բարեհամբույր, համբերատար իր աշխատակիցների, ընկերների և այլոց հետ, սակայն ընտանիքում լինել բռնարար: Դրա պատճառն այն է, որ կինն ընկալվում է որպես ամուսնու սեփականություն, հետևաբար ամուսինը կարող է վարվել կնոջ հետ այնպես, ինչպես ցանկանա:

♦ ***Բռնության պատճառն ալկոհոլն է:***

Հաճախ բռնություն իրականացնելիս տղամարդը լինում է ալկոհոլի ազդեցության տակ, և սա շփոթմունք է առաջացնում: Սակայն ալկոհոլի և բռնության իրականացման միջև գոյություն ունեցող կապի մասին մինչ օրս ոչ մի ապացուցված տեղեկատվություն չկա:

♦ ***Ցանկության դեպքում կինը կարող է ազատվել բռնարարի ճանկերից:***

Կա տարածված թյուր կարծիք, որ կինը, ով ենթարկվում է սեռական ոտնձգության, կարող է ազատվել իր բռնարարից, եթե ամբողջ ուժով պայքարի: Այնինչ նման բարդ իրավիճակում հեշտ չէ կողմնորոշվելը, ֆիզիկական ու մտավոր ներուժը ճիշտ օգտագործելը:

♦ ***Լռությունը համաձայնության նշան է:***

Հասարակության մեջ լայնորեն տարածված է նաև այն կարծիքը, որ եթե կինը լռում է իր ցանկությունների մասին կամ ստիպված համաձայնվում է սեռական հարաբերության՝ զուգընկերոջը չնեղացնելու համար, դա բռնաբարություն չէ: Պետք է հիշել, որ համաձայնություն է միայն կնոջ գիտակցված ու հստակ ընտրությունը՝ առանց ճնշումների ու արտաքին ազդեցության:



Ո՞ւմ դիմել օգնության հայցով

Եթե դուք բռնության եք ենթարկվում, մի հապաղեք օգնություն խնդրել:

- Դիմեք ձեր հարազատներին, մտերիմներին: Պատմեք եղելությունը, կիսեք ձեր մտահոգությունները և օգնություն խնդրեք:
- Դիմեք ոստիկանություն: Հետևեք և պահանջեք, որ ձեր դիմումը գրանցվի և դրան ընթացք տրվի: Պնդեք, որ անպայման նշանակվի դատական բժշկի փորձաքննություն: Եթե իրավապահ մարմինները հրաժարվում են այդ անել, դիմեք ձեր տեղամասային բժշկին: Մինչև բժշկական փորձաքննությունը ոչինչ մի՛ մաքրեք, մի փոխեք ձեր հագուստը. ձեր հագուստի և մարմնի վրա կարող են հայտնաբերվել բռնության հետքեր, որոնք էլ կծառայեն որպես անհրաժեշտ ապացույցներ:
- Դիմեք դատախազություն, եթե ձեր բողոքին ընթացք չի տրվում ոստիկանության բաժանմունքում:
- Դիմեք դատարան քաղաքացիական հայցով, որպեսզի փոխհատուցվեն ձեր կրած բոլոր վնասները:
- Դիմեք կանանց իրավունքներով զբաղվող հասարակական կազմակերպություններ:
- Դիմեք «Թեժ գիծ» վստահության անվճար հեռախոսակապի հատուկ ծառայությանը, որտեղ ձեզ կլսեն և ցանկության դեպքում կտրամադրեն իրավաբանական և հոգեբանական անվճար խորհրդատվություն:

Ընտանեկան բռնության դեպքում՝

/099/ 887 808, /010/ 54 28 28,
/077/ 991280
08000 80850

Սեռական բռնության դեպքում՝

080001280
/077/ 991280

Թրաֆիքինգի դեպքում՝

080080801

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԵՐԵԽԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Ընտանիքն այն կարևոր միջավայրն է, որտեղ տեղի են ունենում երեխայի զարգացման և սոցիալականացման հիմնական գործընթացները: Ցավոք, այսօր ընտանիքը դարձել է խոցելի և շատ դեպքերում ի զորու չէ ապահովել իր անդամների առողջ կենսագործունեությունն ու պաշտպանությունը: Տարատեսակ տեղեկատվական և սոցիալ-տնտեսական բացասական ներգործությունները, դժբախտաբար, իրենց դրսևորումներն են գտնում հատկապես երեխաների վրա:

Երեխայի նկատմամբ բռնությունը ներառում է ցանկացած՝ ֆիզիկական, հոգեբանական, հուզական, սեռական բռնություն, ինչպես նաև երեխաների անտեսումն ու շահագործումը:

Ընտանիքում որպես երեխաներին չարաշահող առաջին հերթին հանդես են գալիս ծնողները, խնամակալները, երբեմն ընտանիքի մյուս անդամները և տարիքով մեծ երեխաները:



Երեխայի նկատմամբ կիրառվող բռնության պատճառները շատ բազմազան կարող են լինել՝ պայմանավորված ծնողի և երեխայի, ընտանիքի և հասարակության ժողովրդագրական ու մշակութային առանձնահատկություններով:

- **Սոցիալ-տնտեսական գործոնները,** որոնցից կարելի է նշել գործազրկությունը, կենցաղային անբավարար պայմանները, նյութական անապահովվածությունը: Վերջիններս առաջացնում են սթրես, լարվածություն, հակամարտություններ, որոնց պատճառով էլ ծնողները կարող են բռնություն գործադրել երեխաների նկատմամբ:
- **Հոգեբանական գործոնները,** որոնք պայմանավորված են ծնողների կամ երեխաների անձնային յուրահատկություններով, ընտանիքում հոգեկան առողջության հետ կապված խնդիրներով, հարբեցողությամբ, թմրամոլությամբ և այլն:
- **Ծնողավարման հմտությունների որակը,** որն արտահայտվում է երեխայի խնամքի և դաստիարակության մասին գիտելիքների, կարողությունների և հմտությունների իմացությամբ և կիրառությամբ, համապատասխան վերաբերմունքով և վարքով: Նրանք, ովքեր վատ են վերաբերվում իրենց երեխաներին, սովորաբար երեխայից անիրատեսական և աղավաղված սպասումներ են ակնկալում: Օրինակ՝ սեփական անհաջողությունների համար պատասխանատվությունը կամ մեղավորությունը երեխային վերագրելու հակում, երեխայի նկատմամբ մշտապես չափազանց քննադատական վերաբերմունք և այլն: Նրանք կարող են «վատ» որակում տալ երեխայի բնավորությանը և որոշակի տարիքին հատուկ պահվածքը մեկնաբանել որպես «կանխամտածված չենթարկվող»: Ուստի սթրեսը, որը ծագում է երեխայի վարքի կառավարման անհաջող փորձերից, հաճախ կարող է սրել դաժանությունը և բռնության պատճառ հանդիսանալ:
- **Ծնող-երեխա փոխհարաբերությունների որակը,** որը կարող է արտահայտվել քնքշանքի, հուզական աջակցության բացակայությամբ, որն էլ հանգեցնում է երեխաների և ծնող(ներ)ի անկայուն կապվածությանը:



ԻՆՉՊԵՍ ՃԱՆԱՉԵԼ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԵՐԵԽԱՅԻՆ, ԻՆՉՊԵՍ ՕԳՆԵԼ ՆՐԱՆ



Մանկավարժները՝ որպես երեխաների հետ աշխատող մասնագետներ, պարտավոր են արձագանքել և պաշտպանել ընտանիքում, դպրոցում, շրջապատում պարբերաբար բռնության ենթարկվող երեխաներին, որովհետև նրանք թե՛ հոգեպես, թե՛ ֆիզիկապես իրական վտանգի կամ դրա սպառնալիքի մեջ են: Նրանք հայտնվում են անպաշտպան վիճակում և անկարող են դառնում արտահայտել իրենց զգացմունքները, ինքնուրույն որոշումներ կայացնել և վերջապես պաշտպանել իրենց և իրենց մտերիմներին (եթե անգամ բռնությունը ուղղված է ոչ երեխային, այլ ընտանիքի մեկ այլ անդամին, միևնույն է, երեխան ենթարկվում է բռնության՝ թեկուզ անուղղակիորեն):

Նախ պետք է «ճանաչել» բռնության ենթարկվող/ած երեխային, որովհետև շատ հաճախ երեխաները վախից կամ ուղղակի չգիտակցելով իրենց հետ կատարվածը, լռում են և չեն խոսում այդ մասին, իսկ եթե ունեն որոշակի անհանգստություն, ապա հաճախ չեն հասկանում պատճառները, չգիտեն՝ օգնության համար ում դիմել:

Կան մի շարք վարքային ցուցիչներ, որոնք արտահայտվում են բռնության ենթարկվող երեխաների մոտ (կախված են տարիքային առանձնահատկություններից և կարող են դրսևորվել տարբեր կերպ)՝

- ցածր ինքնագնահատական, երեխան իրեն զգում է չսիրված, չընդունված, ոչ պիտանի,
- մշտական տրամադրության անկում, տխրություն,
- ֆիզիկական պատիժների ենթարկվելու վախ,
- տրամաբանական մտածողության անկում, տրված առաջադրանքները կատարելու անկարողություն,
- անհարգալից վերաբերմունք մեծահասակների նկատմամբ, անվստահություն,
- ագրեսիվ վարք հասակակիցների հետ շփվելիս,
- մեծահասակին բնորոշ վարք,
- թերահավատություն՝ ցուցաբերվող աջակցության անկեղծ դրդապատճառների նկատմամբ,
- հաջողության հասնելու անկարողություն՝ ինքնագնահատականը ցածր կամ բացակա լինելու պատճառով:

Երեխային օգնելու համար առաջին և կարևոր քայլը՝ ստեղծել այնպիսի հարաբերություններ, որ երեխան խոսի, պատմի, արտահայտվի խնդրի շուրջ: Դրա համար նա պետք է վստահի ձեզ. եղեք անկեղծ, հարգալից, հոգատար, անկողմնակալ, խոսեք «երեխայի լեզվով»:

Հետո անհրաժեշտ է գնահատել, վերլուծել իրավիճակը, հասկանալ ձեր օգնության, միջամտության հնարավորությունները. դուք կարող էք հանդես գալ որպես կրթող, աջակցող, խորհրդատու կամ միջնորդ (անհրաժեշտության դեպքում դիմեք հոգեբանի, սոցիալական աշխատողի, բժշկի, ոստիկանի, իրավապաշտպանի կամ այլ մասնագետների) հիմնախնդիրը լուծելու, հաղթահարելու գործում:

Բռնության օրեցօր աճող միտումները մեզ հանգեցնում են այն տխուր համոզման, որ երեխաները բռնության անմեղ զոհեր են, և մշտական բռնության ու սպառնալիքների առկայության պայմաններում ոտնահարվում և ոչնչացվում են նրանց մարդու իրավունքները:

ԻՆՉՊԵՍ ԵՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Միլիոնավոր կանայք և աղջիկներ ամբողջ աշխարհում ենթարկվում են տարբեր տեսակի բռնության՝ հոգեբանական ճնշումների, հարձակումների, ծեծի, բռնաբարության, խեղման և անգամ սպանության: Համաձայն ՄԱԿ-ի 2013 թ.-ի տվյալների՝ աշխարհի կանանց 35 %-ը ենթարկվում է ֆիզիկական և/կամ սեռական բռնության զուգընկերոջ կամ ոչ զուգընկերոջ կողմից: Ավելին, բռնության ազգային ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կանանց 70 %-ն է իրենց կյանքի ընթացքում ենթարկվել ֆիզիկական կամ սեռական բռնության զուգընկերոջ կողմից:

Հայաստանի Հանրապետությունում գենդերային բռնության դեմ պայքարի մի շարք միջոցառումներ են իրականացվում տարբեր ուղղություններով՝ անդամակցություն կանանց իրավունքների պաշտպանությանն ուղղված միջազգային պայմանագրերին, ազգային օրենսդրական դաշտի բարեփոխումներ, կրթական ոլորտի բարեփոխումներ, ոչ ֆորմալ կրթական դասընթացների կազմակերպում, իրազեկվածության բարձրացման միջոցառումների անցկացում, ակցիաների, հանրային միջոցառումների և ջատագովության ու շահերի պաշտպանության այլ նախաձեռնությունների իրականացում:

Անկախացումից հետո ՀՀ-ում ընդունվել են գենդերային քաղաքականության բարելավմանն ուղղված մի շարք ներպետական փաստաթղթեր: Վերջերս ընդունված փաստաթղթերից կարելի է նշել «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», «ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը», «Ընդդեմ գենդերային բռնության ազգային ծրագիրն ու Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքը և այլն:

Սակայն այս ամենը դեռ բավարար չէ բռնության կանխարգելման, կանանց պաշտպանության և բռնարարի պատժելիության մեխանիզմների ապահովման համար: Անհրաժեշտություն կա ընդունելու «Ընտանեկան բռնության կանխարգելման մասին» օրենքը, որը դեռ գտնվում է քննարկման փուլում: Պաշտոնական տվյալներով Հայաստանում 2014 թ.-ին և ՀՀ ոստիկանությունը կանանց նկատմամբ բռնության մասին 1500 ահազանգ է ստացել, իսկ ընտանեկան բռնությունից 8 կին է մահացել: Հասարակական կազմակերպություններն իրենց հերթին ստանում են տարեկան միջինում 4000 ահազանգ:

Օրենքի նախագիծը նախատեսում է Երևանում և մարզերում ընտանեկան բռնության ենթարկված անձանց համար ստեղծել ապաստարաններ, խորհրդատվական և հոգեբանական աջակցության կենտրոններ, վերապատրաստել իրավապահ մարմիններին և ոստիկանությանը՝ առավել կոմպետենտ վարելու ընտանեկան բռնության դեպքերը: 2014 թ.-ի դրությամբ Հայաստանում բռնության ենթարկված կանանց համար ընդամենը երեք ապաստարան կա, որոնցից միայն երկուսն են մասնագիտացված ընտանեկան բռնությունը հաղթահարած կանանց

և նրանց երեխաների համար: Դրանք գործում են ՀԿ-ների սուղ միջոցներով, իսկ պետության կողմից ստեղծված ապաստարաններ չկան: Վերոնշյալ ապաստարաններում տարեկան միջինը 100-ից ավելի բռնության ենթարկված կին և երեխա է տեղավորվում: Դիմողները շատ են, սակայն ապաստարանները փոքր են, ունեն ֆինանսական կայունության խնդիր և չեն կարող մեծ թվով կանանց տեղավորել:

Թեև օրենսդրական բարեփոխումներն ու համապատասխան հայեցակարգերի ընդունումն անչափ կարևոր է, նույնչափ կարևոր է նաև հանրության իրազեկվածության բարձրացումն ու կրթությունը կանանց իրավունքների հիմնահարցերի վերաբերյալ: Գենդերային հարցերով զբաղվող խմբերն ու կազմակերպությունները տարվա կտրվածքով կազմակերպում են մի շարք միջոցառումներ, դասընթացներ և ակցիաներ: Սակայն տարվա 365 օրերից կա 16 օր, որի ընթացքում կանանց նկատմամբ բռնությունից ու խտրականությունից խոսում են ամենուր: Խոսքը «Ընդդեմ գենդերային բռնության ակտիվության 16-օրյակ» համաշխարհային քարոզարշավի մասին է: 1991 թ.-ից ի վեր ավելի քան 4500 կազմակերպություններ աշխարհի 164 երկրներում մասնակցում են ամենամյա քարոզարշավին, որը կոչ է անում վերացնել բոլոր տեսակի բռնությունները կանանց նկատմամբ: Յուրաքանչյուր տարի մշակվում է քարոզարշավի համաշխարհային թեման և կարգախոսը՝ կանանց իրավունքների պաշտպանների հետ խորհրդակցությամբ:

Նշենք, որ 20-րդ դարում արմատավորված 16-օրյա քարոզարշավը հիմնված է երկու պատմական իրադարձությունների վրա: Առաջինը տեղի է ունեցել 1960 թ.-ի նոյեմբերի 25-ին Դոմինիկյան Հանրապետությունում, երբ իշխանությունները դաժանաբար մահապատժի ենթարկեցին քաղաքական ակտիվիստ Միրաբալ չորս քույրերից երեքին, ովքեր դարձել էին Թրուհիլյոյի ռեժիմի դեմ դիմադրության խորհրդանիշ: Երկրորդը տեղի է ունեցել 1989 թ.-ի դեկտեմբերի 6-ին Կանադայում, երբ Մարկ Լեպին անունով 25-ամյա մի երիտասարդ կրակելով սպանեց Մոնրեալի համալսարանի ինժեներական ֆակուլտետի 14 ուսանողուհիների: Մարդասպանը վստահ էր, որ այդ ֆակուլտետ իր չընդունվելու պատճառն իգական սեռի ուսանողների քանակն էր: Դեպքից հետո նույն համալսարանի տղաները ստեղծեցին խումբ, որն ամեն տարի կազմակերպում է սպիտակ ժապավենների երթ՝ հիշատակելու անմեղ սպանված ուսանողուհիներին:

Ավելի ուշ, 1999 թ.-ին, Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես ճանաչեց նոյեմբերի 25-ը որպես Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր: Այդ օրով էլ սկսվում է 16-օրյա քարոզարշավը, որը տևում է մինչև դեկտեմբերի 10-ը՝ Մարդու իրավունքների միջազգային օրը:

Այսպիսով, 16-օրյակն իր մեջ ներառում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային օրեր, որոնցից են՝

- Նոյեմբերի 25 – Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օր
- Նոյեմբերի 29 – Կին իրավապաշտպանների միջազգային օր
- Դեկտեմբերի 1 - ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր
- Դեկտեմբերի 6 – Մոնրեալի զոհերի հիշատակի օր
- Դեկտեմբերի 10 – Մարդու իրավունքների միջազգային օր:

Հայաստանում այժմ գործում են մի շարք հասարակական կազմակերպություններ, խմբեր և անհատներ, որոնք զբաղվում են կանանց իրավունքներով և աջակցում են բռնության ենթարկված կանանց և աղջիկներին: Հայաստանում «Կանանց նկատմամբ

գենդերային բռնության դեմ ակտիվիզմի 16-օրյակ»-ի հետ կապված ևս կազմակերպվում են տարբեր միջոցառումներ, դասընթացներ, ցուցահանդեսներ, ֆիլմերի ցուցադրություններ, որոնց նպատակն է իրազեկել հասարակությանը կանանց խնդիրների և գենդերային բռնության, դրա կանխարգելման և այլնի մասին:

«Ընտանեկան բռնության դեմ պայքարի ազգային օր» Հոկտեմբեր 1, 2015
Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա

Ընդդեմ գենդերային հիմքով բռնության 16-օրյակ, նոյեմբեր 25

Դեկտեմբեր 3, 2014թ., «Խաղաղությունը կնոջ ձեռքերով» հանրային միջոցառում, «Սևազգեստ կանայք» միջազգային խաղաղաշինական շարժման հայաստանյան նախաձեռնություն

«Հայաստանի չծնված աղջիկները» սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների դեմ ակցիա, դեկտեմբեր 6, 2014

«Համընդհանուր իրավունքներին նվիրված ամենամյա մրցանակաբաշխություն» ընտանեկան բռնությունը հաղթահարած Հասմիկ Խաչատրյանը Գավառ քաղաքից և Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան արժանացել են «Խիզախ կին» մրցանակին

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Գենդեր՝ սոցիալապես ամրագրված, այսինքն հասարակության մեջ ընդունելի վարք, որը բնորոշ է կանանց և տղամարդկանց:

Գենդերային նորմեր՝ վարքի որոշակի կանոններ, որոնք պարտադրվում են մարդուն՝ կախված նրա կենսաբանական սեռից:

Գենդերային դերեր՝ հասարակության կողմից կենսաբանական սեռին թելադրվող վարքի որոշակի մոդելներ:

Գենդերային խտրականություն (ուղղակի, անուղղակի)՝ անձանց իրավունքներն ու շահերը սահմանափակող ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն՝ սեռի հատկանիշով, որն ուղղված է կամ հանգեցնում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավահավասարության ճանաչման, օգտագործման կամ իրականացման սահմանափակմանը կամ վերացմանը:

Ուղղակի գենդերային խտրականություն՝ սեռային պատկանելությունն ուղղակիորեն մատնանշող խտրականություն:

Անուղղակի գենդերային խտրականություն՝ խտրականություն առանց սեռային պատկանելության ուղղակի մատնանշման:

Գենդերային վիճակագրություն՝ սեռային բաշխմամբ վիճակագրություն, որն արտացոլում է սոցիալ-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց համապատասխան դիրքը և հասարակության մեջ առկա գենդերային հիմնախնդիրներն ու հարաբերությունները:

Գենդերային ներկայացվածություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ որևէ կազմակերպության կազմում կանանց և տղամարդկանց ներկայացվածության համամասնություն:

Գենդերային հավասարություն՝ կանանց և տղամարդկանց հավասար իրավական կարգավիճակ և դրա իրականացման համար հավասար հնարավորություններ, որոնք հնարավորություն են ընձեռում անձանց, անկախ սեռից, ազատորեն օգտագործելու իրենց ունակությունները քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և հասարակական կյանքի այլ ոլորտներում մասնակցություն ունենալու համար:

Գենդերային իրավահավասարություն՝ օրենքի առաջ կանանց և տղամարդկանց իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության հավասարություն՝ օրենքով սահմանված բացառությունների հաշվառմամբ:

Գենդերային չափորոշիչներ (գենդերային զգայուն ինդիկատորներ)՝ ցուցիչներ կամ չափիչներ, որոնց քանակական և որակական ցուցանիշները կիրառում են որոշակի ժամանակահատվածում հասարակությունում գենդերային նշանակություն ունեցող փոփոխությունները հանրագումարի բերելու համար:

Գենդերային հարաբերություններ՝ շփման մեջ կամ տարբեր տեսակի համատեղ գործունեության իրականացման ընթացքում կանանց և տղամարդկանց գենդերային բնույթի վարք և վարմունք:

Գենդերային կարծրատիպեր՝ կանանց և տղամարդկանց միջև տարբերությունների մասին տվյալ ժամանակահատվածում տվյալ հասարակության մեջ առկա կարծրացած պատկերացումներ:

Գենդերային վերլուծություն՝ հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դրության վրա հասարակական կյանքի համապատասխան ոլորտներում գործող կամ նախաձեռնվող ծրագրերի, իրավական ակտերի, պետական քաղաքականության տարբեր ներգործությունների գնահատման գործընթաց:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ

Ձեռնարկի այս բաժնում ներկայացված են գործնական վարժություններ, որոնք նպատակ ունեն քննարկել, վերլուծել գենդերային խնդիրներ և հիմնահարցեր, բացահայտել և վերացնել սովորողների մոտ առկա գենդերային կարծրատիպերը, համապատասխան վերաբերմունք ձևավորել խտրականության, բռնության ցանկացած դրսևորման նկատմամբ և խորապես գիտակցել այդ երևույթների բացասական ազդեցությունն ու հետևանքները անհատների, ընտանիքների և հասարակության վրա:

Վարժությունների ցանկը ներկայացված է սանդղակով, ուր թվարկված վարժությունների դիմաց աստղանիշերով ցույց է տրված, թե որ թեմային կամ թեմաներին է առնչվում տվյալ վարժությունը: Կան վարժություններ, որոնք ուղղված են նույն նպատակներին կամ արծարծում են նույն խնդիրներն ու հասկացությունները, բայց ուղղված են տարբեր տարիքային խմբերի, և նույն թեման պարզաբանվում և քննարկվում է տարբեր աստիճաններով ու խորությամբ: Սա հնարավորություն է տալիս ուսուցչին ընտրել, թե տվյալ թեման կամ հարցը քննարկելիս որ վարժությունը հատկապես կիրառի իր դասարանում՝ ելնելով սովորողների տարիքային, իմացական և այլ առանձնահատկություններից:

Վարժությունները կառուցված են այնպես, որ նախ հնարավորություն են տալիս պարզել սովորողների պատկերացումները, ընկալումներն ու դիրքորոշումներն արծարծվող թեմաների վերաբերյալ, և հետո միայն ուղղորդել մտորելու, կշռադատելու և որոշակի եզրակացություններ անելու:



ԳՈՐԾՆԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԸ	ԳԵՆԴԵՐ	ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ	ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ	ԲՌՆՈՒԹՅՈՒՆ	ԸՆՏԱՆԵԿԱՆ /ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆ	ՏԱՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ	ՄԻՋԻՆ ԴՊՐՈՑ	ԱՎԱԳ ԴՊՐՈՑ	Էջ
1.	Ինչով ենք տարբերվում միմյանցից	*	*	*					*		62
2.	Ինչ է գենդերը	*							*		64
3.	Ես կարող եմ, և ես կկարողանայի	*	*		*				*	*	67
4.	Մենք բալիկի ենք սպասում	*		*				*	*	*	68
5.	Սպասելիքներ, պահանջներ և պարտավորություններ	*	*							*	70
6.	Գենդերային ուղերձներ	*	*							*	72
7.	Այբուբեն		*						*	*	74
8.	Իսկ դո՛ւ ձախլի՞կ ես		*	*					*	*	76
9.	Ինչ է կարծրատիպը		*						*	*	78
10.	Գենդերային կարծրատիպեր		*	*					*		80
11.	«Իսկական» տղամարդ, «իսկական» կին	*			*					*	82
12.	Ինձ դուր է գալիս, ինձ դուր չի գալիս		*	*	*					*	84
13.	Կողմ եմ, դեմ եմ		*	*	*				*	*	86
14.	Բացահայտենք կարծրատիպերը		*	*						*	88
15.	Մեկ օր մեկ ընտանիքի կյանքից		*	*	*			*	*	*	92
16.	Իմ երազանքի տունը		*	*	*					*	94

17.	«Նայիր հայելու մեջ»		*	*	*		*		*	*	95
18.	Գենդերային դերեր		*	*	*				*	*	96
19.	Ֆորում թատրոն			*	*				*	*	98
20.	Անհավասարություն			*	*				*	*	100
21.	Կանանց դրախտը				*					*	103
22.	Դիրքի կամ կարգավիճակի ձգտելով			*	*					*	105
23.	Կանայք՝ առաջնորդներ			*	*					*	107
24.	Երբ ղեկավարում են կանայք			*	*					*	109
25.	Պատմական էքսկուրս		*		*				*		113
26.	Մի վախեցիր հավակնոտ թվալուց		*		*				*	*	121
27.	Մեկ օր առանց կանանց/Մեկ օր առանց տղամարդկանց			*	*				*		124
28.	Գենդերային հավասարության իրավական հիմքերը			*	*					*	126
29.	Հետազոտում ենք մեդիան		*	*	*				*		131
30.	Ճակատագրական պատմություն գետի վրա		*	*	*		*		*	*	133
31.	Ի՞նչ է բռնությունը					*	*		*		137
32.	Բռնությունը մեր կյանքում					*	*		*		139
33.	Արդյո՞ք բռնություն է, երբ...					*	*			*	140
34.	Մոլորություններ և փաստեր բռնության վերաբերյալ					*	*		*	*	143
35.	«Մեր կողքին, մեր հարևանությամբ»					*	*			*	146
36.	Ականատեսի վկայություններ						*			*	152
37.	Կարելի է փախչել					*	*		*	*	157
38.	Բռնությունից զերծ ընտանիք					*	*		*	*	159

ԻՆՉՈՎ ԵՆՔ ՄԵՆՔ ՏԱՐԲԵՐՎՈՒՄ ՄԻՄՅԱՆՑԻՑ

ՆՊԱՏԱԿ Մասնակիցները կգիտակցեն, որ իրականում աղջիկների և տղաների միջև տարբերությունները միայն ֆիզիոլոգիական կառուցվածքի և կենսաբանական առանձնահատկությունների մեջ են:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 25 րոպե

ՏԱՐԻՔ միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցները բաժանվում են 5-7 հոգանոց խմբերի: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է նույն հանձնարարությունը՝ կազմել առանձնահատկությունների ցանկ, որոնցով տարբերվում են աղջիկները տղաներից: Խմբերից վերջինին տրվում է հանձնարարություն՝ կազմել որակների ցանկ, որոնցով մենք նման ենք իրար: Այս խմբի աշխատանքին որոշակի աջակցություն է պետք ցույց տալ, օրինակներ բերել: Պետք է օգնել խմբին տեսնելու, որ առանձնահատկություններն ավելի շատ անհատական մարդկային են, քան՝ սեռային:

Սկզբում քննարկումն սկսում են նրանք, ովքեր տարբերություններն են դուրս բերել: Տարբերությունները գրվում են գրատախտակին երկու սյունակով: Հաջորդ խմբերը մոտենում են գրատախտակին և լրացումներ անում առաջին խմբի գրածին:

Վերջին խումբը գրատախտակին նոր սյունակով գրում է այն որակներն ու առանձնահատկությունները, որոնցով մենք նման ենք իրար:

Այնուհետև ուսուցիչը խմբի ուշադրությունը հրավիրում է նմանություններին և տարբերություններին:

Տարբերություններ

Աղջիկներ	Տղաներ
Թույլ	Ուժեղ
Սակավ խելացի	Խելացի
Համբերատար	Անհամբեր
Զուսպ	Անզուսպ
Համեստ	Հանդուգն
Մաքրասեր	Փնթի
Հոգատար	Անտարբեր
Տնտեսվար	Թափթփված
Կարողանում են ուտեստներ պատրաստել	Չեն կարողանում ուտեստներ պատրաստել
Չեն հայհոյում	Հայհոյում են
Զգացմունքային	Չոր
և այլն	և այլն

Նմանություններ

Ե'վ տղաները, և' աղջիկները կարող են
Թույլ լինել
Սկզբունքային լինել
Ուժեղ լինել
Համառ լինել
Հայհոյել
Հանդուգն լինել
Համեղ ուտեստներ պատրաստել
Զգացմունքային լինել
և այլն

Ուսուցիչը ամփոփիչ քննարկումը տանում է այն ուղղությամբ, որ մեր տարբերություններն անհատական են, այլ ոչ սեռային: Բոլոր նշված որակները կարող են հատուկ լինել և՛ տղամարդուն, և՛ կնոջը:

ԻՆՉ Է ԳԵՆԴԵՐԸ

ՆՊԱՏԱԿ Վարժության նպատակն է ուսումնասիրել և հասկանալ «սեռ» և «գենդեր» հասկացությունների տարբերությունը և տարբերակման անհրաժեշտությունը:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 45 րոպե

ՏԱՐԻՔ միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցներին հարկավոր է բաժանել 2 խմբի: Ամեն մի խմբին բաժանել գունավոր մարկերներ և ֆլիպչարտներ, բացատրել առաջադրանքը: 1-ին խումբը պետք է թվի 10-12 հատկանիշներ/բառեր, որոնք խմբի անդամները նույնացնում են կնոջ հետ: 2-րդ խումբը պետք է գրի առնի տղամարդու հետ ասոցացվող 10-12 հատկանիշներ/բառեր: Հարկավոր է խրախուսել, որ մասնակիցները նշեն և՛ կենսաբանական, և՛ սոցիալական հատկանիշներ:

Ստորև ներկայացված են նման աշխատանքների օրինակներ:

ԿԻՆ	ՏՂԱՄԱՐԴ
Թույլ	Ուժեղ
Քնքուշ	Կոպիտ
Հարմարվող	Աշխատասեր
Զգացմունքային	Խելացի
Գեղեցիկ	Կազմակերպչական ձիրք ունեցող
Բամբասկոտ	Քաջ
Հղիություն	Առատ մազածածկույթ
Մայր	Բամբ ձայն
Աշխատասեր	Եղբայր

Երբ խմբերը վերջացնեն իրենց աշխատանքը, փակցնել աշխատանքները պատին և խնդրել ամեն մի խմբից մեկ մասնակցի ներկայացնել աշխատանքը:

Ներկայացնելու ընթացքում վարողը պետք է լսարանի հետ քննարկի և յուրաքանչյուր հատկանիշի կողքին նշի՝ տվյալ հատկանիշը տրված է կնոջը/տղամարդուն **բնության, թե՞**

հասարակության կողմից: Օգտագործել 2 գույնի մարկեր և ամեն մի հատկանիշի կողքին գրել համապատասխանաբար «Բ» կամ «Հ»:

Քննարկումից հետո վերցնել 2 գունավոր թերթիկ, որոնցից մեկի վրա նախապես գրված կլինի ԿԻՆ, մյուսի վրա՝ ՏՂԱՄԱՐԴ: ԿԻՆ գունավոր թերթիկով ծածկել ՏՂԱՄԱՐԴ բառը, իսկ ՏՂԱՄԱՐԴ թղթիկի օգնությամբ՝ ԿԻՆ բառը:

ԿԻՆ		ՏՂԱՄԱՐԴ	
Թույլ	Հ	Ուժեղ	Հ/Բ*
Քնքուշ	Հ	Կոպիտ	Հ
Հարմարվող	Հ	Աշխատասեր	Հ
Զգացմունքային	Հ	Խելացի	Հ
Գեղեցիկ	Հ	Կազմակերպիչ	Հ
Բամբասկոտ	Հ	Քաջ	Հ
Հղիություն	Բ	Առատ մազածածկույթ	Բ
Մայր	Բ	Բամբ ձայն	Բ
Աշխատասեր	Բ	Եղբայր	Բ

* Կախված է, թե ինչ ուժի մասին է խոսքը: Սովորաբար տղամարդիկ ֆիզիկապես ավելի ուժեղ են, քան կանայք: Սակայն հոգեբանական ուժի մեծությունը կախված չէ սեռից, հետևաբար տվյալ սեռին վերագրված է հասարակության կողմից:

Հարցնել մասնակիցներին, թե արդյո՞ք համաձայն են, որ տղամարդու տվյալ հատկանիշները կարելի է վերագրել նաև կանանց, և հակառակը, կնոջ թվարկված հատկանիշները կարելի՞ է վերագրել տղամարդկանց: Օրինակ, կինը կարո՞ղ է լինել ուժեղ, տղամարդը կարո՞ղ է լինել զգացմունքային:

Օղակել այն հատկանիշները, որոնք, ըստ մասնակիցների, հնարավոր չէ վերագրել հակառակ սեռին: Օրինակ, հղիանալը բնորոշ է միայն կնոջը և չի կարող նույնացվել տղամարդու հետ: Բացատրել, որ **այն հատկանիշները, որոնք հնարավոր չէ նույնացնել և՛ տղամարդու, և՛ կնոջ հետ, սեռային հատկանիշներն են: Դրանք կենսաբանական հատկանիշներ են, որոնք տրվում են բնության կողմից: Իսկ այն հատկանիշները, որոնք կարող են երկու սեռի հետ էլ նույնացվել, գենդերային հատկանիշներն են, հատկանիշներ, որոնք ոչ թե բնությունն է տվել մարդուն, այլ հասարակությունն է վերագրել՝ որոշակի սպասելիքներից և պատկերացումներից ելնելով:**

Մասնակիցներին բացատրել, որ սեռն ու գենդերը տարբեր հասկացություններ են, և կարևոր է տարանջատել մեկը մյուսից՝ գենդերային հավասարությունը ճիշտ պատկերացնելու և ընկալելու նպատակով:

Սեռը կենսաբանական է և իրենից ենթադրում է կնոջ և տղամարդու միջև կենսաբանական տարբերությունները: Այսինքն՝ «սեռ»-ի դեպքում մենք խոսում ենք բնության կողմից տրված՝ կնոջ և տղամարդու մարմինների միջև ֆիզիկական տարբերությունների մասին: Սակայն կենսաբանական այդ տարբերությունն ամենևին էլ չի նշանակում, որ հասարակությունում կնոջն ու տղամարդուն պետք է տարբեր կերպ վերաբերվել: Այնուամենայնիվ, հասարակության կողմից անհատներին վերագրվել են որոշակի մոտեցումներ և վարքագծեր, և սոցիալական կամ մշակութային հենց այդ «կերտվածքն» էլ իրենից ներկայացնում է գենդերը:

Գենդերն այն վերաբերմունքներն են, վարքագծերը և սպասելիքները, որոնք հասարակությունն ասոցացնում է կին կամ տղամարդ լինելու հետ[9]:

1. Ի՞նչ եք կարծում, քաջ լինելը սեռայի՞ն հատկանիշ է, թե՞ գենդերային: Կարո՞ղ է կինը քաջ լինել:
2. Ի՞նչ եք կարծում, կնոջ և տղամարդու հանդեպ ունեցած ընկալումները Հայաստանում նո՞ւյնն են, ինչ այլ երկրներում:
3. Արդյո՞ք գենդերային հատկանիշները փոփոխվում են ժամանակի ընթացքում: Համեմատեք 21-րդ դարի հայ կնոջը/տղամարդուն 18-րդ դարի ֆրանսիացի կնոջ/տղամարդու հետ: Ի՞նչ փոփոխություններ եք նկատում նրանց վարքագծի, հագուստի, արտաքին տեսքի մեջ:

9 Այս վարժությունն անցկացնելու համար կարելի է օգտվել ուղեցույցի տեսական հատվածից (տես էջ 11-15):

ԵՍ ԿԱՐՈՂ ԵՄ ԵՎ ԵՍ ԿԿԱՐՈՂԱՆԱՅԻ

ՆՊԱՏԱԿ Աշակերտները հստակ պատկերացում կկազմեն «սեռ» և «գենդեր» հասկացությունների և դրանց տարբերությունների մասին՝ հիմնվելով սեփական փորձի վրա:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 35 րոպե

ՏԱՐԻՔ միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչն աշակերտներին խնդրում է մոտենալ նախօրոք պատրաստված թղթերին և վրան գրել իրենց կարծիքը: Տղաների համար՝ «Ես տղամարդ եմ, և ես կարող եմ..., եթե ես կին լինեի, ապա ես կկարողանայի...»:

Աղջիկների համար՝ «Ես կին եմ, և ես կարող եմ..., եթե ես տղամարդ լինեի, ապա ես կկարողանայի...»:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչո՞ւ եք ընտրել հենց այդ պատասխանը:
2. Ի՞նչ տարբերություն կա «կարող եմ» և «կկարողանամ» բառերի միջև: Այս տարբերությունն իսկապես զգալի՞ է, թե արհեստականորեն է ստեղծված:
3. Ինչպիսի՞ տարբերություններ կան սպասումների միջև՝ կապված սեռի և գենդերի հետ:
4. Ի՞նչ է ցույց տալիս այս վարժությունը:

Քննարկվում է յուրաքանչյուր կարծիք, ինչո՞ւ են նրանք մտածում, որ չեն կարող անել ինչ-որ բան, օրինակ՝ ընթրիք պատրաստել կամ զբաղվել երեխաների խնամքով:

Ուսուցիչը պետք է օգնի երեխաներին հասկանալ, որ կնոջ և տղամարդու վարքի վերաբերյալ տարբեր բնորոշումներն արտահայտում են նրանց մասին ընդունված սպասելիքները, ընդ որում՝ արտահայտված կարծիքների մեծ մասը վերաբերում է կենսաբանական սեռին, այլ ոչ թե գենդերին:

ՄԵՆՔ ԲԱԼԻԿԻ ԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ

ՆՊԱՏԱԿ	Մասնակիցները կճանաչեն հասարակության կողմից աղջիկներին ու տղաներին վերագրվող հատկություններն ու դրանց սահմանափակումները: Կտարբերակեն «սեռ» և «գենդեր» հասկացությունները գործնական աշխատանքի միջոցով:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	տարրական, միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցները բաժանվում են 6 հոգանոց 3 խմբի: Եթե դասարանում աշակերտների թիվը գերազանցում է 18-ը, նրանք դառնում են դիտորդներ կամ լրացնում են խմբի մյուս անդամներին:

Ուսուցիչը նախապես պատրաստում է 6 տարբեր գույների թերթիկներ, որոնց վրա գրվում են ընտանիքի անդամների անունները՝ պապիկ, տատիկ, մայրիկ, հայրիկ, տղա, աղջիկ: Ուսուցիչը թերթիկները գլանաձև փաթաթում է և պատահական կերպով բաժանում մասնակիցներին: Մասնակիցները, բացելով իրենց թերթիկները, սկսում են գտնել իրենց ընտանիքի անդամներին՝ ըստ թերթիկի գույնի: Յուրաքանչյուր գույնը բնորոշում է որևէ կոնկրետ մշակույթ. մեկը՝ մահմեդական, մյուսը՝ քրիստոնեական, եվրոպական, հայկական և այլն:

Ընտանիքի անդամներին գտնելուց հետո, մասնակիցները խմբվում են իրենց ընտանիքներում: Երեք ընտանիքներում էլ լավ լուր կա. նրանք երեխայի են սպասում:

Յուրաքանչյուր խմբին տրվում է թերթիկ, որտեղ նախատեսված են 20 հատկանիշի համար բաժիններ, որոնք պիտի լրացնեն ընտանիքի անդամները: Յուրաքանչյուր մասնակից պետք է փորձի պատկերացնել իրեն տվյալ մշակույթի, տվյալ տարիքի և սեռի ներկայացուցիչ, փորձի մտնել նրա մաշկի մեջ, մտածել նրա նման:

Ընտանիքի անդամները պիտի գրեն առաջին սյունակում այն հատկանիշները, որոնք նրանք ցանկանում են տեսնել երեխայի մեջ:

Այժմ հետազոտությունը պարզել է, որ սպասվում է աղջիկ: Ընտանիքը պետք է 2-րդ սյունակում ընտրի և առաջին սյունակից առանձնացնի այն հատկանիշները, որոնք կցանկանար տեսնել աղջկա մեջ:

Քիչ հետո պարզվեց, որ հետազոտությունը սխալվել է, և ընտանիքը տղայի է սպասում: Այժմ պետք է երրորդ բաժնում ընտրել և առաջին բաժնից գրել այն հատկանիշները, որոնք կուզենան տեսնել տղայի մեջ:

Վերջում պետք է լրացնել 4-րդ սյունակը, որտեղ պետք է նշել այն հատկանիշները, որոնք, ըստ մասնակիցների, հատուկ են և՛ տղաներին, և՛ աղջիկներին:

1	1	2	3	4
2				
3				
4				
5				
6				

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Քննարկման ժամանակ համեմատվում են 3 ընտանիքների կատարած աշխատանքը:
2. Քննարկվում են մշակութային տարբերությունները:
3. Վերլուծվում են տարիքային և սեռային տարբերությունները՝ տարբեր սեռերից ունեցած ակնկալիքների և նրանց նկատմամբ պահանջների առումով:
4. Ընտանիքի ո՞ր անդամներն էին ավելի շատ տարբերություններ տեսնում տղաների և աղջիկների միջև:
5. Որո՞նք էին իրական տարբերությունները, իսկ որո՞նք՝ կարծրատիպեր:
6. Ո՞ր որակներն էին բնորոշ սեռին, իսկ որո՞նք՝ գենդերին:

ՍՊԱՍԵԼԻՔՆԵՐ, ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆՊԱՏԱԿ	Մասնակիցները կգիտակցեն, կճանաչեն տղաների և աղջիկների, կանանց և տղամարդկանց նկատմամբ ժամանակակից հասարակության պահանջների տարբերությունները:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոցականներ

ԸՆԹԱՑՔ

5 մեծ թղթերից յուրաքանչյուրի վրա նախապես պետք է գրված լինեն այն միջավայրերի անունները, որտեղ տղայից կամ աղջկանից, կնոջից կամ տղամարդուց որոշակի սպասումներ կան՝

Դպրոց
Ընտանիք
Ընկերներ
Հասարակություն
Զուգընկեր:

Ապա այդ թղթերից յուրաքանչյուրը պետք է բաժանել 2 մասի, մի մասի վրա գրել աղջիկ կամ երիտասարդ կին, մյուսի վրա՝ տղա կամ երիտասարդ տղամարդ:

Ուսուցիչն առաջարկում է աշակերտներին, որ նրանք մի քանի րոպե մտածեն, թե ինչ է ակնկալվում կամ պահանջվում տղաներից և աղջիկներից տարբեր միջավայրերում, որոնք նշված են տարբեր պաստառների վրա: Յուրաքանչյուր մասնակից մտածելուց հետո պետք է մոտենա համապատասխան պաստառին և գրի իր կարծիքը: Այնուհետև մասնակիցները բաժանվում են 5 խմբերի, և յուրաքանչյուր խումբ ընտրում է մեկ պաստառ ու քննարկում:

Խմբում մասնակիցները պիտի քննարկեն՝

1. Որտեղից են առաջանում այդ սպասումները:
2. Կարող են աղջիկները կամ տղաները բավարարել այդ սպասումները:
3. Ո՞վ է նպաստում այդ սպասելիքների առաջացմանը:
4. Ինչպե՞ս ենք մենք առաջացնում այդ սպասելիքները (գիտակցաբա՞ր, թե՞ անգիտակից):
5. Ինչպե՞ս են այդ սպասումներն ազդում երիտասարդների վրա:

Ներխմբային քննարկումն անելուց հետո խմբի անդամները փոքրիկ զեկուցման ձևով ներկայացնում են մեծ խմբին/դասարանին իրենց կատարած վերլուծության և քննարկման արդյունքները:

1. Ինչպիսի՞ տարբերություններ կան աղջիկների և տղաների նկատմամբ ունեցած սպասելիքների և պահանջների միջև:
2. Արդյո՞ք ինչ-որ բան իրենց զարմացրեց: Ինչո՞ւ:
3. Ի՞նչ դուք կցանկանայիք փոխել:
4. Ձեր կարծիքով՝ ինչպե՞ս կարելի է դա փոխել:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՈՒՂԵՐՁՆԵՐ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կհասկանան, որ իրենք «կերտվում» են որպես աղջիկ կամ տղա սոցիալական ազդեցությունների, հասարակության ակնկալիքների, սպասումների և ընդունված նորմերի համապատասխան:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Դասարանը բաժանել փոքր խմբերի (4-5 հոգի) և խնդրել սովորողներին հիշել, թե ովքեր և ինչպես են ազդել իրենց սեռային ինքնության ձևավորման վրա: Օրինակ, հիշեն իրավիճակներ, դրվագներ, երբ մարդիկ՝ ծնողներ, տատիկ, պապիկ, ընկերներ, հարևաններ և այլն, հորդորել են դրսևորել իրենց որպես աղջիկ կամ տղա: Ինչպե՞ս և ի՞նչ մեթոդներով են դա արել, ի՞նչ կոնկրետ իրավիճակներ են եղել:

Սովորողները խմբերում պատմում են իրենց հիշողությունները, զգացմունքները: Պատմությունները մնում են խմբի ներսում, եթե իհարկե որևէ մեկը ցանկություն չարտահայտի ներկայացնել իր պատմությունը նաև ողջ դասարանին: Իսկ որպեսզի հնարավոր լինի ներկայացնել ներխմբային քննարկումները, առաջարկում ենք դրանք ամփոփել՝ նշելով միայն պատմությունների կարևոր ասպեկտները:

Ձեր ինքնության ձևավորման վրա ազդեցություն ունեցած մարդիկ/ նրանց դերերը

Օրինակ՝

- հայր, մայր
- տատ, պապ
- ընկերներ
- հասակակիցներ
- ուսուցիչներ և այլն

Ինչպե՞ս, ի՞նչ միջոցներով կամ գործողություններով

Օրինակ՝

- խրատներ
- քննադատություն
- պատիժ
- պարսավանք և այլն

Ի՞նչ նորմեր էին սահմանում, ի՞նչ ակնկալիքներ էին արտահայտում

Օրինակ՝

- Աղջիկը/կինը պետք է...
  - լինի քնքուշ
  - լինի համեստ
  - տանից ուշ դուրս չգա և այլն

- Տղան/տղամարդը պետք է...
  - լինի ուժեղ
  - լինի ինքնուրույն
  - զսպի արցունքները և այլն....

Խմբերից յուրաքանչյուրը ներկայացնում է վերոնշյալ պաստառին մոտ բովանդակությամբ պաստառ՝ ելնելով խմբի անդամների պատմություններից: Մյուսները կարող են ճշգրտող հարցեր տալ, ստանալ մեկնաբանություններ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

1. Ի՞նչ նկատեցիք՝ ովքեր և ինչպես, ինչ միջոցներով են ազդեցություն ունեցել ձեզ վրա:
2. Ինչպե՞ս են նորմերը ազդում ձեր անձի, ինքնության ձևավորման վրա՝ որպես աղջիկ/տղա:
3. Այժմ ի՞նչ նշանակություն ունեն դրանք ձեր ինքնաճանաչման և վարքագծի վրա:
4. Արդյո՞ք համաձայն եք ձեզ թելադրվող նորմերի և ակնկալիքների հետ:
5. Ո՞ր նորմերն ու ակնկալիքները կփոխեիք:

ԱՅԲՈՒԲԵՆ

ՆՊԱՏԱԿ	Օգնել մասնակիցներին գիտակցել և ճանաչել իրենց բացասական ընկալումներն ու վերաբերմունքը հակառակ սեռի նկատմամբ: Օգնել հարթել սեռերի միջև չգիտակցված ներքին կոնֆլիկտներն ու թյուրընկալումները: Խթանել երկխոսությունը սեռերի միջև:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչները մասնակիցներին տալիս են A4 չափի թուղթ, որի վրա գրված են այբուբենի բոլոր տառերը:

Տղաներն ու աղջիկները դասարանում նստում են տարբեր շարքերում և ստանում տարբեր հանձնարարություններ:

Տղաներին տրվում է հանձնարարություն այբուբենի ամեն տառի առաջ գրել այդ տառով սկսվող մեկ բառ, որը զուգորդվում է «աղջիկ» բառի հետ: Աղջիկներին տրվում է նույն հանձնարարությունը կատարել՝ զուգորդումներ գտնելով «տղա» բառի հետ:

Պետք է փորձել լրացնել հնարավորինս շատ տառեր և հնարավորինս արագ, առանց մտածելու և քննադատության ենթարկելու մտքին եկած բառերը: Արգելվում են միայն հայհոյական և անպարկեշտ խոսքերը: Աշխատանքն ավարտելուց հետո մասնակիցները բաժանվում են նույն սեռի խմբերի: Եթե խումբը փոքր է, կարելի է բաժանվել երկու խմբի՝ աղջիկների և տղաների: Եթե մեծ խումբ է, կարելի է բաժանվել 4 խմբի՝ 2 խումբ աղջիկներ և 2 խումբ տղաներ:

Անհատական աշխատանքները կատարելուց հետո մասնակիցներն իրենց թերթիկները փոխանցում են հակառակ սեռի խմբին:

Այս փուլում յուրաքանչյուր խումբ պետք է վերլուծի հակառակ սեռի աշխատանքը՝ ելնելով սեփական վերաբերմունքից՝

Մեզ դուր եկավ...

Մեզ դուր չեկավ...

Մեզ զարմացրեց...

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ուսուցիչը պիտի օգնի մասնակիցներին քննարկել և վերլուծել սեփական վերաբերմունքը հակառակ սեռի նկատմամբ, գիտակցել սեփական գիտակցական մղումներն ու կարծրատիպերը:
2. Ինչպե՞ս են մեր իրական և թաքնված վերաբերմուքներն արտահայտվում մեր վարքում և խոսքերում:
3. Ի՞նչ տվեց ձեր գրածի մասին հակառակ խմբի կարծիքն իմանալը:
4. Ի՞նչ զգացիք, երբ կարդացիք հակառակ խմբի գրած բառերն ու զուգորդումները:
5. Ո՞րն էր ամենատարօրինակ բանը, որ կարդացիք:
6. Ո՞րն էր ամենատարօրինակ միտքը, որ եկավ բառերը գրելիս:
7. Ի՞նչ եք կարծում, որտեղի՞ց այդ միտքը:

ԻՍԿ ԴՈ՛Ի ՁԱԽԼԻԿ ԵՍ

ՆՊԱՏԱԿ Կոնկրետ օրինակով բացատրել, թե ինչ է կարծրատիպը, և ինչպես է այն առաջանում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 20 րոպե

ՏԱՐԻՔ միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Աշակերտներին խնդրել աջ և ձախ ձեռքի մատներն իրար մեջ անցկացնել/խաչել:

Աշակերտներին ասել, որ ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր մատները խաչելիս աջ ձեռքի բթամատը դրել են ձախ ձեռքի բթամատի վրա: Հաշվել աշակերտների քանակը: Այնուհետև պետք է ձեռք բարձրացնեն նրանք, ովքեր ձախ ձեռքի բթամատն են դրել աջ ձեռքի բթամատի վրա: Դարձյալ հաշվել աշակերտների քանակը:

Այնուհետև մեկնաբանել.

«ԱՄՆ-ում 2001 թ.-ին իրականացվել է հետազոտություն, որի համաձայն՝ այն մարդիկ, ովքեր աջ ձեռքի բթամատն են դնում ձախի վրա, ավելի վստահելի են աշխատանքում, նպատակասլաց են, ճշտապահ և աշխատասեր: Նրանք, ովքեր ձախ բթամատն են դնում աջի վրա, ընդհակառակը, սովորաբար ծույլ են, անվստահելի և ունեն ուշանալու հակում: Քանակական ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ ձախ բթամատը աջի վրա դնողների մոտ գողությունն աշխատավայրում 4 անգամ ավելի է տարածված:

Հաշվի առնելով հետազոտության արդյունքները՝ ԱՄՆ-ում գործատուներն այժմ աշխատանքի ընդունելության հարցազրույցների ժամանակ խնդրում են աշխատակիցներին խաչել մատները: Նրանք, ովքեր ձախ բթամատը դնում են աջի վրա, մեխանիկորեն դուրս են գալիս մրցույթից, քանի որ գործատուները հրաժարվում են նրանց աշխատանքի ընդունել»:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Հարց աջ բթամատը ձախին դնող աշակերտներին՝ ի՞նչ եք զգում:
2. Հարց ձախ բթամատն աջին դնող աշակերտներին՝ ի՞նչ եք զգում:
3. Ի՞նչ եք կարծում, արդա՞ր է գործատուների դիրքորոշումը: Ինչո՞ւ:
4. Եթե դուք լինեիք գործատու, ինչպե՞ս կվարվեիք:
5. Եթե գործատուն ձեզ աշխատանքի չվերցներ այդ հիմնավորմամբ, ի՞նչ կձեռնարկեիք:
6. Ինչքանո՞վ եք վստահում հետազոտությանը:

Այնուհետև մեկնաբանեք.

«Իրականում ԱՄՆ-ում երբևէ չի իրականացվել նման հետազոտություն, և հետևաբար ներկայացված բոլոր փաստերը կեղծ էին: Սակայն այս օրինակը բերվեց նրա համար, որ մենք հասկանանք, թե ինչպես են առաջանում կարծրատիպերը: Փաստորեն, որևէ միտք, որն իրականում չունի գիտական հիմնավորում և կեղծ տեղեկատվություն է պարունակում, արմատավորվում է մարդկանց մտածողության մեջ, ձևավորվում որպես մտածելակերպ ու գործելակերպ և փոխանցվում շրջապատի այլ մարդկանց»:

Այսպես, օրինակ, չկա որևէ գիտական հիմնավորում կամ փաստ, որ տղամարդիկ ավելի լավ են մեքենա վարում, քան կանայք, սակայն մարդկանց մոտ դեռ գերիշխում է այն կարծրատիպը, որ կանայք լավ վարորդներ չեն:

Շատերը մտածում են, որ կանանց մտավոր կարողությունները բավարար չեն գիտության մեջ կամ տեխնիկական մասնագիտություններում ներդրում ունենալու համար, սակայն դարձյալ չկա որևէ գիտական հիմք այդպես կարծելու համար. դա ընդամենը կարծրատիպ է:

ԻՆՉ Է ԿԱՐԾՐԱՏԻՊԸ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կհասկանան, թե ինչ է կարծրատիպը, կարծրատիպերի ազդեցությունը մարդկանց վրա, կարծրատիպերի վերացման հնարավոր ուղիները:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Գրատախտակին գրել Ռալֆ Վալդո Էմերսոնի հետևյալ խոսքերը և քննարկել.

Մարդիկ տեսնում են սոսկ այն, ինչ իրենք պատրաստ են տեսնել:

1. Ինչպե՞ս եք հասկանում այս խոսքերը:
2. Համաձա՞յն եք այս խոսքերի հետ: Ինչո՞ւ այո: Ինչո՞ւ ոչ:
3. Ի՞նչ է կարծրատիպը: Երբևէ հանդիպե՞լ եք այս բառին:
4. Կարծրատիպերի ի՞նչ օրինակներ կարող եք բերել:

Այնուհետև աշակերտների միջոցով փորձել դուրս բերել «կարծրատիպ» հասկացության սահմանումը: Այդ նպատակով դասարանը բաժանել 4-5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ «մտքերի գրոհ»-ի օգնությամբ թղթի վրա գրում է բոլոր այն բառերը, որոնք առաջանում են «կարծրատիպ» բառն ասելիս: Ներխմբային աշխատանքը վերջացնելուց հետո խմբերը փոխանակում են իրենց թղթերը: Տվյալ խումբը պետք է կարծրատիպը սահմանի հարևան խմբի մտագրոհի հիման վրա: Աշխատանքը վերջացնելուց հետո խմբերն իրենց «սահմանումները» փակցնում են պատին, և ամեն խմբից մեկը ներկայացնում է խմբի աշխատանքը:

Այնուհետև կատարել ամփոփում:

Կարծրատիպը մի խումբ մարդկանց արմատավորված կարծիքն է որևէ երևույթի կամ մարդկանց խմբի մասին, որը տարածվում է հասարակության վրա, հաստատվում մարդկանց մտածելակերպում և վերածվում համընդհանուր կարծիքի:

Կարծրատիպը ստանդարտ և կայուն կարծիք է սոցիալական խմբերի կամ առանձին անձանց մասին, որը հեշտությամբ տարածվում է մնացած բոլոր անդամների վրա:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

1. Արդյոք ձեր կյանքում հանդիպել եք կարծրատիպերի: Եթե այո, ինչպես եք ձեզ զգացել:
2. Ո՞րն է եղել ձեր նկատմամբ դրսևորված կարծրատիպի հիմքը (տարիքը, սեռը, ազգությունը, թե այլ): Բերել օրինակներ:
3. Ի՞նչ եք կարծում, գոյություն ունե՞ն «անվնաս» կարծրատիպեր, որոնք բացասական հետևանքներ չեն թողնում:
4. Արդյո՞ք կարծրատիպը մեծ ազդեցություն է ունենում անձի ձևավորման, նախասիրությունների, բնավորության վրա:
5. Պե՞տք է պայքարել կարծրատիպերի դեմ: Ինչո՞ւ և ինչպե՞ս:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐ

ՆՊԱՏԱԿ Վարժության նպատակն է վեր հանել գենդերային մի շարք կարծրատիպեր և քննարկել հասարակության կանխակալ պատկերացումները կնոջ և տղամարդու մասին:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 20 րոպե

ՏԱՐԻՔ միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցներին բաժանել 2 խմբի: Յուրաքանչյուր խմբին տալ միևնույն՝ ստորև բերված զույգ հատկանիշները: Առաջին խումբը պետք է հատկանիշները բաժանի «դրական» և «բացասական» խմբերի, իսկ մյուս խումբը՝ «կին» և «տղամարդ» խմբերի:

Հատկանիշներ

Ուժեղ – Թույլ
Խելացի – Թեթևամիտ
Առաջնորդ – Ենթարկվող
Հավասարակշռված – Զգացմունքային
Որոշող – Հնազանդվող:

Որպես կանոն, վարժությունը կատարելուց հետո ստացվում է նմանատիպ պատկեր՝

ԴՐԱԿԱՆ	ԲԱՑԱՍԱԿԱՆ	ՏՂԱՄԱՐԴ	ԿԻՆ
Ուժեղ	Թույլ	Ուժեղ	Թույլ
Խելացի	Թեթևամիտ	Խելացի	Թեթևամիտ
Առաջնորդ	Ենթարկվող	Առաջնորդ	Ենթարկվող
Հավասարակշռված	Զգացմունքային	Հավասարակշռված	Զգացմունքային
Որոշող	Հնազանդվող	Որոշող	Հնազանդվող

Բացատրել, որ այս պատկերը ստացվում է հասարակության կանխակալ պատկերացումների և գենդերային կարծրատիպերի արդյունքում: Ինչպես երևում է, հասարակությունը տրված դրական հատկանիշները ասոցացնում է տղամարդու հետ: Տղամարդը դիտվում է որպես ուժեղ, խելացի, հավասարակշռված, առաջնորդության ձիրք ունեցող և որոշումներ կայացնող անձ: Մինչդեռ բացասական հատկանիշները վերագրվում են կնոջը: Կինն ընկալվում է որպես թույլ, զգացմունքային, հնազանդ, թեթևամիտ էակ, ով որոշումներ չի կայացնում, առաջնորդ չէ, պակաս խելացի է, քան տղամարդը: Հետևաբար մենք պետք է կոտրենք նման կարծրատիպերը և ընդունենք, որ նշված բոլոր հատկանիշները կարող են բնորոշ լինել և՛ տղամարդուն, և՛ կնոջը՝ անկախ նրանց սեռային պատկանելիությունից:

«ԻՍԿԱԿԱՆ» ՏՂԱՄԱՐԴ , «ԻՍԿԱԿԱՆ» ԿԻՆ

ՆՊԱՏԱԿ	Սովորողները կտարբերակեն գենդերային սպասելիքներն ու կարծրատիպերը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցները բաժանվում են խմբերի՝ ըստ որևէ հատկանիշի՝ սիրած գույն, ծնվելու եղանակ և այլն: Այնուհետև խումբը անվանվում է տվյալ հատկանիշի համաձայն՝ կարմիրներ, ամառ, գարուն և այլն: Յուրաքանչյուր խումբ գաղտնի կերպով ստանում է իր հանձնարարությունը: Խմբերից մի մասին հանձնարարվում է գրել «իսկական» տղամարդու նկարագիրը, մյուսներին՝ «իսկական» կնոջ նկարագիրը: Թերթիկներում որևէ ակնարկ սեռի մասին չպետք է պարունակվի: Խմբերը պիտի գրեն միայն հատկանիշներ: Ավարտելուց հետո թերթիկները պետք է միայն վերնագրել խմբի համարով կամ անունով: Լրացված թերթիկները խմբավարը դնում է փոքր արկղի մեջ:

1. Խմբերից յուրաքանչյուրն ընտրում է արկղի թերթիկներից մեկը և փորձում որոշել, թե ում կատարելատիպն է նկարագրված թերթիկում՝ «իսկական» տղամարդո՞ւ, թե՞ «իսկական» կնոջ:
2. Գուշակելուց կամ չգուշակելուց հետո քննարկում է արվում: Յուրաքանչյուրը կարող է վերլուծել՝ նշված որակներից որո՞նք են իսկապես ցանկալի և ընդունելի տղամարդու կամ կնոջ համար:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Վերջում պետք է քննարկման դնել «իսկական տղա» և «իսկական աղջիկ» շրջանառվող հասկացությունները: Պետք է քննարկումը տանել այն ուղղությամբ, որ դրանք շատ անհատական պատկերացումներ են և շատ հեռու իրականությունից, ինչպես նաև, որքան շատ են պատահում թյուր պատկերացումներ և թյուր պարտականություններ, որոնք հասարակության կողմից դրվում են սեռերից յուրաքանչյուրի վրա՝ առանց դրա համար լուրջ հիմնավորումների: Նման թյուր պատկերացումներից են, օրինակ, որ տղան պիտի լինի կռվարար, իսկ աղջիկը՝ համեստ: Իրականում համեստությունը սազում է ցանկացած մարդու՝ ցանկացած տարիքի և ցանկացած սեռի, իսկ կռվարարությունն անցանկալի վարք է և՛ տղայի, և՛ աղջկա համար:

ԻՆՉ ԴՈՒՐ Է ԳԱԼԻՍ, ԻՆՉ ԴՈՒՐ ՉԻ ԳԱԼԻՍ

(Ցանկալի է նախորդ վարժությունից անմիջապես հետո անել՝ օգտագործելով նախորդ վարժության խմբային աշխատանքի նյութերը)

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կգիտակցեն, որ համընդհանուր պատկերացումները «իսկական» տղամարդու կամ կնոջ մասին կարող են սաստիկ տարբերվել անհատական պատկերացումներից և նախընտրություններից: Յուրաքանչյուրի անհատական նախընտրությունները, ճաշակը տարբեր են, և պարտադիր պահանջ չեն կարող լինել բոլորի համար:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Գենդերային կարծրատիպերը ստեղծվում են այն պատճառով, որ մարդկանց մի խումբ սկսում է ինչ-ինչ պատճառներով նախընտրել այս կամ այն տիպի կին կամ տղամարդ, որից հետո սկսում են այդ սեփական նախընտրությունները տարածել նաև մյուսների վրա՝ համարելով, որ կինը պիտի լինի այսպիսին, կամ տղամարդը այնպիսին՝ առանց գիտակցելու, որ դա պարզապես իրենց նախընտրությունն է:

Մասնակիցներին հանձնարարվում է նկարագրել իրենց ընկերոջը կամ ընկերուհուն: Նրանք, ովքեր չունեն ընկերուհի կամ ընկեր, կարող են նկարագրել այն որակներն ու առանձնահատկությունները, որոնք իրենց դուր են գալիս հակառակ սեռի մեջ:

Ուսուցիչն անդրադառնում է նախորդ դասին արված վարժությանը, որտեղ աշակերտները դուրս էին բերել հատկանիշների շարքեր, որոնք իրենց կարծիքով բնորոշ էին «իսկական» տղամարդուն կամ «իսկական» կնոջը: Ցանկալի է, որ գրատախտակին կամ որևէ երևացող տեղում փակցված լինեն նախորդ օրվա արված աշխատանքները: Եթե դրանք չեն պահպանվել, ապա լավ կլինի, որ ուսուցիչը նախապես պատրաստի պաստառներ՝ «իսկական» տղամարդ, «իսկական» կին վերնագրերով:

Նկարագրություններն ավարտելուց հետո մասնակիցները կարող են մեծ խմբին պատմել իրենց նախընտրություններից, այն մասին, թե ինչն են հավանում տղայի կամ աղջկա մեջ: Խմբային քննարկում է արվում: Դրանից հետո ուսուցիչը խնդրում

է իրենց նախընտրությունները համեմատել տրված ցանկի հետ: Արտահայտվում են նրանք, ովքեր ցանկանում են:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

Նկարագրություններից հետո ուսուցիչը խմբային քննարկումը տանում է յուրաքանչյուրի նախընտրությունների տարբերությունները շեշտադրելու ուղղությամբ: Ցանկալի է, որ աշակերտները նկատեն, թե որքան տարբեր են յուրաքանչյուրի հետաքրքրությունները ու ճաշակը սեփական զուգընկերոջ ընտրության հարցում: Յուրաքանչյուր որակ կարող է ցանկալի և գրավիչ լինել մեկի համար, իսկ մյուսի համար՝ ուղղակի անտանելի և անընդունելի:

Կարելի է նաև քննարկել՝

1. Եթե ձեր սիրելին չի համապատասխանում «իսկական» տղամարդու կամ կնոջ կատարելատիպին, որ նկարագրել ենք մենք այստեղ, որևէ բան փոխվո՞ւմ է արդյոք ձեր վերաբերմունքի մեջ նրա նկատմամբ:

2. Կարո՞ղ ենք արդյոք մենք բոլորս հավանել միևնույն տիպի կամ բնավորության տեր մարդկանց:

Եթե ոչ, ապա այդ բոլոր որակները միայն կարծրատիպեր են, որոնք որևէ մեկիս չեն օգնում կառուցել մեր անձնական կյանքն ու հարաբերությունները:

ԿՈՂՄ ԵՄ, ԴԵՄ ԵՄ

ՆՊԱՏԱԿ	Մասնակիցները կվերլուծեն և կքննարկեն գենդերային կարծրատիպերը, որոնք կամա թե ակամա ազդում են նաև իրենց մտածողության և վարքի վրա:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	25 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչը գրատախտակին նախապես գրում է մի գենդերային կարծրատիպ, որն իր կարծիքով առավել տարածված է տվյալ միջավայրում և այդ երեխաների շրջանում:

Ապա հերթականությամբ նստած երեխաները պետք է ասեն իրար հաջորդող կողմ և դեմ տեսակետներ: Յուրաքանչյուրն ասում է ոչ թե իր սեփական տեսակետը, այլ այն տեսակետը, որը հերթականությամբ իրեն է հասել: Այսինքն՝ մեկն ասում է այդ կարծրատիպին կողմ տեսակետ, հաջորդն ասում է դեմ տեսակետ: Ցանկալի է վարժությունն այնքան շարունակել, մինչև բոլորն արտահայտեն և՛ կողմ, և՛ դեմ տեսակետներ:

Ցանկալի է ընտրել այնպիսի կարծրատիպ, որն առավել կիրառական է տվյալ խմբում:

Օրինակ՝

- Կանանց հիմնական պարտականությունը տնային տնտեսությունն է և երեխաների դաստիարակությունը, խնամքը:
- Դժվար գործերը կանանց համար չեն:
- Կանայք թույլ են:
- Տղամարդիկ համարձակ են:
- Կանայք չեն կարողանում կառավարել:
- Ղեկավար պաշտոնն առավել համապատասխանում է տղամարդկանց:
- Կինը պիտի լինի զուսպ, համեստ և զիջող:
- Տղամարդը պիտի լինի համառ, իր խոսքի տերը և ուժեղ:

- Կնոջը չի սազում հայհոյանքներով խոսելը:
- Ծխող կինն անբարոյական է:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Մասնակիցների հետ քննարկում է արվում մի շարք հարցերի շուրջ:
2. Ի՞նչ էին զգում, երբ հայտնում էին իրենց տեսակետին հակառակ տեսակետ:
3. Ի՞նչ եզրակացություններ արեցին քննարկումից:
4. Ի՞նչ էին զգում, երբ իրենց ընկերները հայտնում էին իր տեսակետին հակառակ տեսակետներ:
5. Փոխվե՞ց արդյոք որևէ բան իրենց տեսակետում:

ԲԱՑԱՀԱՅՏԵՆՔ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԸ

ՆՊԱՏԱԿ	Պարզել սովորողների պատկերացումները և վերաբերմունքը հասարակության մեջ կանանց և տղամարդկանց դերերի մասին, բացահայտել նրանց մոտ առկա կարծրատիպերը և քննարկել դրանց պատճառներն ու հետևանքները:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Սովորողներին բաժանել Հարցաթերթ 1-ը[10] (**Բաշխման նյութ 1**) և խնդրել, որ նրանք լրացնեն այն անկեղծ և գրավոր հակիրճ մեկնաբանեն իրենց պատասխանները, որոնք հետո առավել հանգամանալից կարող են ներկայացնել բանավոր՝ համընդհանուր քննարկման ժամանակ:

Դասարանի 4 անկյուններում դնել կամ կախել ցուցապաստառներ հետևյալ գրություններով՝

- **Կտրականապես համաձայն չեմ**
- **Համաձայն չեմ**
- **Համաձայն եմ**
- **Լիովին համաձայն եմ:**

Երբ աշակերտները վերջացնեն հարցաթերթը լրացնել, բարձրաձայն կարդալ յուրաքանչյուր հարց, պնդում, և խնդրել աշակերտներին գրավել համապատասխան անկյունը՝ ըստ իրենց նշած պատասխանների:

Հետո խնդրել, որ ամեն խմբից մեկը կամ մի քանիսը մեկնաբանեն իրենց պատասխանները. ինչո՞ւ են համաձայն կամ ինչո՞ւ համաձայն չեն այս կամ այն պնդման հետ, եթե անհրաժեշտ է, բերեն օրինակներ, փաստարկներ:

Լսել բոլորին և հատկապես ակնհայտ խտրականությանը, անհավասարությանը, բռնությանը կողմ արտահայտվող և այդպիսի վերաբերմունք ունեցողներին. օրինակ,

10 Հարցաթերթը կազմված է «Հասարակություն առանց բռնության» հասարակական կազմակերպության կողմից:

երբ աշակերտը լիովին համաձայն է, որ կան դեպքեր, երբ տղամարդն իրավունք ունի հարվածել իր կնոջը, կամ ընտանիքում կարևոր որոշումները պետք է ընդունվեն տղամարդու կողմից և այլն:

Աշակերտները կփորձեն ազդել մեկը մյուսի վրա, կլինեն աշակերտներ, որ քննարկման արդյունքում կփոխեն իրենց կարծիքը և կտեղափոխվեն այլ «անկյուն»՝ փոխելով իրենց տեսանկյունը հարցի կամ խնդրի վերաբերյալ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ մեկնաբանություններ և վերաբերմունք ունեք հարցաթերթում նկարագրված խնդիրների վերաբերյալ:
2. Ինչպե՞ս և ի՞նչ ազդեցությունների ներքո են ձևավորվում հասարակության պատկերացումները և սպասելիքները կանանց և տղամարդկանց դերերի մասին:
3. Ի՞նչ կուզեիք փոխվեր մեր հասարակության մեջ՝ կանանց և տղամարդկանց դերերի հավասարության իմաստով: Ի՞նչ հետևանքներ կունենար այն:

ՀԱՐՑԱԹԵՐԹ 1

1. **Տղաներն ավելի խելացի են, քան աղջիկները**

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

2. **Աղջիկների համար ընդունելի է զբաղվել այնպիսի սպորտաձևերով, ինչպիսին են, օրինակ, բոքսն ու ֆուտբոլը:**

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

3. **Դժվար կացության մեջ հայտնվելու դեպքում կանայք պետք է դիմեն տղամարդկանց, որպեսզի նրանք լուծեն այդ խնդիրը:**

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

4. **Տղան, ով ջղայնության պահին հարվածում է իր ընկերուհուն, ամենայն հավանականությամբ շատ է սիրում այդ աղջկան:**

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

5. **Տղամարդիկ ավելի լավ առաջնորդներ են, քան կանայք:**

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

6. Եթե զույգի միջև կա բռնություն, ապա դա այդ զույգի անձնական գործն է, և այլ մարդիկ չպետք է միջամտեն:

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

7. Աղջիկը, ով ջղայնության պահին հարվածում է իր ընկերոջը, ամենայն հավանականությամբ շատ է սիրում այդ տղային:

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

8. Ընդունելի է, եթե տղամարդն արգելում է կնոջն աշխատել:

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

9. Կան դեպքեր, երբ տղամարդը լիովին իրավունք ունի հարվածել իր կնոջը:

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

10. Ընտանիքում կարևոր որոշումները պետք է ընդունվեն տղամարդու կողմից:

Կտրականապես համաձայն չեմ	Համաձայն չեմ	Համաձայն եմ	Լիովին համաձայն եմ
☐ 1	☐ 2	☐ 3	☐ 4

Մեկնաբանություն ----------

ՄԵԿ ՕՐ ՄԵԿ ԸՆՏԱՆԻՔԻ ԿՅԱՆՔԻՑ

ՆՊԱՏԱԿ

Մասնակիցները կիմանան ներկայիս ընտանիքում առկա դերերի և դրանց ծանրաբեռնվածության չափի մասին, կքննարկեն հավասարության և արդարության հիմնախնդիրներն ընտանիքում և աշխատավայրում:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

տարրական, միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցներին տրվում են մաքուր A4 չափի թղթեր և մատիտներ: Դասարանի մեկ երրորդին հանձնարարվում է նկարել իր ընտանիքի անդամների առօրյան օրվա առաջին կեսին: Մյուս մեկ երրորդին հանձնարարվում է նկարել ընտանիքը կեսօրից հետո, իսկ հաջորդ մեկ երրորդին՝ նկարել ընտանիքը երեկոյան: Նկարելու համար տրվում է 10 րոպե ժամանակ: Նկարները ավարտելուց հետո մասնակիցները դրանք փակցնում են պատին և բոլորով մոտենում՝ տեսնելու միմյանց նկարները: Մասնակիցները և ուսուցիչը կարող են միմյանց հարցեր տալ նկարի բովանդակության, ընտանիքի անդամների, նրանց գործողությունների և նկարում պատկերված այլ բաների մասին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Նկարները դիտարկելուց հետո արվում է խմբային քննարկում:

1. Հիմնականում ինչո՞վ էին զբաղված նկարներում պատկերված մայրիկները:
2. Ի՞նչ էին անում հայրիկները:
3. Օրվա ժամերից կախված՝ կայի՞ն արդյոք տարբերություններ մայրիկների զբաղմունքների մեջ, թե՞ ոչ: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ են մայրիկները հիմնականում խո-

հանոցում և որևէ գործ անելիս, իսկ հայրիկները՝ հեռուստացույց դիտելիս կամ թերթ կարդալիս: Ո՞րն է դրա պատճառը:

4. Արդյո՞ք հավասարաչափ և արդարացի են բաշխված մեր ընտանիքներում պարտականությունները և հոգսերը:
5. Ինչպիսի՞ն կուզեիք լիներ ձեր ներկա ընտանիքը:
6. Ինչպիսի՞ դերաբաժանում կուզենայիք ունենալ ձեր ապագա ընտանիքում:
7. Ինչպիսի՞ նմանություններ և տարբերություններ տեսաք ձեր և ձեր ընկերների ընտանիքներում:
8. Ի՞նչը ձեզ զարմացրեց:
9. Ի՞նչը ձեզ դուր եկավ: Ի՞նչը դուր չեկավ:

ԻՄ ԵՐԱԶԱՆՔԻ ՏՈՒՆԸ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կհստակեցնեն իրենց գենդերային պահանջմունքները: Ավելի հստակ կպատկերացնեն գենդերային պահանջմունքները կենցաղային և գործնական մակարդակում: Հնարավորություն կունենան տեսնել հարմարավետության և ապահովության վերաբերյալ կանանց և տղամարդկանց մտածելակերպի ընդհանրությունները:
ԺԱՄԱՆԱԿ	40 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչը խումբը բաժանում է միասեռ մասնակիցներից կազմված խմբերի: Նախքան խմբային քննարկում կատարելը յուրաքանչյուր մասնակից պետք է պատկերացնի այն տունը, որտեղ նա կցանկանա ապրել: Այնուհետև պետք է համեմատի իր երազանքի տունն այն տան հետ, որտեղ ապրում է այդ պահին: Անհատական աշխատանք կատարելուց հետո փոքր խմբում յուրաքանչյուրը պատմում է իր երազանքի տան մասին: Անհատական պատմություններն ավարտելուց հետո մասնակիցները կազմում են իրենց խմբի երազանքների տունը:

Խմբերը պետք է պատրաստեն իրենց երազանքների մասին շնորհանդես (պրեզենտացիա):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Բոլոր զեկուցումներից հետո ամբողջ խմբով քննարկում են՝

1. Հարմարավետության և ապահովության իմաստով ինչպիսի՞ պահանջներ են ներկայացնում իրենց երազանքի տանն աղջիկներն ու տղաները:
2. Ի՞նչ նմանություններ ու տարբերություններ կան:
3. Ինչպե՞ս են այդ պայմաններն ազդում կանանց և տղամարդկանց, ինչպես՝ ամբողջ ընտանիքի անդամների վրա:
4. Ապահովությունն արդյո՞ք տարբեր է կանանց և տղամարդկանց պատկերացումներում:

«ՆԱՅԻՐ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ»

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կգիտակցեն գենդերային կարծրատիպերը, կհասկանան ինչպես են դրանք ազդում ընտանիքում սեռերի դերերի վրա և հստակ կտարբերեն, թե որ սեռի ներկայացուցիչներն են ավելի շատ շահագործվում և բռնության ենթարկվում:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչը մասնակիցներին բաժանում է 3 խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարում է պատրաստել դերային խաղ, որտեղ յուրաքանչյուր սեռի ներկայացուցիչ պետք է խաղա հակառակ սեռի դերը: 1-ին խումբը պետք է ներկայացնի մի իրավիճակ, որտեղ ընտանիքում և՛ տղամարդու, և՛ կնոջ բոլոր գործերը կատարում է կինը: 2-րդ խումբը կներկայացնի մի իրավիճակ, որտեղ բոլոր գործերը կատարում է տղամարդը, իսկ 3-րդ խումբը կներկայացնի մի իրավիճակ, որտեղ գործերը հավասարաչափ բաշխված են երկու սեռերի միջև:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ներկայացումներն ավարտելուց հետո խումբը քննարկում է ցուցադրվածը: Յուրաքանչյուր խմբի ներկայացումից հետո ուսուցիչը հարցնում է աշակերտներին իրենց զգացողությունների, մտքերի մասին: Քննարկում է, թե որ դեպքերն են ավելի հաճախ հանդիպում, որոնք են ավելի տարածված իրենց միջավայրում, ավելի հաճախ որ սեռի ներկայացուցիչներն են տուժում: Հնարավո՞ր է արդյոք հրաժարվել այդ գենդերային կարծրատիպերից կամ փոխել դրանք: Երեխաներին պետք է առաջարկել օրինակներ բերել նաև իրենց կյանքից, հարազատների, հարևանների կյանքից:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԴԵՐԵՐ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կհասկանան՝ արդյո՞ք հնարավոր է և թե ինչպե՞ս կարելի է փոխել գենդերային դերերը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60-90 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Դասարանը բաժանել 4 փոքր խմբերի: Յուրաքանչյուր խմբի տրվում են նախապես պատրաստված իրավիճակային քարտեր, որոնց հետ ծանոթանալու և դրանք ներկայացնելու համար խմբերին տրվում է 30 րոպե ժամանակ:

Իրավիճակների ներկայացում (30 րոպե): Յուրաքանչյուր խումբ դերային խաղի միջոցով ներկայացնում է իր իրավիճակը: Ամեն մի ցուցադրությունից հետո ամբողջ խմբով պետք է քննարկել խնդրի լուծման հնարավոր տարբերակները և գրել գրատախտակին (տե՛ս Բաշխման նյութ 2):

Բոլոր ներկայացումներից հետո պետք է քննարկել խմբի հետ, թե ինչ լրացումներ ունեն, արդյոք կան խնդրի լուծման այլ տարբերակներ ևս, եթե կան այդպիսիք, դրանք ևս ավելացնել գրատախտակին: Գրատախտակին հիմնականում պետք է գրել այն առաջարկները, որոնք թույլ են տալիս փոխել գենդերային դերերը սոցիալական միջավայրում: Հատկապես շեշտը պետք է դնել այն բանի վրա, որ գենդերային դերերը կարող են փոխվել յուրաքանչյուր միջավայրում՝ և՛ ընտանիքում, և՛ աշխատանքային գործունեության մեջ, և՛ հասարակական-քաղաքական կյանքում:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչպե՞ս կարելի է փոխել կարծրատիպերը:
2. Ի՞նչ զգացողություններ էին առաջանում ներկայացնելիս:
3. Ինչպիսի՞ վերաբերմունք ունեիք իրավիճակների նկատմամբ:
4. Փոխվե՞ց արդյոք որևէ բան ձեր վերաբերմունքում կամ պատկերացումներում:
5. Ի՞նչն օգնեց, որպեսզի փոխվի ձեր վերաբերմունքը:

ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

1-ին իրավիճակ. Տնային տնտեսություն, որտեղ կանայք չափից շատ են աշխատում, բայց նրանց աշխատանքը չի ճանաչվում և չի գնահատվում:

> **Խնդիր.** Պատրաստեք 10 րոպե տևողությամբ մի իրավիճակ, որտեղ ճանաչվում և գնահատվում է կանանց աշխատանքը:

2-րդ իրավիճակ. Հասարակություն, որտեղ կանայք ընդգրկված չեն հասարակական և/կամ քաղաքական կյանքում:

> **Խնդիր.** Պատրաստեք 10 րոպե տևողությամբ ներկայացում այն մասին՝ ինչպես կարելի է մեծացնել կանանց դերն ու մասնակցությունը հասարակական կյանքում:

3-րդ իրավիճակ. Ընտանիք, որտեղ աշխատում են և՛ ամուսինը, և՛ կինը, բայց կինը պարտավոր է կատարել նաև բոլոր տնային գործերը միայնակ:

> **Խնդիր.** Պատրաստեք 10 րոպե տևողությամբ ներկայացում ընտանեկան գործերի օպտիմալ բաշխման մասին, որպեսզի և՛ կինը, և՛ տղամարդն իրենց մասնակցությունն ունենան ընտանեկան գործերն իրականացնելիս:

4-րդ իրավիճակ. Ընտանիք, որտեղ աշխատում են և՛ կինը, և՛ ամուսինը, ընտանեկան գործերը հավասարաչափ բաշխված են իրենց մեջ, և դա երկուսին էլ հարմար է: Բայց նրանց հետ ապրում է նաև ամուսնու մայրը, ով համաձայն չէ, որ իր տղան զբաղվի տնային գործերով:

> **Խնդիր.** Պատրաստեք 10 րոպե տևողությամբ ներկայացում՝ ինչպես ամուսինները կարող են համոզել և աջակցություն ստանալ սկեսուրից:

ՖՈՐՈՒՄ ԹԱՏՐՈՆ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կպատկերեն գենդերային հավասարության/անհավասարության դեպքեր կյանքի տարբեր ոլորտներում և կքննարկեն դրանց հետևանքները հասարակության վրա:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Դասարանը բաժանել երեք խմբի և յուրաքանչյուր խմբի տալ հետևյալ առաջադրանքը:

Խումբ 1

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *հավասարությունը* **քաղաքականությունում**:

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *անհավասարությունը* **քաղաքականությունում**:

Խումբ 2

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *հավասարությունը* **աշխատաշուկայում**:

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *անհավասարությունը* **աշխատաշուկայում**:

Խումբ 3

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *հավասարությունն* **ընտանիքում**:

Թատերական խաղի միջոցով պատկերել գենդերային (կանանց և տղամարդկանց միջև) *անհավասարությունն* **ընտանիքում**:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

Ներկայացումները դիտելուց հետո ծավալել քննարկում՝ պատկերված դեպքերի ազդեցությունը և հետևանքները քաղաքականությունում, աշխատաշուկայում, ընտանիքում և հասարակության ու պետության զարգացման գործում առհասարակ:

ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

ՆՊԱՏԱԿ

Մասնակիցները կտեղեկացվեն անհավասարության և խտրականության դրսևորման ձևերի մասին, դրանց հետևանքների և պատճառների մասին: Կձևավորեն գենդերային անհավասարության նկատմամբ զգայուն վերաբերմունք:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցները բաժանվում են խմբերի: Խմբերին հանձնարարվում է մտաբերել կանանց իրավունքների ոտնահարման և անհավասար իրավունքների իրացման օրինակներ: Օրինակները մտաբերելուց հետո խմբի անդամները պիտի ընտրեն դրանց միջից մեկը, որն առավել ցայտուն է արտահայտվում կամ բացասական հետևանքներ ունի, կամ որի հետ անձամբ առնչվել են: Ընտրությունը կատարելուց հետո նրանք պարտավոր են քննարկումն անել հետևյալ սխեմայով՝

- Իրավունք
- Իրավունքի խախտման ձևը և օրինակը
- Սոցիալական նորմերը, որոնք հանդիսանում են այդ իրավունքի խախտման պատճառներից մեկը
- Հետևանքները՝ անհատական և սոցիալ-քաղաքական:

Մանրակրկիտ խմբային քննարկումից հետո յուրաքանչյուր խումբ ներկայացնում է մեծ խմբին իրենց կատարած աշխատանքը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Արդյո՞ք անհավասարությունը բնական երևույթ է:
2. Դա մշտական՞ երևույթ է, թե՞ փոխելի է:
3. Ինչպե՞ս մեզանից յուրաքանչյուրը կարող է նպաստել հավասարության հաստատմանը:
4. Կյանքի ո՞ր փուլերում են հիմնականում անհավասարություն զգում կանայք:

Նյութ ուսուցչի համար

Աշխատանքի իրավունք	
Ամուսինը սպիպում է կնոջը նստել տանը և չաշխատել:	
Հետևանքներ	**Սոցիալական նորմեր**
• Կինը չի կարողանում որոշումներ կայացնել իր կյանքի վերաբերյալ: • Կինը չի կարողանում ռեալիզացվել ընտանիքից դուրս: • Կինը կախվածություն է ձեռք բերում ամուսնուց՝ որպես հիմնական գումար հայթայթող, և եթե ամուսինը ամուսնալուծվում է, նա մնում է առանց գոյության միջոցների: • Կինը պարտավոր է կատարել ինչպես ամուսնու, այնպես էլ նրա բոլոր բարեկամների քմահաճույքները, որպեսզի չզրկվի գոյության իր միակ հնարավորությունից:	• Տղամարդիկ հասարակության առավել արժեքավոր անդամներն են և առավել կարևոր ներդրումներ են ունենում արտադրության, տնտեսության, քաղաքականության մեջ: • Կնոջ դերն է հոգ տանել երեխաների և ընտանիքի մասին, իսկ տղամարդը պիտի նրան ապահովի:

Ազատ տեղաշարժվելու իրավունք	
Տղամարդիկ (ամուսինները, հայրերն ու եղբայրները) թույլ չեն տալիս կանանց մեքենա վարել սովորել, ստանալ վարորդական իրավունք, իմաստ չեն տեսնում, որ կինը արտասահման գնա, թույլ չեն տալիս կնոջը շփվել ընկերուհիների հետ, այցելել ծնողներին կամ այլ բարեկամներին:	
Հետևանքներ	**Սոցիալական նորմեր**
• Նեղանում է հասարակական վայրեր այցելելու կանանց հնարավորությունը: • Կանայք հնարավորություն չեն ունենում ազատ տնօրինելու իրենց ժամանակը, քանի որ պիտի գնան միայն այնտեղ և այն պահին, ուր և երբ ամուսինն է ցանկանում: • Կանայք զրկված են ինքնազարգացման և հասարակական կյանքին մասնակցելու իրենց իրավունքից, քանի որ նրանք չեն կարող, եթե ցանկանան, այցելել մշակութային, կրթական կամ հասարակական միջոցառումների:	• Կնոջը պետք չէ թույլ տալ այցելել հասարակական վայրեր, քանի որ նրա տեղը տունն է: • Տղամարդիկ պիտի ավելի շարժուն լինեն, քանի որ նրանք առավել նշանակալի դեր են խաղում հասարակության մեջ: • Կանայք ֆիզիկապես ավելի թույլ են, և նրանք իրենց ավելի պաշտպանված կզգան տանը, քանի որ մեքենա վարելը նրանց ավելի խոցելի կդարձնի:

Վերարտադրողական և սեռական իրավունքներ	
• *Տղամարդիկ թույլ չեն տալիս կանանց օգտագործել բեղմնականխման միջոցներ:* • *Տղամարդիկ չեն ցանկանում օգտագործել բեղմնականխման միջոցներ:* • *Կանայք պարտավոր են սեռական մտերմություն ունենալ ամուսնու կամ զուգընկերոջ հետ՝ անկախ իրենց ցանկությունից:* • *Կնոջը արգելում են անել հղիության արհեստական ընդհատում կամ, հակառակը, ստիպում են ընդհատել հղիությունն իր կամքին հակառակ:*	
Հետևանքներ	**Սոցիալական նորմեր**
• Սեռավարակներ ունենալու առումով կանայք ենթակա են ռիսկի: • Կանայք վտանգված են սեռական բռնությունների թե՛ ընտանիքից դուրս, թե՛ ընտանիքում: • Կանայք զրկված են սեփական կյանքի վերաբերյալ ընտրության իրավունքից: • Կանայք ունենում են անցանկալի հղիություն: • Կանայք ստիպողաբար իրականացնում են հղիության արհեստական ընդհատում:	• Կնոջ գլխավոր առաքելությունն է երեխաներ ունենալ և դաստիարակել նրանց: • Կնոջ սեռականությունը երկրորդային խնդիր է, գլխավորը տղամարդուն բավարարելն է: • Կանայք չեն կարող որոշումներ կայացնել սեփական կյանքի վերաբերյալ, տղամարդն ընտանիքի աչքերն է, նա ավելի լավ գիտի, թե ինչ է պետք ընտանիքին:

Կրթություն ստանալու իրավունք	
Ծնողներն առավել նպատակահարմար են գտնում վճարել տղայի կրթության համար, քան թե աղջկա:	
Հետևանքներ	**Սոցիալական նորմեր**
• Կրճատվում են զարգանալու և տնտեսական անկախություն ունենալու կանանց հնարավորությունները: • Կանայք դառնում են տնտեսության և երկրի զարգացման համար չօգտագործվող ռեսուրսներ:	• Կինը չպիտի տնտեսապես անկախ լինի, նրան պետք չեն սեփական միջոցներ և կրթություն: • Կնոջ կրթությունը պակաս կարևոր է, քանի որ նա պետք է ամուսնանա և զբաղվի նեղ ընտանեկան գործերով: • Եթե կինը կրթություն ստանա, չի ցանկանա ամուսնանալ: • Կրթություն ունեցող տղամարդիկ ավելի շատ են վարձատրվում, քան կանայք, և դա ընդունելի է:

ԿԱՆԱՆՑ ԴՐԱԽՏԸ

ՆՊԱՏԱԿ

Գիտակցել կանանց և տղամարդկանց գենդերային անհավասարության դրսևորումներն ու ազդեցությունը կանանց կյանքի որակի վրա: Հասկանալ այդ անհավասարության արմատներն ու ազդեցությունը: Գիտելիքներ փոխանցել մարդու հիմնարար իրավունքների վերաբերյալ:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Վարողը մասնակիցներին խնդրում է բաժանվել փոքր խմբերի: Խմբերը պետք է պատկերացնեն, որ իրենք հայտնվել են երևակայական հասարակությունում՝ «կանանց դրախտում»: Խմբերից յուրաքանչյուրը փորձում է կազմել հնարավորությունների և իրավունքների ցանկ, որոնք ունեն այդ դրախտում ապրող կանայք:

Ապա խմբավարը խնդրում է մասնակիցներին յուրաքանչյուր իրավունքի համար գրել պահանջմունքներ:

Օրինակ՝

Պահանջմունք	Իրավունք
Մնունդ	Կյանքի
Գիտելիք	Որոշում կայացնելու
Առողջություն	Կարծիքի
Հագուստ	Ազատության

Ուսուցիչը կարող է ավելացնել իրավունքների ցանկը և խնդրել, որ դրանց համապատասխանող պահանջմունքները գրեն աշակերտները: Ապա ուսուցիչը մասնակիցների ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, թե որ պահանջմունքների բավարարումն է բերում իրավունքների իրացման: Ինչպես նաև ընդգծի այն հանգա-

մանքը, որ երբեմն դժվար է տարանջատել պահանջմունքը իրավունքից, օրինակ՝ կրթության իրավունքը և պահանջմունքը:

Պահանջմունքների և իրավունքների մասին քննարկումն ավարտելուց հետո ուսուցիչը խնդրում է խմբերին պատկերացնել և գրի առնել, թե ինչ է տեղի ունենում, երբ «կանանց դրախտում» հայտնվում են տղամարդիկ: Ինչպես են փոխվում այս իրավունքները, և ինչ է տեղի ունենում պահանջմունքների հետ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչպիսի՞ եզրակացություններ արվեցին վարժության ընթացքում և վերջում:
2. Ինչպե՞ս կարելի է փոխել այս իրավիճակը:
3. Հնարավո՞ր է արդյոք, որ այս դրախտը լինի հավասարապես երկուսի համար:

ԴԻՐՔԻ ԿԱՄ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՁԳՏԵԼՈՎ

ՆՊԱՏԱԿ

Հասկանալ աղջիկների դիրքը ժամանակակից հասարակության մեջ: Հասկանալ այն սոցիալական մեխանիզմները, որոնց արդյունքում հասարակությունը այդ դերը տալիս է աղջիկներին: Գտնել այն միջոցները, որոնց կիրառման արդյունքում հնարավոր կլինի բարելավել աղջիկների դիրքը հասարակության մեջ:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

60 րոպե

ՏԱՐԻՔ

ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչն աշակերտներին տալիս է հետևյալ հարցը՝

Ձեր շրջապատում ի՞նչն է աղջկան դիրք կամ կարգավիճակ տալիս:

Մասնակիցները հարցին պատասխանում են մտագրոհով: Բոլոր պատասխանները գրվում են գրատախտակին: Պատասխանները գրանցելուց հետո ուսուցիչը խնդրում է մասնակիցներին բաժանվել զույգերի, նշված պատասխաններից ընտրել 5 կարևոր գործոնները, դրանք դասավորել ըստ կարևորության:

Այնուհետև ուսուցիչը խնդրում է զույգերին համեմատել իրենց ընտրած գործոնները մեկ այլ զույգի ընտրածի հետ: Ապա կազմավորված 4 հոգանոց խմբի մասնակիցներին հանձնարարում է միացնել իրենց պատասխանները, դրանցից ընտրել 5 կարևորները և դասավորել դրանք ըստ կարևորության:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Խմբերը ներկայացնում են իրենց աշխատանքները, այնուհետև քննարկում են:

1. Կա՞ր արդյոք տարբերություն առաջին և երկրորդ թվարկումների մեջ:
2. Ինչո՞ւ եք դուք գտնում, որ տարբերություն կա:
3. Ի՞նչն ենք մենք ցանկանում փոխել աղջիկների կյանքում:

4. Ինչ կարող ենք փոխել:
5. Ինչո՞ւ են հիմնականում կանայք ենթարկվում բռնությունների:
6. Ինչ փաստաթղթեր են պաշտպանում կանանց և աղջիկներին:

Կարելի է քննարկել նաև հայ աղջիկների և այլազգի աղջիկների դիրքերի և կարգավիճակների տարբերությունները:

ԿԱՆԱՅՔ՝ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐ

ՆՊԱՏԱԿ Քննարկել կին առաջնորդների անհրաժեշտությունը, խնդիրները, դրանց պատճառներն ու հաղթահարման հնարավոր եղանակները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 60 րոպե

ՏԱՐԻՔ ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ի՞նչ է առաջնորդությունը:

Արդյո՞ք կինը պետք է լինի առաջնորդ:

Արդյո՞ք կա տարբերություն կին և տղամարդ առաջնորդների միջև:

Արդյո՞ք կինը պետք է կատարի ընտրություն առաջնորդ և ընտանիքի մայր լինելու միջև:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ո՞րն է կանանց դերն այժմ՝

- **Ընտանիքում**
- **Համայնքում**
- **Հասարակությունում**

Ո՞րը կարող է լինել կնոջ դերն ապագայում՝

- **Ընտանիքում**
- **Համայնքում**
- **Հասարակությունում**



ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 1

Մասնակիցներին բաժանել 2 խմբի: Առաջին խումբը քննարկում է, թե ինչու է անհրաժեշտ ունենալ կին առաջնորդներ, որն է կին առաջնորդների դերը: Մյուս խումբը թվում է այն հատկանիշները, գիտելիքները և կարողությունները, որոնք պետք է ունենա կին առաջնորդը: Այնուհետև խմբերը փոխանակում են հանձնարարությունները, ֆլիպչարտները ու աշխատում են մեկը մյուսի առաջադրանքը լրացնելու վրա: Վերջացնելուց հետո աշխատանքները փակցվում են պատին: Առաջին խմբի ներկայացուցիչը ներկայացնում է երկու խմբերի կողմից գրված «Ինչո՞ւ է անհրաժեշտ ունենալ կին առաջնորդներ» աշխատանքը, երկրորդ խումբը ներկայացնում է երկու խմբերի կողմից գրված «Կին առաջնորդի հատկանիշները» աշխատանքը:

Ներկայացումները և քննարկումները տևում են 10 րոպե:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ 2

Խմբերի ներսում քննարկել, իսկ այնուհետև ներկայացնել այն պատճառները, որոնք խոչընդոտում են կնոջը՝ առաջնորդ դառնալուն: Մասնակիցները պետք է նաև առաջարկեն գործող մեթոդներ և ճանապարհներ, թե ինչպես կարելի է հաղթահարել այդ խոչընդոտները: Մասնակիցները ֆլիպչարտի վրա կազմում են 2 սյունից բաղկացած աղյուսակ: Աշխատանքները փակցվում են պատին, և յուրաքանչյուր խումբ ներկայացնում է իր աշխատանքը:

Պատճառ	Հաղթահարման եղանակ
1.	
2.	
3.	

ԵՐԲ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ԵՆ ԿԱՆԱՅՔ

ՆՊԱՏԱԿ

Ներկայացնել կանանց առաջնորդության անհրաժեշտությունը, բերել վիճակագրական տվյալներ ՀՀ-ում կանանց զբաղվածության և տարբեր ոլորտներում նրանց ներգրավվածության վերաբերյալ, քննարկել կնոջ նկատելի պասիվության պատճառները և հաղթահարման հնարավոր ուղիները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

«Կին առաջնորդ», «Կինը քաղաքականության մեջ»՝ ինչպիսի՞ն է նա: Կարո՞ղ է նա լինել հաջողակ այս ոլորտում: Այս խնդիրները հաճախ են քննարկվում հասարակության մեջ: Իսկ թե ինչ են մտածում այս մասին սովորողները, կարելի է պարզել հարցաթերթիկով (Բաշխման նյութ 3), որը պետք է ստանա յուրաքանչյուրը և լրացնի ինքնուրույն՝ արտահայտելով իր կարծիքը:

Աշխատանքը ավարտելուց հետո կարդալ յուրաքանչյուր հարց, լսել աշակերտների պատասխանները և դրանց հետ կապված մեկնաբանությունները:

Այնուհետև դասարանը բաժանել 2 խմբի: Խմբերին տալ հետևյալ հանձնարարությունը.

- **1-ին խումբ** – Որո՞նք են տղամարդ քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները՝ ի՞նչ գիտելիքներ, կարողություններ պետք է ունենա տղամարդ ղեկավարը: Թվարկե՛ք և մեկնաբանեք:

- **2-րդ խումբ** – Որո՞նք են կին քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները՝ ի՞նչ գիտելիքներ, կարողություններ պետք է ունենա կին ղեկավարը: Թվարկե՛ք և մեկնաբանեք:

Խմբային աշխատանքն ավարտելուց հետո խմբերը ներկայացնում են աշխատանքի արդյունքները, մյուսները կարող են հարցեր տալ:

Հարցեր համընդհանուր քննարկման համար

1. Ի՞նչ նկատեցիք. տարբերվո՞ւմ են կին ղեկավարին և տղամարդ ղեկավարին բնորոշ և անհրաժեշտ հատկանիշները:
2. Ձեր կարծիքով՝ Հայաստանում շա՞տ են կին կառավարիչները:

Լսելով սովորողների կարծիքները և մեկնաբանությունները՝ նրանց ներկայացնել վիճակագրական մի քանի տվյալներ Հայաստանում կին կառավարիչների, իշխանություններում, քաղաքական ոլորտում նրանց ներկայացվածության մասին:

Եվ այսպես.

- աշխարհում որպես կառավարիչ աշխատող հինգ անձանցից միայն մեկն է կին:
- ՀՀ-ում գլխավոր կառավարիչներից միայն 27 %-ն է կին, մինչդեռ աշխարհում գլխավոր կառավարիչներից 21 %-ն է կին: Այս հարցում աշխարհից առաջ ենք, բայց զիջում ենք միայն Վրաստանին, որտեղ կառավարիչների 38 %-ը կանայք են:
- ՀՀ բնակչության 72 %-ն է նշել, որ կքվեարկեր կին թեկնածուի օգտին:
- ՀՀ-ում բիզնեսների միայն 9 %-ն են կառավարում կանայք:
- Բարձրագույն կրթություն ավելի շատ ունեն կանայք՝ 57:38 տոկոսային հարաբերակցությամբ:
- Գործազրկության ցուցանիշով կանայք ավելի շատ են տղամարդկանցից՝ 35%|22%: Տղամարդկանց միջին աշխատավարձը 2 անգամ ավելի բարձր է կանանց աշխատավարձից:
- Համաշխարհային տնտեսական ֆորումի համաձայն՝ գենդերային հավասարության ցուցանիշով Հայաստանը 103-րդ տեղում է 142 երկրների շարքում:

Քաղաքական ոլորտ. *Կանայք Հայաստանի իշխանություններում*

➢ ***Գործադիր իշխանություն.***

- ՀՀ Կառավառությունում 18 նախարարներից կազմված կաբինետի կազմում երեք կին նախարար կա (11 %):
- 62 փոխնախարարներից միայն 7-ն են կին (11 %):
- Կառավարությանն առընթեր 7 մարմիններից և ոչ մեկի ղեկավարը կին չէ: Նրանց տեղակալների շարքում նույնպես կանայք բացակայում են:
- Բարձրագույն պաշտոններ զբաղեցնող քաղծառայողների թվում կանայք 14 % են կազմում, թեպետ նախարարությունների աշխատակազմերում ընդգրկված կանանց թիվը միջինում 47 % է կազմում, ՀՀ Նախագահի աշխատակազմում՝ 36.6 % է, իսկ ՀՀ Կառավարության աշխատակազմում 46 % է:

➢ ***ՀՀ դատական համակարգ.***

Համակարգում կին դատավորների թիվը 22 % է:

➢ ***Օրենսդիր իշխանություն.***

Կանանց ներկայացվածությունը Ազգային ժողովում 10.7 % է:

➢ ***ՀՀ Արտակարգ և լիազոր դեսպաններ.***

Հայաստանը արտերկրում ներկայացնող 40 դեսպանների թվում միայն երեք կին կա:

➢ ***ՀՀ Տարածքային կառավարման համակարգ.***

Մարզպետների թվում կին չկա, փոխմարզպետների պաշտոնում կա երկու կին:

➢ ***Տեղական ինքնակառավարման մարմիններ.***

Հայաստանում ոչ մի անգամ կին քաղաքապետ չի եղել: Հանրապետության 866 գյուղական համայնքներից միայն 19-ն են ղեկավարում կանայք (2.2 %): Հայաստանի առնվազն երկու մարզում՝ Արագածոտնում և Վայոց ձորում, ընդհանրապես կին գյուղապետեր չկան:

Ավագանիների կազմում կանայք 8.2 % են կազմում, հանրապետության համայնքների մոտ 42 %-ում ավագանիների կազմում կանայք ընդգրկված չեն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝

1. Ինչո՞ւ են կանայք առավել քիչ ներգրավված քաղաքականության մեջ, բարձրաստիճան պաշտոններում:
2. Որո՞նք են դրանց պատճառները: Ապագայում կփոխվի՞ արդյոք պատկերը:
3. Ինչո՞ւ: Ի՞նչ լուծումներ կառաջարկեք դուք:

ՀԱՐՑԱԹԵՐԹ 2

1. Կարծում եք՝ կին քաղաքական գործիչները մեր հասարակությունում.
   ա/ շատ են
   բ/ քիչ են
   գ/ չգիտեմ:

2. Նրանցից ո՞ւմ եք ճանաչում: Թվարկեք:

3. Հնարավոր համարո՞ւմ եք, որ ՀՀ նախագահի պաշտոնում կընտրվի կին թեկնածու.
   ա/ այո
   բ/ ոչ
   գ/ չեմ մտածել այդ մասին:

4. Ձեր կարծիքով՝ որո՞նք են կին քաղաքական գործչին բնորոշ հատկանիշները: Թվարկեք:

5. Ձեր համայնքում տեղական ընտրություններում մասնակցում է 2 թեկնածու՝ կին և տղամարդ, ո՞ւմ կտաք Ձեր ձայնը.
   ա/ կնոջը
   բ/ տղամարդուն
   գ/ ինձ համար միևնույնն է:

6. Ձեր կարծիքով՝ ո՞ւմ են ավելի շատ հատուկ կառավարման հմտությունները.
   ա/ կնոջը
   բ/ տղամարդուն
   գ/ դա սեռով պայմանավորված չէ:

7. Բարձրաստիճան պաշտոնները պետք է վստահվեն միայն տղամարդկանց.
   ա/ համաձայն եմ
   բ/ համաձայն չեմ
   գ/ դժվարանում եմ պատասխանել:

ՊԱՏՄԱԿԱՆ ԷՔՍԿՈՒՐՍ

ՆՊԱՏԱԿ	Պատմական ակնարկով ներկայացնել հայ կնոջ դերը հասարակական, քաղաքական, մշակութային կյանքում՝ հնագույն ժամանակներից մինչև խորհրդային ժամանակաշրջան և մեր օրերը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	60 րոպե
ՏԱՐԻՔ	միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցչի ներածական խոսք

Պատմության վերլուծությունը ցույց է տալիս, որ հայ կինը մասնակցել է երկրի քաղաքական և մշակութային մի շարք միջոցառումների, եկեղեցիների և տաճարների կառուցմանը, ավելին՝ հովանավորել է նման կառույցների շինարարությունը: Պատմական մի շարք փաստեր ցույց են տալիս, որ հայուհիները մասնակցել են ազգային ազատագրական մարտերի: Օրինակ, ֆիդայական շարժման ակտիվ մասնակիցներից և ազատագրական պայքարի խորհրդանիշներից է Սոսե մայրիկը: Մեծ է եղել հայ կանանց մասնակցությունը նաև Հայրենական պատերազմին, որի ընթացքում, ըստ պաշտոնական տվյալների, մասնակցել է մոտ 10 հազար հայ կին: Արցախյան պատերազմում տղամարդկանց հետ մարտնչել են 600 հայ կին, ովքեր չեն զիջել ոչ միայն մարտական ոգով, այլ նաև աչքի են ընկել իրենց ռազմավարական գաղափարներով:

Մշակութային ասպարեզում ևս կանայք ունեցել են էական ազդեցություն: Այսպես, հայ կանայք, ի հակադրություն տարածաշրջանում տարածված այն սովորույթի, որ կանայք թատրոնում դերերով հանդես գալու իրավունք չեն ունեցել, 19-րդ դարի 60-ականներին ոչ միայն հանդես են եկել դերերով, այլ նաև խաղացել են տղամարդու դերեր. այդպիսի հանրաճանաչ դերասանուհի է Սիրանույշը, ով հայտնի է որպես Համլետի լավագույն դերակատարներից մեկը:

Դասարանը բաժանել 4 խմբի, յուրաքանչյուր խմբին տալ համապատասխանաբար Բաշխման նյութ 4, 5, 6, 7 թերթիկները և հանձնարարել, որ խումբը միասին կարդա, քննարկի և յուրացնի նյութն այնպես, որ հետո խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա այն ներկայացնել «նոր խմբում»:

Նյութը յուրացնելուց հետո յուրաքանչյուր խմբից 1-ական մասնակիցներով ձևավորել «նոր»՝ 4 հոգանոց խմբեր: Նոր խմբերում յուրաքանչյուր սովորող պետք է ներկայացնի իր ուսումնասիրած նյութը և լսի խմբի մյուս 3 անդամների ներկայացումները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչ նոր բան սովորեցիք:
2. Ինչ եք անցել և գիտեք հայոց պատմության, հայ գրականության, հասարակագիտության դասընթացից և կարող եք ավելացնել բերված նյութերին:
3. Ինչ ազդեցություն ունեցավ պատմական էքսկուրսը, ինչը փոխվեց ձեր պատկերացումներում կյանքի տարբեր ոլորտներում կանանց դերի, նշանակության վերաբերյալ:

Խումբ 1

Հարկ է նշել, որ հայ կինը, ի տարբերություն աշխարհի տարբեր երկրներում բնակվող կանանց, դեռևս հնագույն ժամանակներից կարևոր դերակատարություն է ունեցել հասարակությունում: Այսպես, օրինակ, Մխիթար Գոշը իր «Դատաստանագրքում» մեջբերել է մի քանի կետեր, որոնք առնչվել են կանանց իրավունքներին: Այն ներառում է դրույթներ ընտանեկան բռնության մասին, կանոններ բռնի ամուսնությունների դեմ, քաջալերում սեփականության հավասար բաժանումը և քրեական տուգանքների հարկադրումը՝ կանանց դեմ բռնություն գործադրողների նկատմամբ:

12-րդ դարի մեկ այլ հայտնի մտածող Սմբատ Սպարապետն իր «Դատաստանագիրք» աշխատությունում ևս անդրադարձ է կատարել կանանց իրավունքներին և նշել, որ բռնաբարությունն ամենադաժան հանցագործություններից է, և այն պետք է պատժել կա՛մ ցմահ ազատազրկմամբ, կա՛մ գնդակահարությամբ:

«Սասնա ծռեր» դյուցազնավեպը հայ կնոջ կերպարի արժևորման ամենավառ և գեղեցիկ օրինակներից է: Էպոսը հստակ արտացոլում է այն գաղափարը, որ տղամարդը մենիշխան չէ, իսկ կին հերոսները նույնքան խիզախ ու քաջ են, որքան տղամարդ հերոսները: Հայ կինը էպոսում որոշում կայացնողի դեր ունի:

Ի տարբերություն արևելքի ժողովուրդների, որոնց էպոսներում ու վիպերգերում տղամարդն է համարվում սերնդաստեղծ, կինն էլ՝ իրավազուրկ, հայ ժողովրդի մոտ ճիշտ հակառակն է. սերնդաստեղծը կինն է՝ հանձին Ծովինարի, ով իր իմաստությամբ երբեք չի զիջել տղամարդուն:

Էպոսի խրոխտ կանանցից մյուսը՝ Քառսուն Ճուղ Ծամ Դեղձուն Ծամը, աչքի է ընկնում իր մեծ կամքով ու ազատամտությամբ: Դրա վառ ապացույցն այն է, որ, ի տարբերություն արևելքում տարածված ավանդության, ըստ որի տղամարդն է ընտրում իր կին ուղեկցին, մեր էպոսում Դեղձուն Ծամն ինքն է ընտրում իր ապագա ամուսնուն:

Հզորության և քաջության մարմնավորում են նաև մյուս կին կերպարները՝ Արմաղանը, Խանդութը և Գոհարը:

Ամփոփելով «Սասնա ծռեր» էպոսում կնոջ դերն ու նշանակությունը՝ կարող ենք հստակ ասել, որ հայ կինն ի դեմս մեր ազգային էպոսի՝ հպարտության, քաջության, կամքի ուժի, իմաստության, ազնվատոհմիկության մարմնացումն է: Էպոսի լեզվով ասած՝ «Առյուծն առյուծ է՝ էղնի էգ, թե որձ»:

Խումբ 2

Հայոց թագուհիները, ընդհանրապես հայ բարձրաստիճան կանայք՝ լինեն արքայամայր, արքայադուստր կամ իշխանուհի, իրենց հավաքական կերպարով դարեր շարունակ մարմնավորել են հայ ոգին, և դա հայկականության ամենաբնորոշ գծերից մեկն է: Հայոց պատմության մեջ թագուհիները եղել են երկրի կառավարման բարձր աստիճանում և թագավորների հետ հավասարապես կիսել իշխանության պատասխանատվությունը: Պատմագրությունից անվանապես մեզ հայտնի են 65 թագուհիների անուններ (ունեցել ենք 150 թագուհի), և հիմնականում բոլորն էլ զբաղվել են բարեգործությամբ՝ կառուցել տաճարներ, դպրոցներ, հիվանդանոցներ, պատվիրել մատյաններ: Ասվածի վկայությունը հայոց թագավորների հատած այն դրամներն են, որոնց երեսին պատկերված են իրենք, իսկ հակառակ երեսին՝ թագուհիները: Այդպիսին են, օրինակ, Տիգրան Դ-ի հատած երկու դրամները՝ Տիգրան Դ-ի և իր քույր Էրատոյի (մ.թ.ա. I դար) պատկերներով:

Փառանձեմ թագուհին (IV դար) ամուսնու՝ Արշակ Բ-ի ձերբակալվելուց հետո Հայաստան ներխուժած պարսկական զորքի դեմն առնելու համար իր ձեռքն է վերցնում երկրի կառավարումը, զորք հավաքում և հմտորեն կազմակերպում դիմակայությունը օտար զավթիչների դեմ: **Զարմանուհին**՝ (XIV դար) Կիլիկյան Հայաստանի Ռուբինյան Հեթում սպարապետի կինը, Կիլիկյան Հայաստանի անկումից հետո կորցնելով ամուսնուն, իր որդի Գևորգի և 300 խիզախ զորականների հետ անցնում է լեռներն ու ոչ միայն հաջողությամբ պաշտպանվում թշնամու հարձակումներից, այլև գրավում Կապան բերդը, այնուհետև՝ Կոկիսոն ամրոցը՝ այն դարձնելով անառիկ: Ստացվում է այնպես, որ Կիլիկյան Հայաստանի անկումից հետո լեռներում՝ մի փոքրիկ հողակտորի վրա, ավելի քան վեց տասնամյակ շարունակում է գոյատևել հայկական մի ուրույն պետականություն, որի գլուխ կանգնած էր քաջարի հայ կինը՝ Զարմանուհին:

Վ. Սուրենյանց. «Զապել թագուհու վերադարձը գահին», 1909 թ. կտավ

Զապել թագուհին (XIII դար)՝ Լևոն (Ռուբինյան) թագավորի դուստրը, հմուտ է եղել կրթության և գիտության մեջ, մայրաքաղաք Սիսում կառուցել Կաթողիկե և Սուրբ Մարինե եկեղեցիները, կատարել բազմաթիվ այլ հիշարժան գործեր: Թագուհու ամենամեծ գործը, սակայն, երկրում առողջապահության կազմակերպումն ու կառավարումն էր: Նա սահմանեց բժիշկների խրախուսման և հովանավորման կարգ, արեց այնպես, որ երկրում օրենսդրորեն ընդունվեն հիվանդությունների և համաճարակների կանխման, առողջապահության դրվածքի բարելավման հատուկ կանոններ, որոնց պահպանումը նրա մշտական հսկողության տակ էր:

Խումբ 3

19-րդ դարի վերջում Կոստանդնուպոլսում հասարակական ակտիվ գործունեություն ծավալող կանանցից շատ հայտնի էին երկուսը՝ **Սրբուհի Տյուսաբը (Վահանյան) և Զապել Ասատուրը**: Հենց նրանք էլ կազմեցին «Կանանց իրավունքների հռչակագրի» նախագիծը: **Հռչակագրի դրույթները հետևյալն էին՝**

- Հավասար իրավունքներ տղամարդկանց և կանանց համար
- Մասնագիտության ընտրության իրավունք
- Երկակի բարոյախոսության ստանդարտների վերացում, որոնցից ամուսնական կյանքում օգտվում են տղամարդիկ
- Բարձրագույն կրթություն ստանալու իրավունք՝ որպես երեխայի դաստիարակության բարելավման միջոց
- Համայնքի գործունեության մեջ կանանց հավասար մասնակցության իրավունք
- Օժիտի սովորույթի վերացում
- Ազգի պահպանման և նրա մշակույթի փոխանցման մեջ կնոջ դերի ընդունում:

Այս հռչակագիրը, ըստ էության, կնոջ ֆինանսական ինքնուրույնության ապահովման գաղափարախոսությունն էր կրում: Մուսուլմանական Թուրքիայում նման հռչակագրի ի հայտ գալը հեղափոխական մտքի արգասիք էր: Կարելի է ասել՝ առավելապես մուսուլմաններով բնակեցված Արևելքում հայությունն առաջինն էր, որ գիտակցաբար բարձրացրեց կնոջ դերը հանրային-հասարակական կյանքում: Աղբյուրները վկայում են, որ թեև հռչակագիրը որևէ կազմակերպության կողմից չի վավերացվել, սակայն հայ կանանցից շատերը իսկապես սկսել են ակտիվ տնտեսական ու հասարակական գործունեություն իրականացնել՝ բացելով արհեստանոցներ, աշխատեցնելով ֆաբրիկաներ, խմբագրելով գրական հանդեսներ:

Սրբուհի Տյուսաբ (1848-1901)

Սրբուհի Տյուսաբը (Վահանյան) (1848-1901) արևմտահայ գրող, բանաստեղծ, մանկավարժ, հրապարակախոս և հասարակական գործիչ էր: Հայ առաջին կին վիպասանն ու կնոջ դերը հայ իրականության մեջ որպես խնդիր առաջինը դիտարկողն ու քննադատողը Սրբուհի Տյուսաբն էր: Իր վեպերի միջոցով նա բարձրաձայնեց կանանց ազատագրության, ընտրելու իրավունքի և սեփական ճակատագիրը՝ անկախ սեռից տնօրինելու իրավունքի մասին հարցը: Իր գրական աշ-

խատանքների և ելույթների միջոցով նա ազդեցություն ունեցավ հայ հասարակության կին գրողների ողջ նոր սերնդի վրա:

Սրբուհի Տյուսաբը նորաձևության թելադրողն էր: Նա ֆեմինիստ էր և առաջին հայ կինը, ով վեպ տպագրեց (1883 թ.): Նրա ստեղծագործությունը մեծ ազդեցություն ունեցավ կանանց վրա, ովքեր հետևեցին նրան: Սիպիլն ու Զապել Եսայանը ուղղություն և ներշնչանք ստացան նրանից:

Զապել Ասատուր (Սիպիլ) (1863-1934)

Զապել Խանջյան-Ասատուրը (գրական կեղծանունը՝ Սիպիլ) (1863-1934) ծնվել է 1863 թ.-ի հոկտեմբերի 1-ին Կոստանդնուպոլսում: Գրող, մանկավարժ, հրապարակախոս և հասարակական գործիչ Սիպիլը այն սակավաթիվ կանանցից է, ով իր կենդանության օրոք գնահատվեց ըստ արժանվույն: Ժամանակակիցները գովաբանում էին նրա գրական տաղանդը, ստեղծագործություններն ընդգրկվում էին դասագրքերում, թարգմանվում այլ լեզուներով, նրա հասցեին ջերմ տողեր էին շռայլում թե՛ արևմտահայ և թե՛ արևելահայ մտավորականության ներկայացուցիչները: 1933 թ.-ին Պոլսում, Կահիրեում ու Ալեքսանդրիայում, Փարիզում ու Ֆիլիպեում (Պլովդիվ) մեծ շուքով տոնվեց նրա 70-ամյա հոբելյանը: Մեկ տարի անց նա վախճանվեց, սակայն կանանց ողջ սերնդի հիշողության մեջ նա մնաց որպես չգերազանցված իդեալ՝ անսահման հմայիչ, նրբաճաշակ, անթերի խոսքով, ազնիվ, վեհանձն և զարմանալիորեն տաղանդավոր Սիպիլ:

Խումբ 4

Մեզնից շատ քչերը տեղեկություններ ունեն հայտնի, ազգությամբ հայ կին գիտնականների, հրապարակախոսների, գրողների մասին, ինչպիսիք են Աննա Կազանջիանը, Ելիզավետա Շահխաթունին, Սրբուհի Տյուսաբը, Զապել Եսայանը և այլ կանայք, ովքեր էական ազդեցություն են ունեցել հասարակական կյանքում և իրենց կարևոր հետքն են թողել պատմության մեջ:

Ստորև ներկայացված են այդ կանանցից մի քանիսը:

Ելիզավետա Շահխաթունին (1911-2011 թթ.) ԽՍՀՄ միակ կին ավիակոնստրուկտորն էր և ստեղծել էր ինքնաթիռների ամրության ամենամեծ լաբորատորիան Եվրոպայում: Ունի բազմաթիվ գիտական աշխատանքներ, հեղինակել է ինքնաթիռների կոնստրուկցիայի եռակցման-սոսնձման գյուտը:

Աննա Կազանջիան Լոնգոբարդոն (ծնվ. 1928թ.) եղել է առաջին կինը Քոլումբիա համալսարանում, ով արժանացել է ճարտարագետի դոկտորի աստիճանի: Ստեղծել է ռազմական հրթիռի կառավարման նոր համակարգ, որը լայնորեն կիրառվել է տիեզերանավերի և արբանյակների թռիչքային ծրագրերում:

Հայազգի ծաղկաբույծ **Ագնես Ջոակիմը (Աշխեն Հովակիմյան)** (1854-1899 թթ.) հայտնաբերել է «Վանդա Միսս Ջոակիմ» անունը կրող խոլորձի տեսակը, որը հայտնի է նաև որպես «Սինգապուրյան խոլորձ» կամ «Ալոհա արքայադստեր խոլորձ», հիբրիդային տեսակ, որը դարձել է Սինգապուրի ազգային ծաղիկը և պետական խորհրդանիշը:

Անիտա Կոնտին, ի ծնե՝ **Կարագոշյան,** (1899-1997 թթ.) ազգությամբ հայ, ֆրանսիացի բնախույզ է, լուսանկարիչ և աշխարհում առաջին կին օվկիանոսագետը:

Սփյուռքահայ անվանի գիտնականների մեջ առանձնանում է մեքսիկացի կին աստղագետ **Փարիզ Փիշմիշը** (1911-1999 թթ.): Նա առաջին կին աստղագետներից էր, ով ոչ միայն հասավ գիտական մեծ հաջողությունների, այլև խթանեց կին աստղագետների հետագա ակտիվությունը և մեծ դեր խաղաց ամբողջ մեքսիկական աստղագիտության զարգացման մեջ:

Գրական-հասարակական առումով աշխույժ ու եռանդալից կյանքով ապրեց արձակագիր, մշակութային գործիչ, ֆրանսերենից հայերեն և հայերենից ֆրանսերեն գեղարվեստական ստեղծագործությունների թարգմանիչ **Զապել Եսայանը** (1878-1943 թթ.): Եսայանը հրատարակել է հոդվածներ՝ նվիրված գրականության ու արվեստի հարցերին, կատարել թարգմանություններ: Նա հայ ամենաբեղմնավոր և միաժամանակ ամենաինքնատիպ գրողներից է: Գրական ասպարեզ մտնելով 1890-ական թթ.-ին, ավելի քան 40 տարի հայ գրականության և հրապարակագրության մեջ լինե-

լով ճանաչված ու սիրված անուն՝ հրատարակել է բազմաթիվ վեպեր, վիպակներ ու պատմվածքներ:

1918-1920-ական թվականներին՝ Առաջին հանրապետության գոյության տարիներին, հայ կինը իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին, մինչդեռ Եվրոպայի կեսից ավելի երկրներում կանայք ընտրական իրավունք չունեին: Հայաստանի առաջին հանրապետությունում բոլորն ունեին ընտրվելու իրավունք[11], նույն ժամանակահատվածում աշխարհի տարբեր անկյուններում կանայք դեռ բարձրաձայնում էին իրենց ընտրելու իրավունք ունենալու մասին:

Ավելին, Հայաստանի առաջին հանրապետության Ազգային ժողովում 3 կին պատգամավորներ են ընտրվել (**Կատարինե Զալյան-Մանուկյանը, Վարվառա Սահակյանը, Պերճուհի Պարտիզպանյան-Բարսեղյանը**): Բացի այդ, այս ընթացքում աշխարհում առաջին անգամ կին դեսպան է ընտրվել գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ Դիանա Աբգարը (1859-1937 թթ.): 1920 թ.-ին նա նշանակվել է Հայաստանի առաջին հանրապետության դեսպան Ճապոնիայում և Հեռավոր Արևելքում:

Խորհրդային Հայաստանում շարունակում էր մնալ գործունյա հայ կնոջ կերպարը, ով ակտիվ էր ինչպես քաղաքական գործունեության, այնպես էլ աշխատանքային գործունեության մեջ: Կոմունիստական կուսակցությունը կանանց փորձում էր ակտիվորեն ներառել ճորտատիրական ու բուրժուական սովորույթներն ու ավանդույթները կործանելու հարցում: Որոշ կանայք ղեկավար դիրքեր զբաղեցրեցին խոշոր ձեռնարկություններում՝ հատկապես թեթև և սննդի արդյունաբերության, առևտրի ոլորտներում: Սրանք այն ոլորտներն էին, որտեղ կանացի աշխատուժը մեծ տեսակարար կշիռ էր կազմում: Այսինքն՝ կանանց տնտեսական դերի ակտիվացումը տեղի էր ունենում կանանց աշխատուժն ավելի արդյունավետ կառավարելու նպատակով:

Կանանց իրավահավասարությունը շեշտելու համար ԽՍՀՄ-ում մեծ շուքով նշում էին Կանանց միջազգային օրը՝ մարտի 8-ը: 1965 թ.-ից մարտի 8-ը ոչ աշխատանքային օր հռչակվեց ԽՍՀՄ-ում, որին հետևեցին նաև մի քանի այլ սոցիալիստական երկրներ:

Սակայն քաղաքական կյանքում կանանց դերակատարումը ձևական բնույթ էր կրում: Կոմունիստական կուսակցության վերնախավում երբեք կանայք չեն եղել, իսկ խորհրդարանում նրանց մասնակցությունը ձևական էր: Անկախացման նախաշեմին ՀԽՍՀ առաջին գումարման Գերագույն խորհուրդը 1990 թ.-ին ուներ 260 պատգամավոր, որոնցից միայն 11-ն էին կանայք:

11 Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Հայոց պատմություն 11-րդ դաս., էջ 186: Կապուղի՝ http://bit.ly/1gExDPi

ՄԻ՛ ՎԱԽԵՑԻՐ ՀԱՎԱԿՆՈՏ ԹՎԱԼՈՒՑ

ՆՊԱՏԱԿ	Քննարկել գրող, թարգմանիչ ու հրապարակախոս Զապել Եսայանի՝ իր դստերն ուղղված նամակը, որն ունի դաստիարակչական ներուժ և կարևոր ուղերձներ:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Կարճ դասախոսություն «Ֆեմինիզմի գաղափարախոսությունը և ֆեմինիզմը Հայաստանում» վերնագրով[12]: Առավել մանրամասն խոսել գրող-հրապարակախոս Զապել Եսայանի մասին՝ շեշտադրելով նրա հասարակական գործունեության նշանակալի կողմերը:

Այնուհետև աշակերտներին բաժանել Զապել Եսայանի նամակը՝ ուղղված իր դստերը՝ Սոֆի Եսայանին, և քննարկել այն (տե՛ս Բաշխման նյութ 8):

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ զգացումներ ունեցաք նամակը ընթերցելիս:
2. Ի՞նչ կարևոր ուղերձներ էր հղում Զապել Եսայանը իր դստերը:
3. Արդյո՞ք այդ ուղերձներն այսօր ևս արդիական են:
4. Ինչպե՞ս կվերնագրեիք նամակը:
5. Հինգ բառով բնութագրեք նամակը/ դրա բովանդակությունը:
6. Եթե նամակը ձեզ ուղղված լիներ, կհետևեի՞ք խորհուրդներին:

---

12 Դասախոսության համար օգտվել ձեռնարկի տեսական մասի համանուն վերնագրով նյութերից, (տե՛ս էջ 29) իսկ Զապել Եսայանի կյանքի և գործունեության մասին առավել մանրամասն և ուշագրավ նյութեր կարող եք փնտրել համացանցում:

1914, մարտի 20, Սկյուտար

Շատ սիրելի աղջիկս,

Դու արդեն փոքրիկ օրիորդ ես հիմա: Դարձել ես տասնչորս տարեկան:

Սիրելի Սոֆի, որքա՜ն կուզենայի լինել քո մոտ՝ Փարիզում, և գրկելով շնորհավորել ծննդյանդ տարեդարձը: Բայց ես Բատիին[13] գրել եմ իմ ուշացման պատճառը, և քեզ կբացատրի, թե ինչու մի քանի շաբաթ հետո եմ գալու: Այդ հետաձգումը առավելապես քո օգտի համար է, թեև իմ աչքում ամենակարևորն այն է, որ հնարավորինս շուտ միանամ քեզ: Համենայնդեպս, լավ է այն, ինչ վերջանում է բարեհաջող: Ես ամեն ջանք գործադրում եմ, որպեսզի քո ապագան ապահովված լինի, և դու կարողանաս հետևել այն ասպարեզին, որ ընտրելու ես ըստ քո սեփական հակումների:

Սիրելի աղջիկս, մենք շուտով միասին կլինենք և կխոսենք այս ամենի մասին: Այնուամենայնիվ, ուզում եմ քեզ նախօրոք ասեմ, որ առաջին հերթին պետք է սարսափել միջակությունից, այսինքն՝ անգույն ու նվաստ դիրքից: Հայտնի մարդ դառնալ, անշնական արժանիքներ ցուցաբերել, բարձր նպատակի ծառայել. ահա սրանք պետք է լինեն քո չգտումները: Ինչ նշանակություն ունի երջանիկ կամ ապերջանիկ լինելը: Ամենադժբախտ մարդը նա է, ով վարում է միջակ ու անօգուտ կյանք, ներքուստ ափսոսալով, որ վրիպել է իր կոչումից: Մի՛ վախեցիր հավակնոտ թվալուց: Վեհ իդեալների չգտողը չի կարող համեստ մնալ, հեզ ու խոնարհ ապրել: Հարկավոր է, որ հիմիկվանից որոնես քո ուղին, և այն գտնելուց հետո անշեղ քայլես դեպի նպատակակետը՝ ուշադրություն չդարձնելով այն խորհուրդներին, որոնցով «գործնական» մարդիկ կփորձեն խափանել ճանապարհդ:

Դու խելացի ես, հոգով ու մարմնով առողջ: Եվ դու պատկանում ես մի ժողովրդի, որը, քանակապես փոքր լինելով հանդերձ, մեծ է իր տառապանքներով, մաքառումներով, հույսերով: Դու կոչված ես մասնակցելու նրա պայքարին, նրա իդեալների իրականացման գործին: Քո ժողովրդի և քո ծագման բերումով դու կոչված ես մեծ դեր խաղալու քո երկրում, որտեղ հարկավոր է ոչ միայն աշխատել, այլև կազմակերպել կյանքը, նույնիսկ ստեղծել այն: Կարելի՞ է պատկերացնել դրանից ավելի հետաքրքրական ու գեղեցիկ ասպարեզ:

13 Զապել Եսայանի փոքր քույրը:

Սիրելի Սոֆի,քո դպրոցական ընկերուհիները անկասկած կընկրեն հարմարավետ ասպարեզներ: Եվ ճիշտ կանեն: Որովհետև նրանք ունեն միայն մեկ մտահոգություն. դառնալ լավ քաղաքացիներ, և հետևաբար՝ ընտանիքի լավ մայրեր: Այնինչ դու պարտավոր ես հայացքդ բարձրացնել ավելի վեր, պարտավոր ես միտքդ լարել պիտանի և լայնարձակ մի գործողություն ընդգրկելու համար: Դու պետք է արժանի դառնաս քո ճակատագրին, որը վսեմ է և փառաշուք:

Թե ինչ ճանապարհով ես հասնելու քո ճակատագրին, դա ինքդ պետք է որոշես: Բոլոր ճանապարհներն էլ լավ են, և «բոլոր ճանապարհները դեպի Հռոմ կտանեն», փվյալ դեպքում՝ դեպի գերագույն նպատակը: Ես հուսով եմ, որ քո ունակությունների և կամքի մասին իմ կարծիքը ամենևին էլ չափազանցված չէ և համընկնում է քո ցգտումներին:

Ես, մայրիկը և Հրանտը նորից ու նորից համբուրում ենք քեզ: Բոլորս էլ հուսով ենք, սիրելի Սոֆի, որ շուտով կհանդիպենք:

Քեզ տեսնել տենչացող մայրդ՝

Զապել

Հ.Գ. Քո ծննդյան տարեդարձի առթիվ ուղարկում եմ մի նվեր, որը հաճելի անակնկալ կլինի: Բայց այն չեռքդ կհասնի մի քանի օրից:

ՄԵԿ ՕՐ ԱՌԱՆՑ ԿՆՈՋ/ ՄԵԿ ՕՐ ԱՌԱՆՑ ՏՂԱՄԱՐԴՈՒ

ՆՊԱՏԱԿ	Քննարկել, թե ինչ կպատահի, եթե կանայք կամ տղամարդիկ 1 օրով «բացակայեն երկրից»:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Հարց աշակերտներին

Հարց 1

Մտածեք՝ ինչ կպատահի, եթե կանայք 1 օրով անհետանան երկրից:

- Ինչը և ինչպես կփոխվի կյանքում, ինչ հետևանքների կբերի այդ սեռի 1 օրով վերացումը:
- Սովորողների պատասխանները գրառել գրատախտակին:

Առավել բարձր դասարանցիների համար կարելի է հարցը կոնկրետացնել. ինչ կպատահի ընտանիքներում, կրթության, առողջապահության, գյուղատնտեսության, քաղաքականության և այլ ոլորտներում:

Հայաստանը 1 օր առանց կանանց՝ հնարավոր պատասխաններ

Ընտանիքները՝ հատկապես երեխաները, կզրկվեն խնամքից, դպրոցները, հիվանդանոցները, գրադարանները կփակվեն, որովհետև աշխատակիցների 80 տոկոս և ավելին կանայք են: Սրանք ընդամենը օրինակներ են, սովորողները կարող են շատ այլ հետաքրքիր փաստեր բերել և դրանից բխող հետևանքների մասին խոսել:

Հարց 2

- Ի՞նչ կպատահի, եթե տղամարդիկ 1 օրով անհետանան:
- Ի՞նչը և ինչպե՞ս կփոխվի կյանքում, ինչ հետևանքների կբերի այդ սեռի 1 օրով վերացումը:
- Սովորողների պատասխանները գրառել գրատախտակին:

Հայաստանը 1 օր առանց տղամարդկանց՝ հնարավոր պատասխաններ

Չի գործի տրանսպորտը, կդադարի շինարարությունը և հանքարդյունաբերությունը, Հայաստանը չի ունենա նախագահ, բոլոր քաղաքները կմնան առանց քաղաքապետ և այլն:

Հնարավորության դեպքում ցուցադրել համանուն վերնագրերով 2 տեսանյութերը[14]: Չնայած այնտեղ բերված թվերը միգուցե ժամանակի ընթացքում թարմացման կարիք ունենան, բայց կարևորը թվերը չեն, այլ ընդհանուր պատկերը, որ կա Հայաստանում կանանց և տղամարդկանց զբաղվածության և տարբեր ոլորտներում նրանց ներգրավվածության տեսանկյունից: Սովորողների հետ քննարկեք տեսանյութում ակնհայտ երևացող խնդիրները կանանց և տղամարդկանց անհամաչափ ներգրավվածության մասին կյանքի տարբեր ոլորտներում:

14 Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց կանանց».
Կապուղի՝ http://bit.ly/1L6gq01
Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց տղամարդկանց».
Կապուղի՝ http://bit.ly/1kQFuPs

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՆՊԱՏԱԿ

Ներկայացնել կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման համար միջազգային և տեղական կարևոր փաստաթղթերը, օգնել հասկանալու դրանց անհրաժեշտությունը և հնարավորություն տալ քննարկելու որոշ կարևորագույն հոդվածներ այդ փաստաթղթերից:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Կարճ ներածական խոսքով ներկայացնել կանանց և տղամարդկանց հավասարության ապահովման համար միջազգային և տեղական հիմնական փաստաթղթերը, դրանց կարևորությունն ու անհրաժեշտությունը[15]:

Այնուհետև աշակերտներին ասել, որ նրանց կտրվի հնարավորություն այդ փաստաթղթերի մի քանի կարևոր հոդվածների հետ ծանոթանալ և քննարկել: Այդ նպատակով դասարանը բաժանել 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի տալ մեկ քարտ (տե՛ս Բաշխման նյութ 9), որում նշված է խմբի առաջադրանքը: Քարտերը բաժանելուց հետո մոտենալ խմբերին և, եթե անհարժեշտ է, մի անգամ ևս պարզաբանել աշխատանքը:

Խմբային քննարկումներից հետո խմբերը ներկայացնում են իրենց առաջադրանքները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

- Ի՞նչ տվեց ձեզ այս վարժությունը:
- Կարևո՞ր է իմանալ այս կամ այլ խնդրի իրավական հիմքերը: Ինչո՞ւ

15 Օգտվել Ձեռնարկի տեսական մասի համապատասխան նյութերից (տե՛ս էջ 25):

ԽՈՒՄԲ 1/ ՔԱՐՏ 1

Ստորև ներկայացված են միևնույն գաղափարը կամ խնդիրներն արծարծող հոդվածներ 2 փաստաթղթերից՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայից (կանաչ գույնով) ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից (կարմիր գույնով): Հոդվածներից ոչ բոլոր կետերն են ընտրված:

Առաջադրանք

1. Կարդացեք հոդվածները, վերլուծեք, քննարկեք խմբով:
2. Հոդվածները ներկայացրեք դասարանին՝ կարդացեք և բացատրեք:
3. Հանդես եկեք ի պաշտպանություն այս հոդվածների. ինչո՞ւ են կարևոր, ի՞նչ են տալիս հոդվածում ամրագրված դրույթները կանանց՝ մասնավորապես, և հասարակությանը՝ ընդհանուր առմամբ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա

Հոդված 3

Մասնակից պետությունները բոլոր, մասնավորապես՝ քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային բնագավառներում ձեռնարկում են բոլոր համապատասխան, ներառյալ՝ օրենսդրական միջոցները՝ ապահովելու կանանց լիարժեք զարգացումն ու առաջադիմությունը, որպեսզի նրանց համար երաշխավորվեն տղամարդկանց հետ հավասարության հիման վրա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացումն ու դրանցից օգտվելը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 2

1. Սույն օրենքի նպատակն է հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գենդերային հավասարության ապահովումը, կանանց և տղամարդկանց իրավական պաշտպանությունը գենդերային խտրականությունից, քաղաքացիական հասարակության ձևավորման աջակցումը և հասարակության մեջ ժողովրդավարական հարաբերությունների հաստատումը:

2. Սույն օրենքի խնդիրներն են ապահովել կանանց և տղամարդկանց՝

1) իրավունքների, պարտականությունների և պատասխանատվության իրական հավասարությունը, նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքը և խտրականության բացառումը.

2) հնարավորությունների հավասարությունը.

3) արդյունքի հավասարությունը:

ԽՈՒՄԲ 2/ՔԱՐՏ 2

Ստորև ներկայացված են միևնույն գաղափարը կամ խնդիրներն արծարծող հոդվածներ 2 փաստաթղթերից՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայից (կանաչ գույնով) ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից (կարմիր գույնով): Հոդվածներից ոչ բոլոր կետերն են ընտրված:

Առաջադրանք

1. Կարդացեք հոդվածները, վերլուծեք, քննարկեք խմբով:
2. Հոդվածները ներկայացրեք դասարանին՝ կարդացեք և բացատրեք:
3. Հանդես եկեք ի պաշտպանություն այս հոդվածների. ինչո՞ւ են կարևոր, ի՞նչ են տալիս հոդվածում ամրագրված դրույթները կանանց՝ մասնավորապես, և հասարակությանը՝ ընդհանուր առմամբ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա

Հոդված 7

Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը երկրի քաղաքական ու հասարակական կյանքում և մասնավորապես կանանց համար՝ տղամարդկանց հետ հավասար պայմաններով, ապահովում են հետևյալ իրավունքները.

(ա) քվեարկելու բոլոր ընտրություններում և հանրաքվեներում, ընտրվելու բոլոր պետական ընտրովի մարմիններում,

(բ) մասնակցելու կառավարության քաղաքականության ձևավորմանն ու իրականացմանը և կառավարման բոլոր մակարդակներում զբաղեցնելու պետական պաշտոններ և իրականացնելու բոլոր պետական գործառույթները:

Հոդված 12 Հավասար ընտրական իրավունքների երաշխիքները

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք

1. Կանայք և տղամարդիկ ունեն հավասար իրավունքներ և հավասար հնարավորություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, հանրաքվեներին մասնակցելիս:

2. Ընտրություններ անցկացնելիս կանայք և տղամարդիկ հավասարապես ապահովվում են արդարացի և իրական հնարավորություններով՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ընտրելու և ընտրվելու իրավունքն իրականացնելու համար:

4. Ընտրություններին կուսակցությունների մասնակցությունը պետք է ապահովված լինի թեկնածուների ընտրական ցուցակներում գենդերային ներկայացվածությամբ՝ օրենքով սահմանված քվոտաներով:

ԽՈՒՄԲ 3/ ՔԱՐՏ 3

Ստորև ներկայացված են միևնույն գաղափարը կամ խնդիրներն արծարծող հոդվածներ 2 փաստաթղթերից՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայից (կանաչ գույնով) ու «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից (կարմիր գույնով): Հոդվածներից ոչ բոլոր կետերն են ընտրված:

Առաջադրանք.

1. Կարդացեք հոդվածները, վերլուծեք, քննարկեք խմբով:
2. Հոդվածները ներկայացրեք դասարանին՝ կարդացեք և բացատրեք:
3. Հանդես եկեք ի պաշտպանություն այս հոդվածների. ինչո՞ւ են կարևոր, ի՞նչ են տալիս հոդվածում ամրագրված դրույթները կանանց՝ մասնավորապես, և հասարակությանը՝ ընդհանուր առմամբ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա

Հոդված 11

1. Մասնակից պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան միջոցները՝ վերացնելու կանանց նկատմամբ խտրականությունը զբաղվածության բնագավառում, տղամարդկանց և կանանց հավասարության հիման վրա միևնույն իրավունքներն ապահովելու նպատակով, մասնավորապես.

(ա) աշխատանքի իրավունքը՝ որպես բոլոր մարդկանց անքակտելի իրավունք,

(բ) աշխատանքի ընդունվելու միևնույն հնարավորությունների իրավունքը, ներառյալ՝ աշխատանքի ընդունելիս ընտրության միևնույն չափանիշների կիրառումը,

(գ) մասնագիտության և աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, առաջխաղացման, զբաղվածության երաշխիքի և բոլոր արտոնություններից ու ծառայության պայմաններից օգտվելու իրավունքը, մասնագիտական պատրաստություն և վերապատրաստում ստանալու իրավունքը, ներառյալ՝ աշակերտումը, բարձրորակ մասնագիտական պատրաստությունը և կանոնավոր վերապատրաստումը,

(դ) հավասար վարձատրության իրավունքը, ներառյալ՝ արտոնությունները, հավասարարժեք աշխատանքի դիմաց հավասար մոտեցման իրավունքը, ինչպես նաև աշխատանքի որակի գնահատման դեպքում հավասար մոտեցման իրավունքը:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 6

1. Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է:

2. Գենդերային ուղղակի խտրականության ձևեր են՝

2) միևնույն կամ համարժեք աշխատանքի դիմաց տարբեր վարձատրությունը, աշխատանքի վարձատրության ցանկացած փոփոխությունը (բարձրացում կամ իջեցում) կամ աշխատանքի պայմանների վատթարացումը սեռի հատկանիշով:

ԽՈՒՄԲ 4/ ՔԱՐՏ 4

Ստորև ներկայացված են միևնույն գաղափարը կամ խնդիրներն արծարծող հոդվածներ 2 փաստաթղթերից՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիայից (կանաչ գույնով) և «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքից (կարմիր գույնով): Հոդվածներից ոչ բոլոր կետերն են ընտրված:

Առաջադրանք

1. Կարդացեք հոդվածները, վերլուծեք, քննարկեք խմբով:
2. Հոդվածները ներկայացրեք դասարանին՝ կարդացեք և բացատրեք:
3. Հանդես եկեք ի պաշտպանություն այս հոդվածների. ինչո՞ւ են կարևոր, ի՞նչ են տալիս հոդվածում ամրագրված դրույթները կանանց՝ մասնավորապես, և հասարակությանը՝ ընդհանուր առմամբ:

«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա

Հոդված 11

Ամուսնության կամ մայրության հիմքով կանանց նկատմամբ խտրականությունը կանխելու և աշխատանքի արդյունավետ իրավունք երաշխավորելու համար մասնակից պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝

(ա) պատժամիջոցների կիրառման սպառնալիքի ներքո արգելելու աշխատանքից ազատումը հղիության կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի հիման վրա, կամ աշխատանքից ազատելիս ամուսնական դրության հիմքով խտրականությունը,

(բ) տրամադրելու հղիության և ծննդաբերության վճարովի կամ սոցիալական համեմատելի նպաստներով արձակուրդ՝ առանց կորցնելու աշխատանքի նախկին տեղը, վերադասությունը կամ սոցիալական նպաստները:

«Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենք

Հոդված 6

1. Հասարակական կյանքի բոլոր ոլորտներում ուղղակի և անուղղակի գենդերային խտրականությունն արգելվում է:

2. Գենդերային ուղղակի խտրականության ձևեր են՝

1) ընտանեկան դրության, հղիության և ընտանեկան պարտականությունների կատարման հիմքով խտրականությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒՄ ԵՆՔ ՄԵԴԻԱՆ

ՆՊԱՏԱԿ

Հնարավորություն տալ սովորողներին գենդերային տեսանկյունից վերլուծել մեդիա պրոդուկտը՝ որպես մեդիա սպառողներ, և լինել գենդերայնորեն զգայուն՝ նկատել, արձագանքել գենդերային խնդիրներին:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ

45 րոպե

ՏԱՐԻՔ

միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Տարբերակ 1

Դասարան տանել շաբաթաթերթեր կամ ամսագրեր: Դասարանը բաժանել 4 հոգանոց խմբերի, իսկ եթե ամսագրերը շատ են, առավել նպատակահարմար է զույգերով աշխատանքը: Հանձնարարել թերթել ամսագրերը և հաշվել, թե ամսագրում տեղ գտած նկարներում քանի կին և տղամարդ է պատկերված (մեծահասակներ), և քանի աղջիկ և տղա երեխաներ՝ ներառյալ գովազդները, ներառյալ մասսայական տեսարանները (եթե մասսայական տեսարաններում մարդիկ շատ են, և հնարավոր չէ հաշվել, ուղղակի տեսնել առաջին հայացքից շատ տղամարդ է երևում, թե կին, և հաշիվը մեկով ավելացնել): Յուրաքանչյուր խումբ իր համար լրացնում է այսպիսի մի աղյուսակ, հետո խմբերը մոտենում են գրատախտակին և լրացնում իրենց թվերն ընդհանուր աղյուսակում:

Աշխ. խումբ/զույգ	Կին	Տղամարդ	Աղջիկ	Տղա	Ընդամենը
Խումբ 1					
Խումբ 2					

Թվերը կարող են շատ տարբեր լինել՝ անհավասար, հավասար, խիստ անհավասար, ցանկացած դեպքում էլ պետք է խոսել, թե ինչպես է մեդիան արտացոլում մեր իրականությունը, միտումնավոր կամ ոչ մտածված վերարտադրում հասարակության մեջ առկա կարծրատիպերը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Կայ՞ն նկարներ, իրավիճակներ, որոնք արտահայտում էին գենդերային կարծրատիպեր:
2. Կայ՞ն նկարներ, որոնցում ներկայացված իրավիճակը/ները կարող էին կոտրել գենդերային կարծրատիպեր:
3. Կայ՞ն նկարներ, որոնք խումբը կուզեր ցույց տալ դասարանին և վերլուծել այն գենդերային տեսանկյունից:

Տարբերակ 2

Ըստ սովորողների նախասիրությունների՝ դասարանը բաժանել 3 խմբերի (եթե հնարավոր չլինի համաչափ բաժանումը, ապա ընտրել վիճակահանության տարբերակը): Խմբերին հանձնարարել 1 շաբաթվա ընթացքում հետազոտել հեռուստատեսությունը, հաղորդումները ենթարկել գենդերային վերլուծության:

Խումբ 1. Հեռուստատեսության լրատվական հաղորդում (որևէ հեռուստատեսության լրատվական ծրագիր կամ համեմատության համար մի քանի հեռուստատեսության լրատվական ծրագրեր):

Խումբ 2. Հեռուստատեսության ժամանցային հաղորդում (հայտնի թոք-շոու, ինտելեկտուալ խաղ, երիտասարդական ծրագիր և այլն):

Խումբ 3. Հեռուստատեսային և արտաքին գովազդներ՝ փողոցում, ճանապարհներին առկա ցուցապաստառներ:

Առաջին 2 խմբերը պետք է ուշադրություն դարձնեն և գրառեն, թե 1 շաբաթվա ընթացքում նշված հաղորդումներին հրավիրված հյուրերն ավելի շատ կանայք են, թե տղամարդիկ, ո՞ր թեմաներով կամ ի՞նչ հարցերի շուրջ են հեռուստատեսությամբ խոսում տղամարդիկ և կանայք, ռեպորտաժներում ի՞նչ չափաբաժնով են լուսաբանվում կանանց վերաբերող խնդիրները, կա՞ն միայն կանանց նվիրված հաղորդումներ և այլն:

3-րդ խումբը պետք է ուշադրություն դարձնի (եթե պետք է, կոնկրետ թվեր ներկայացնի), թե գովազդներում և գովազդային պաստառներում գործող անձինք ավելի շատ տղամարդի՞կ են, թե՞ կանայք, կանայք ավելի շատ ո՞ր ապրանքների, ծառայությունների գովազդներում են ներգրավված, կա՞ն գովազդներում իրավիճակներ, արտահայտություններ, կարգախոսեր, որոնք արտահայտում են գենդերային անհավասարություն, արտացոլում են գենդերային կարծրատիպեր:

Մեկ շաբաթ հետո խմբերը ներկայացնում են իրենց հետազոտության արդյունքները՝ ներկայացման ձևը որոշում է խումբը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ տվեց ձեզ այս աշխատանքը, ի՞նչ սովորեցիք:
2. Ի՞նչ նկատեցիք. ի՞նչը ձեզ զարմացրեց կամ զայրացրեց և կուզեիք փոխվեր:
3. Ի՞նչ փոխվեց ձեր պատկերացումներում և վերաբերմունքում:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԻ ՎՐԱ[16]

ՆՊԱՏԱԿ	Քննարկել պատմությունը և նրանում արծարծված արժեքները, վերլուծել հերոսների վարքը գենդերային դերերի և նորմերի տեսանկյունից:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Դասարանում բարձրաձայն կարդալ «Ճակատագրական պատմություն գետի վրա» լեգենդը: Դուրս բերել պատմության գործող հերոսներին, նրանց անունները գրել գրատախտակին: Այնուհետև բաժանել Բաշխման նյութ 10-ը և խնդրել, որ աշակերտներն իրենց անհատական գնահատականները տան գործող հերոսներին՝ ըստ բերված հարցերի: Ո՞վ է պատմության ամենաազնիվ, ամենաանազնիվ, ամենաազդեցիկ, ամենաթույլ կերպարը, և ինչո՞ւ: Աշխատանքը ավարտելուց հետո քննարկել:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ է ազնվությունը/անազնվությունը, ի՞նչ չափանիշներով եք գնահատել հերոսներին:
2. Ի՞նչ է նշանակում լինել ուժեղ/թույլ կամ ազդեցիկ մարդ, ի՞նչ չափանիշներով եք գնահատել հերոսներին:

Այնուհետև այս պատմության մեջ փոխել գլխավոր հերոսների տեղերը, այսինքն՝ Լիլիթի վիճակում հայտնվում է Արթուրը, որը նույն փորձություններով հասնում է իր սիրած աղջկան: Սեռերի տեղերով փոխվում են նաև Ռոմանը և Անիկը: Բաժանել

16 Վարժության պատմությունը վերցված է Equitas, International Human rights training program, participant's manual, 2011 ձեռնարկից՝ փոփոխված են միայն հերոսների անունները:

Բաշխման նյութ 11-ը և խնդրել, որ աշակերտներն այս պարագայում ևս գնահատեն հերոսներին և նրանց վարքը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Փոխվե՞ց ձեր վերաբերմունքը և գնահատականը հերոսների նկատմամբ: Ինչո՞ւ:
2. Ի՞նչը փոխվեց պատմության մեջ:
3. Ազնվության/անազնվության, թույլի, ուժեղի չափանիշները արդյո՞ք փոխվում են՝ կախված հերոսների սեռից:

ՃԱԿԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԳԵՏԻ ՎՐԱ

Մի ժամանակ ապրում էին Լիլիթ և Արթուր անուններով երիտասարդներ: Նրանք ապրում էին ջրառատ, խորը և մեծ հոսանքով գետի ափին: Նրանք ծանոթացել էին իրենց գյուղերում կազմակերպվող տոնավաճառներից մեկի ժամանակ: Նրանք սիրում էին իրար չափազանց մեծ սիրով:

Մի օր Լիլիթն Արթուրի ծնողներից նամակ ստացավ. «Արթուրը մահամերձ է: Նա ցանկանում է տեսնել քեզ»: Սակայն այդ օրը չարաբաստիկ քամին քանդել էր Արթուրի գյուղ տանող գետի վրայի միակ կամուրջը, որը հանդիսանում էր երկու գյուղերը կապող միակ ճանապարհը: Լիլիթն անճարակությունից այս ու այն կողմ էր վազում գետի ափով:

Լիլիթը հոգեբանական ծանր վիճակում որոշեց գնալ Ռոմանի մոտ, որը միակն էր, ով ուներ շարժիչով նավակ: Լիլիթը խնդրեց Ռոմանին, որ նա իրեն տեղափոխի գետի մյուս ափը՝ Արթուրի գյուղը: Ռոմանը համաձայնեց, սակայն մի պայմանով, որ Լիլիթը այդ գիշեր իր հետ անցկացնի, սակայն զայրույթով լեցուն Լիլիթը մերժեց նրան:

Լիլիթը հուսահատ գնաց իր ընկերուհի Անիկի մոտ՝ խորհուրդ հարցնելու, սակայն Անիկը համարեց, որ դա իր գործը չէ և չի ուզում խառնվել ուրիշի գործերին: Լիլիթը, տեսնելով, որ այլ ելք չունի, գնաց Ռոմանի մոտ, քանի որ նա միակն էր, ով կարող էր իրեն հասցնել իր սիրեցյալի մոտ: Լիլիթը կատարեց պայմանի իր մասը, իսկ Ռոմանը հենց այդ գիշեր նրան հասցրեց Արթուրի մոտ:

Երբ Լիլիթը հասավ Արթուրի մոտ, նա արդեն բավականին լավ էր զգում: Մի քանի օր անց Լիլիթը Արթուրին պատմեց, թե ինչերի միջով է անցել, որ կարողանա հասնել նրա մոտ: Երբ Արթուրն իմացավ, թե ինչի է գնացել Լիլիթը, նրան վռնդեց և ասաց, որ երբեք չի ամուսնանա նման աղջկա հետ:

Կոտրված սրտով Լիլիթը վերադարձավ իր գյուղ: Նա իր դժբախտ պատմության մասին պատմեց իր մեծ եղբորը՝ Գոռին: Սա էլ հավաքեց իր ընկերներին և մի լավ ծեծեց Արթուրին:

Երբ Լիլիթն իմացավ այդ մասին, ծիծաղեց:

Տարբերակ 1

Գործող հերոսների գնահատական

Ըստ ձեզ՝ ո՞վ է	Կերպարի անունը	Ինչո՞ւ
պատմության ամենաազնիվ կերպարը		
պատմության ամենաանազնիվ կերպարը		
պատմության ամենաազդեցիկ կերպարը		
պատմության ամենաթույլ կերպարը		

Տարբերակ 2. Եթե դիրքերով փոխվեն գլխավոր հերոսները

Գործող հերոսների գնահատական

Ըստ ձեզ՝ ո՞վ է	Կերպարի անունը	Ինչո՞ւ
պատմության ամենաազնիվ կերպարը		
պատմության ամենաանազնիվ կերպարը		
պատմության ամենաազդեցիկ կերպարը		
պատմության ամենաթույլ կերպարը		

ԻՆՉ Է ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ

ՆՊԱՏԱԿ	Քննարկել աշակերտների հետ բռնության դրսևորման ձևերը, խոսել բռնության պատճառների և հետևանքների մասին:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Հարց 1. Ինչ է բռնությունը: Ինչ բառերով կարելի է նկարագրել, բնութագրել կամ սահմանել բռնությունը:

Աշակերտներն ամփոփում են մտքերը՝ շարունակելով հետևյալ անավարտ նախադասությունը. «Բռնություն է...»:

Հարց 2. Բռնության դրսևորման ինչ ձևեր գիտեք:

Հաճախ աշակերտների բռնության մասին պատկերացումները սահմանափակվում են միայն ֆիզիկական բռնությամբ, հետևաբար անհրաժեշտ է առավել մանրամասն խոսել նաև խոսքով արտահայտված և հոգեբանական բռնության մասին, ինչպես նաև սեռական բռնության մասին:

Քննարկում անցկացնել հետևյալ հարցերի շուրջ, որոնք հնարավորություն կտան հասկանալ աշակերտների պատկերացումներն ու դիրքորոշումները բռնության պատճառների և հետևանքների մասին, խոսել բռնության նվազեցման և կանխման միջոցների մասին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ձեր կարծիքով, ինչո՞ւ են մարդիկ բռնանում մեկը մյուսին, ինչո՞ւ են մարդիկ հալածում մեկը մյուսին:
2. Ինչպե՞ս է բռնությունը ազդում բռնարարի վրա: Ի՞նչը կարող է պատճառ լինել բռնարարի դաժան վերաբերմունքի, բռնություն կիրառելու համար: Ի՞նչը կարող է լրացուցիչ խթան հանդիսանալ բռնության համար:
3. Արդյո՞ք որևէ պատճառ կարող է արդարացնել բռնությունը:
4. Ինչպե՞ս է բռնությունն ազդում բռնության ենթարկվածի վրա: Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ:
5. Ինչպե՞ս է բռնությունն ազդում համայնքի, հասարակության վրա:
6. Ինչպիսի՞ միջոցներով կարելի է նվազեցնել, կանխել բռնությունը:

Օգնել աշակերտներին հասկանալու, որ բռնության և ագրեսիայի պատճառներ կարող են լինել, օրինակ, ցածր ինքնագնահատականը, սթրեսային իրավիճակներից դուրս գալու անկարողությունը, անպատասխանատվությունը արարքների հետևանքների նկատմամբ և այլն: Բռնության պատճառ կարող է լինել նաև իշխելու, ուժ և իշխանություն ցուցաբերելու ցանկությունը: Իսկ բռնության ենթարկված անձի մոտ հետևանքները կարող են շատ ծանր լինել. մեկուսացվածություն, լքվածություն, դեպրեսիա, վախի զգացում, ցածր ինքնագնահատական, ինքն իրեն օգնելու անկարողություն, անքնություն, ցավեր, անօգնականության զգացում և այլն:

Այնուհետև աշակերտներին հանձնարարել, որ ուրվագծեն իրենց ձեռքը թղթի վրա, յուրաքանչյուր մատի դիմաց գրել, թե ո՞ւմ կդիմեն, եթե իրենց նկատմամբ բռնություն կիրառվի: Օրինակ՝ ծնող, ուսուցիչ, ոստիկան, ընկերներ և այլն:

Քննարկել աշակերտների հետ, արդյո՞ք պետք է խոսել կատարված բռնության մասին, թե՞ թաքցնել եղելությունը: Արդյո՞ք բռնության ծանրությունը, պատճառները և հետևանքները փոխվում են կախված նրանից՝ բռնությունը կատարվում է դրսում, թե տան պատերից ներս:

Քննարկել աշակերտների հետ, արդյո՞ք եղել են բռնության կիրառման դեպքեր իրենց շրջապատում, մոտ մարդկանց շրջանում, ի՞նչ տեսակի բռնություն է եղել, ինչպե՞ս կամ ո՞ւմ միջոցով են դուրս եկել այդպիսի իրավիճակից, ինչպե՞ս են նշված մարդիկ օգնել իրենց:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԿՅԱՆՔՈՒՄ

ՆՊԱՏԱԿ Քննարկել աշակերտների հետ բռնության դրսևորումները մեր կյանքում և մշակել կոնֆլիկտների խաղաղ կարգավորման ուղիներ:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 45 րոպե

ՏԱՐԻՔ միջին դպրոց

ԸՆԹԱՑՔ

Դասարանը բաժանել 5 հոգանոց խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է 15 րոպե քննարկի դպրոցում, ընտանիքում, ընկերների շրջանում և այլուր բռնության դեպքեր, որոնց ականատես կամ մասնակից են եղել իրենք: Այնուհետև խումբը պետք է ընտրի քննարկված իրավիճակներից մեկն ու դերախաղի միջոցով ներկայացնի ողջ դասարանին:

Յուրաքանչյուր խմբի ներկայացումից հետո մյուսներն արտահայտում են իրենց նկատառումները, մեկնաբանում են իրենց տեսածը, անհրաժեշտության դեպքում պարզաբանող հարցեր տալիս ներկայացված իրավիճակի վերաբերյալ:

Հետո խմբերը նորից հավաքվում են ու առանձին-առանձին քննարկում են տվյալ իրավիճակից դուրս գալու խաղաղ ուղիներ, խնդիրների լուծման ոչ բռնի եղանակներ:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ի՞նչ զգացումներ ունեցաք որպես բռնության տեսարանի, իրավիճակի մասնակից, թեկուզ որպես դերակատար:
2. Ավելի լա՞վ էիք զգում իրավիճակի խաղաղ լուծումը ներկայացնելիս: Ինչո՞ւ այո կամ ինչո՞ւ ոչ:
3. Դժվա՞ր էր տվյալ իրավիճակում խաղաղ լուծում գտնելը: Ինչո՞ւ:

ԱՐԴՅՈ՞Ք ԲՌՆՈՒԹՅՈՒՆ Է, ԵՐԲ...

ՆՊԱՏԱԿ Վարժության նպատակն է տարբերակել ընտանեկան բռնությունը և դրա տեսակները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 40 րոպե

ՏԱՐԻՔ ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցներին բաժանել 4 խմբի: Յուրաքանչյուր խմբի բաժանել նախօրոք կտրատված թղթեր, որոնց վրա գրված են զանազան իրավիճակներ: Իրավիճակները ներկայացված են Աղյուսակ 1-ում: Դրանց մեծ մասը պարունակում է բռնություն, մնացածը՝ ոչ: Գրատախտակը բաժանել 4 հատվածի: Դրանցից 3-ը ընտանեկան բռնության տեսակներն են՝ «Ֆիզիկական», «Սեռական», «Հոգեբանական/Տնտեսական»: 4-րդ հատվածը վերնագրված է «Բռնություն չէ»: Խմբերը պետք է 10 րոպե քննարկելուց հետո թերթիկները փակցնեն գրատախտակի համապատասխան անկյուններում: Աշխատանքը վերջացնելուց հետո հարկավոր է անցկացնել քննարկում, իսկ այնուհետև ամփոփել բռնության տեսակները և դրանց սահմանումները: Խմբերը հնարավորություն ունեն քննարկելուց հետո տեղափոխել թերթիկները, եթե գալիս են այն եզրակացության, որ սկզբում սխալ անկյունում են դրանք տեղադրել:

Աղյուսակ 1

Բռնության տեսակները
Հոգեբանական/Տնտեսական
Թաքցնում է իրերդ, լսում խոսակցություններդ, կարդում է բոլոր նամակագրությունները, էլեկտրոնային նամակները, հեռախոսային կարճ հաղորդագրությունները, անձնական փաստաթղթերը:
Վերահսկում է քո գործողությունները՝ ում հետ ես հանդիպում, ում հետ ես խոսում, երբ և ուր ես գնում, երբ ես վերադառնում:
Արգելում է հանդիպել ընկերներիդ կամ ընտանիքիդ անդամների հետ, արգելում է նրանց այցելել կամ հանդիպել քեզ:
Խառնվում է քո ընկերության մեջ, քեզնից թաքուն զանգահարում է ընկերներիդ, հարցաքննում է նրանց քո մասին:
Նվաստացնում է քեզ, ստիպում է անօգուտ ու անօգնական զգալ:
Շարունակաբար ասում է, որ դու միայնակ ես, որ ոչ ոքի պետք չես:
Ծաղրում է քեզ կամ քո ընտանիքի անդամներին ընտանիքիդ, ընկերներիդ կամ անծանոթների մոտ:
Վախեցնում է, սպառնում:
Չի հարգում քո որոշումները, քո կարիքները հաշվի չի առնում և ճնշում է կամ կառավարում է գործողություններդ այնպես, որ դու անես միայն այն, ինչ նա է ուզում:
Արգելում է աշխատել, ճնշումներ է գործադրում կամ խոչընդոտներ է ստեղծում, որպեսզի չկարողանաս աշխատել:
Ստիպում է միշտ իրենից փող խնդրել, գումար խնդրելիս էլ շատ ժամանակ միտումնավոր մերժում է:
Անընդհատ հարցնում է, թե ինչի վրա ես ծախսել գումարը, վերահսկում է, առաջնահերթություններ է սահմանում գումարը ծախսելու համար:
Վերցնում է քո աշխատած գումարը և ինքը տնօրինում:
Կոտրում, փչացնում կամ թաքցնում է քո իրերը:

Արգելում է տանից դուրս գալ:
Սպառնում է ցավ պատճառել քեզ, վնասել ուրիշներին կամ ինքնասպանություն գործել:
Սեռական բռնություն
Ֆիզիկապես կամ հոգեբանորեն պարտավորեցնում է սեռական հարաբերությունների մեջ մտնել քո կամքին հակառակ:
Սեռական ակտի ժամանակ ֆիզիկական ցավ է պատճառում (առանց քո համաձայնության):
Սեռական ակտի ժամանակ ստիպում է անել քո կամքին հակառակ գործողություններ:
Ֆիզիկական բռնություն
Հրում է քեզ, քաշում մազերդ, ձեռքով սեղմում է կոկորդդ կամ ապտակում:
Ապտակում է դեմքդ կամ քաշում է թևից, որպեսզի ավելի ուշադիր լսես իր ասածը:
Առարկաներ է շպրտում քեզ վրա՝ վնասելու նպատակով:
Վնասվածքներ է պատճառում՝ օգտագործելով զենք (դանակներ, հրազեն կամ այլ)՝ միտումնավոր կամ «պատահական»:
Բացահայտորեն հարվածում և ծեծում է:
Բռնություն չէ
Կարճ հաղորդագրություն է ուղարկում կամ զանգում է բջջայինիդ աշխատանքի ժամին, որպեսզի տեսնի, թե ինչպես ես:
Խորհուրդ է տալիս տաք հագնվել, քանի որ դրսում ցուրտ է:
Չի ցանկանում ֆիլմ դիտել, քանի որ հոգնած է:
Գիտի, որ հոգնած ես գալու աշխատանքից, ուստի համեղ ընթրիք է պատրաստում:
Օգնում է լվանալ երեխայի շորերը:
Խրախուսում է աշխատանքդ և հպարտանում քո հաջողություններով:

ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ ԲՌՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՆՊԱՏԱԿ Աշակերտները կկարողանան տարբերակել բռնության մասին փաստերն ու մոլորությունները:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 45 րոպե

ՏԱՐԻՔ միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչն առանձնացնում և դասարանի համար կարդում է բռնության վերաբերյալ հասարակության մեջ ընդունված մի քանի մոլորություններ: Այնուհետև յուրաքանչյուր մոլորությունը կարդալուց հետո խնդրում է մասնակիցներին բաժանվել 3 խմբի՝ նրանց, ովքեր համաձայն են, որ դա ճիշտ է, խնդրում է կանգնել սենյակի աջ կողմում, ովքեր համարում են, որ դա սխալ է՝ կանգնել սենյակի ձախ կողմում, իսկ ովքեր չեն կողմնորոշվում՝ կանգնել սենյակի մեջտեղում: Ուսուցիչը խնդրում է, որ մասնակիցները հիմնավորեն իրենց ընտրությունը: Սենյակի մեջտեղում կանգնածներին հարցնում է, թե ինչ փաստեր էին նրանց պակասում հստակ որոշում կայացնելու համար:

Խմբերին արտահայտվելու հավասար հնարավորություններ պետք է տալ:

Տեսակետները լսելուց հետո ուսուցիչը խնդրում է մեջտեղում կանգնածներին նորից կողմնորոշվել իրենց տեղի առումով, ինչպես նաև առաջարկում է տեղափոխվել նրանց, ում կարծիքներում փոփոխություններ եղան:

Այնուհետև ուսուցիչը ընթերցում է հերքումները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչի՞ համար էր այս վարժությունը: Արդյո՞ք անվտանգ են այդ մոլորությունները:
2. Ինչո՞ւ անվտանգ չեն հատկապես մեր կյանքի այն մոլորությունները, որոնք վերաբերում են բռնությանը:
3. Արդյո՞ք հեշտ էր կողմնորոշվելը և հատկապես հիմնավորումներ գտնելը:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ. ՄՈԼՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՓԱՍՏԵՐ

Մոլորություն

Ընտանեկան բռնությունը նոր երևույթ է, որն առաջացել է տնտեսական պայմաններից և սոցիալական կյանքի փոփոխությունների արդյունքում, որոնք արագացնում են կյանքի տեմպն ու նոր սթրեսներ են առաջացնում:

Այժմ ընտանեկան բռնությունը հազվադեպ հանդիպող երևույթ է: Դա մնացել է հին ժամանակներում, երբ ավանդույթներն ավելի խիստ էին, և կինը համարվում էր տղամարդու սեփականությունը:

Կանայք իրենք են ստիպում, որ իրենց ծեծեն՝ իրենց վերաբերմունքով և վարքով: Նրանք արժանի են դրան, քանի որ չեն լսում տղամարդկանց կամ փորձում են ապրել այնպես, ինչպես իրենք են ուզում:

Կանայք իրենց չմտածված են պահում. հագնում են կարճ կիսաշրջազգեստներ, գիշերը զբոսնում են փողոցում: Դրանով նրանք տղամարդկանց դրդում են սեռական բռնության:

Փաստեր

Կնոջը ծեծելու ավանդույթը այնքան հին է, որքան և ամուսնությունը: Մեզ հասած տեղեկությունները փաստում են այն մասին, որ դեռ հին ժամանակներում օրենքը խրախուսում էր կանանց նկատմամբ ստորացուցիչ վերաբերմունքը:

Ընտանեկան բռնությունը մեր ժամանակներում շատ տարածված երևույթ է: Աշխարհում բազմաթիվ կազմակերպություններ փորձում են պայքարել այս երևույթի դեմ, բայց այն դեռ չլուծված խնդիրներից մեկն է:

Կանանց նկատմամբ բռնությունն ընկած է գենդերային կարծրատիպերի հիմքում, որոնք դեռևս մանուկ հասակից տրվում են մարդկանց: Այսպիսի հայացքները խոսում են այն մասին, որ մեր հասարակությունը ամուսնությունը կապում է սեփականության իրավունքի հետ: Ոչ մի մարդ արժանի չէ դաժան վերաբերմունքի, բայց նա, ով ծեծում է, միշտ էլ փորձում է իրեն արդարացնել:

Սեռական բռնությունը շատերի կողմից արդարացվում է կնոջ հագուկապով կամ պահվածքով, ինչը հերթական անգամ ամրապնդում է կարծրատիպերը: Հաճախ բռնության ենթարկված կնոջը, օգնելու և աջակցելու փոխարեն, սկսում են դատապարտել: Տղամարդիկ ևս ենթարկվում են բռնության, բայց չգիտես ինչու նրանց ոչ մեկ չի հարցնում, թե ինչ հագուստով են եղել կամ որ ժամին են քայլել փողոցում:

Մոլորություն	Փաստեր
Ցանկության դեպքում կինը կարող է հեռանալ բռնարարից: Չի հեռանում՝ նշանակում է նման վերաբերմունքը նրան դուր է գալիս:	Կան մի շարք պատճառներ, որոնք խանգարում են կնոջը լքել բռնարար ամուսնուն կամ զուգընկերոջը. ամաչում են պատմել ինչ-որ մեկին եղելության մասին, վախենում են, որ դրանով էլ ավելի կկատաղեցնեն բռնարարին, ունեն ֆինանսական կախվածություն բռնարարից, բավարար օգնություն ոչ մեկից չեն կարող ակնկալել, հանուն երեխաների մնում են բռնարար հարաբերությունների մեջ՝ չմտածելով, որ բռնությունը ազդում է երեխաների վրա ևս, վախենում են հասարակության խարանից: Առավել հաճախ այս բոլոր պատճառները միասին են հանդես գալիս:
Օրենքը կանանց բավականաչափ պաշտպանում է:	Իրականում օրենքը այս մասով բավականին թույլ է: Շատ երկրների իրավական համակարգում նույնիսկ բացակայում է որևէ տեսակի պատժամիջոցի կիրառումն ընտանեկան բռնության դեպքում: Շատ երկրներում կնոջ նկատմամբ բռնի գործողությունները համարվում են ընտանեկան կյանքի նորմալ մաս: Ամբողջ աշխարհում մի շարք երկրներ ունեն ընտանեկան բռնության կանխարգելման օրենքներ, սակայն Հայաստանը տարածաշրջանում, ցավոք, միակն է, որը չի ընդունել այս օրենքը:
Կանայք, ում ծեծում են տանը, անկիրթ և տգետ են:	Բռնության են ենթարկվում նաև այն կանայք, ովքեր մասնագիտական մեծ աճ ունեն և հաջողակ են: Կնոջ մասնագիտությունն ու նրա հաջողությունները չեն ազդում բռնարարի գործողությունների վրա:
Եթե կնոջը ծեծում են, նշանակում է նա դրան արժանի է:	Կնոջը բռնության ենթարկելու հիմնական դրդապատճառը ուժի և իշխանության ցուցադրումն է: Ոչ ոք արժանի չէ նման վերաբերմունքի, և բռնությունը դատապարտելի է ցանկացած պարագայում:

ՄԻ ՔԱՆԻ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ ՄԵՐ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ԿԱՄ «ՄԵՐ ԿՈՂՔԻՆ, ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ»

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կդիտարկեն ընտանիքների պատմություններն ու գործող անձանց դերերը տարբեր տեսանկյուններից, կվերլուծեն և կքննարկեն գլխավոր դերակատարների արարքներն ու դրանց հետևանքները, դուրս կբերեն ցանկալի քայլերն ու գործողությունները, իրավիճակի ելքեր կառաջարկեն:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցները բաժանվում են 5 խմբի: Խմբերից յուրաքանչյուրին տրվում է մեկ իրավիճակ, իրական դեպք: Նրանցից պահանջվում է վերլուծել դեպքը՝ համաձայն ներքևում տրված հարցերի: Անհրաժեշտ է արդյունքներն ամփոփել և ներկայացնել մեծ խմբին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուսուցիչը ամփոփում է քննարկումները՝ փորձելով շեշտադրումներ կատարել գենդերային տարբերությունների և արդարության ընկալման վրա:

Համեմատություններն առավել տեսանելի է դարձնում՝ ցույց տալով սեռերի տարբերության դեպքում հասարակության տարբերակված վերաբերմունքը:

Քննարկման ընթացքում նաև անձնական հարցեր է հղում աշակերտներին՝ հարցնելով՝ արդյոք նրանք ևս զգացել են գենդերային տարբերությունների հիման վրա իրենց նկատմամբ տարբերակված վերաբերմունք:

Մարիա

Մարիան 28 տարեկան է: Պարբերաբար ֆիզիկական և սեռական բռնության է ենթարկվում իր 32-ամյա ամուսնու կողմից: Բռնության «առիթները» տարբեր են. մի օր Մարիան չի հասցրել արդուկել ամուսնու վերնաշապիկները, մի օր հարևանի երեխան է լաց լինում գիշերը և չի թողնում քնել, մի օր էլ տանը փող չկա, իսկ կինը պարտքով չի վերցրել ծնողներից: Ամուսինները երեխաներ չունեն: 26 տարեկանում Մարիան հղիացել էր, սակայն երբ պարզել էին, որ երեխան աղջիկ է, ամուսինն ու սկեսուրը ստիպել էին ընդհատել հղիությունը, քանի որ ուզում էին առաջնեկը տղա ծնվեր:

Հարցեր

Ինչ էր զգում Մարիան:
Ինչ էր զգում նրա ամուսինը:
Ինչո՞ւ էր ամուսինն այդպես վարվում:
Ո՞վ էր պատասխանատու իրավիճակի համար:
Ինչ դեր ուներ ամուսնու մայրը:
Ինչո՞ւ էր Մարիան հանդուրժում այդ ամենը:
Ինչո՞ւ էր ամուսինը շարունակում անպատիժ մնալ:
Ո՞ւմ արարքներն են ամենադատապարտելին այս իրավիճակում:
Ինչն էր նպաստում իրավիճակին:
Ո՞վ կամ ինչը կարող էր իրավիճակը փոխել:
Պատկերացրեք իրավիճակը, երբ դերերը հակառակ սեռերին են բաշխված. ինչպիսին կլիներ հասարակության արձագանքը: Ինչպիսին է ձեր արձագանքը:

Կարեն

Կարենը 36 տարեկան է, աշխատում է որպես օպերատոր: Ամուսնացած է, ունի 2 երեխա՝ 8 և 6 տարեկան: Կինը՝ Լուսինեն, տնային տնտեսուհի է: Լուսինեն պարբերաբար ճնշումներ է գործադրում ամուսնու վրա՝ հանդիմանելով, որ բավարար գումար չի վաստակում, հետևաբար Կարենն իսկական տղամարդ չէ, որ չի կարողանում տունը պահել:

Հարցեր

Ինչ էր զգում Կարենը:
Ինչ էր զգում նրա կինը:
Ինչն էր տվյալ իրավիճակի պատճառը:
Ինչո՞ւ էր կինն այդպես վարվում:
Ո՞ւմ արարքներն են ամենադատապարտելին այս իրավիճակում:
Ո՞վ էր պատասխանատու իրավիճակի համար:
Ինչն էր նպաստում իրավիճակին:
Ո՞վ կամ ի՞նչը կարող էր իրավիճակը փոխել:
Պատկերացրեք իրավիճակը, երբ դերերը հակառակ սեռերին են բաշխված. ինչպիսի՞ն կլիներ հասարակության արձագանքը: Ինչպիսի՞ն է ձեր արձագանքը:

Անի

Անին 25 տարեկան է, նոր է ավարտել Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության բաժինը և ձեռք է բերել մագիստրոսի աստիճան: Ուսման տարիներին նաև աշխատել է հաշվապահական ընկերությունում: Այժմ ցանկանում է իր ուսումը շարունակել արտասահմանում, ընդունվել է ԱՄՆ-ի համալսարաններից մեկը, սակայն հայրը թույլ չի տալիս նրան շարունակել ուսումը. ծնողները ստիպում են ամուսնանալ և ընտանիք կազմել:

Հարցեր

Ինչո՞ւ էին ծնողներն այդպես վարվում:
Ի՞նչ կարող է անել Անին այս իրավիճակում:
Ի՞նչ խորհուրդ կտայիք Անիին:
Ինչպե՞ս կարող է ավարտվել իրավիճակը դրական կամ բացասական ելքի դեպքում:
Ո՞ւմ արարքներն են ամենադատապարտելին այս իրավիճակում:
Ո՞վ էր պատասխանատու իրավիճակի համար:
Ի՞նչն էր նպաստում իրավիճակին:
Ո՞վ կամ ի՞նչը կարող էր իրավիճակը փոխել:
Պատկերացրեք իրավիճակը, երբ դերերը հակառակ սեռերին են բաշխված. ինչպիսի՞ն կլիներ հասարակության արձագանքը: Ինչպիսի՞ն է ձեր արձագանքը:

Վարդուհի

Վարդուհին 18 տարեկան է, ծնվել է մարզում, տեղափոխվել է Երևան՝ սովորելու: Մի օր, երբ ընկերուհիների հետ հանդիպելուց հետո վերադառնում էր իր վարձով բնակարանը, երկու տղաներ մոտենում են նրան, բռնում և քարշ տալիս խուլ վայր, որտեղ աղջկան սեռական բռնության են ենթարկում: Վարդուհին չի դիմում ոստիկանություն ու ոչ ոքի չի պատմում իր հետ կատարվածի մասին: Երկու ամիս անց հասկանում է, որ հղի է: Դիմում է ծնողներին, սակայն նրանք զայրանում են, կշտամբում աղջկան, անվանում անբարոյական և մեղադրում Վարդուհուն կատարվածի համար, ասելով, որ նա է ինչ-որ սխալ թույլ տվել, որ իրեն բռնաբարել են: Միևնույն ժամանակ ծնողները չեն թողնում, որ Վարդուհին ընդհատի հղիությունը, թեև վերջինս չի ցանկանում երեխա ունենալ՝ բազում այլ նպատակներ ունենալով:

Հարցեր

Ինչ էր զգում Վարդուհին:
Ինչ էին զգում նրա ծնողները:
Ո՞րն էր, ձեր կարծիքով, Վարդուհու ճիշտ քայլերի հաջորդականությունը:
Ինչպե՞ս եք գնահատում Վարդուհու ծնողների վերաբերմունքն ու քայլերը:
Ինչո՞ւ Վարդուհին նախքան հղիության մասին իմանալը չէր պատմել ծնողներին եղածի մասին:
Ո՞ւմ արարքներն են ամենադատապարտելին այս իրավիճակում:
Ո՞վ էր պատասխանատու իրավիճակի համար:
Ինչն էր նպաստում իրավիճակին:
Ո՞վ կամ ի՞նչը կարող էր իրավիճակը փոխել:
Ինչ խորհուրդ կտաք Վարդուհուն:
Պատկերացրեք իրավիճակը, երբ դերերը հակառակ սեռերին են բաշխված (բացառությամբ հղիության հանգամանքի). ինչպիսի՞ն կլիներ հասարակության արձագանքը: Ինչպիսի՞ն է ձեր արձագանքը:

Սոնա

Սոնան 26 տարեկան է: 23 տարեկանում ամուսնացել է, սակայն ամուսինը մեղրամսից սկսած կնոջը ենթարկել է բռնությունների. չի թողել, որ աշխատի, խանդել է ամեն պատեհ և անպատեհ առիթով ու ծեծել: 3 տարի նման պայմաններում ապրելուց հետո աղջիկը որոշել է բաժանվել և դիմել է ծնողներին: Ծնողները, սակայն, Սոնային ասել են, որ հետ գալու տեղ չունի. ամոթ է, ինչ կասեն հարևանները, բարեկամները: Մայրը խորհուրդ է տվել կրել իր խաչը. «Բա ամուսինդ է, մի հատ էլ չծեծի՞», – հեռախոսով ասել է Սոնայի մայրը:

Հարցեր

Ինչ էր զգում Սոնան:
Ինչ էին զգում նրա ծնողները:
Ո՞րն էր, ձեր կարծիքով, Սոնայի ճիշտ քայլերի հաջորդականությունը:
Ինչպե՞ս եք գնահատում Սոնայի ծնողների վերաբերմունքն ու քայլերը:
Ինչո՞ւ էր Սոնան հանդուրժել այդ իրավիճակը երեք տարի շարունակ:
Ո՞ւմ արարքներն են ամենադատապարտելին այս իրավիճակում:
Ո՞վ էր պատասխանատու իրավիճակի համար:
Ինչն էր նպաստում իրավիճակին:
Ո՞վ կամ ինչը կարող էր իրավիճակը փոխել:
Ինչ խորհուրդ կտաք Սոնային:
Պատկերացրեք իրավիճակը, երբ դերերը հակառակ սեռերին են բաշխված. ինչպիսի՞ն կլիներ հասարակության արձագանքը: Ինչպիսի՞ն է ձեր արձագանքը:

Այնուհետև մնացած աշակերտներին հնարավորություն է տրվում կարծիքներ հայտնել և մեկնաբանել իրավիճակները:

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ[17]

ՆՊԱՏԱԿ	Բարձրացնել աշակերտների իրազեկվածությունն ընտանեկան բռնության և կանանց իրավունքների խախտումների մասին, դիտարկել ընտանեկան բռնության իրական դեպքերը որպես բռնության ամենատարածված, բայց քիչ շոշափվող ձևերից մեկը:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Անցկացնել մտագրոհ «Բռնության ամենատարածված ձևերը ձեր շրջապատում» խնդրի շուրջ: Պատասխանները գրառել գրատախտակին կամ թղթի վրա, սակայն ոչինչ պետք չէ քննարկել այս փուլում, գրառումներին անդրադառնալ դասի վերջում:

Դասարանը բաժանել խմբերի, յուրաքանչյուր խմբին տալ «Ականատեսի վկայության» մեկ քարտ (Բաշխման նյութ 12): Եթե խմբերը կլինեն երեքից ավելի, կարելի է մեկ քարտը տալ 2 տարբեր խմբերի: Խնդրել աշակերտներին, որ կարդան հանցագործության մասին վկայությունները և յուրաքանչյուր դեպք քննարկեն քարտերում բերված հարցերի շրջանակներում: Յուրաքանչյուր խումբ ամբողջ դասարանին պետք է ներկայացնի «իր դեպքը» և դեպքի առնչությամբ իրենց վերլուծությունը:

Այնուհետև անցկացնել ամփոփիչ քննարկում և վերլուծություն:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչ տարածում ունի ընտանեկան բռնությունը մեր երկրում:
2. Որո՞նք են ընտանեկան բռնության պատճառները:

17 Վարժության գաղափարը վերցված է «Կողմնացույց»-ի «Ընտանեկան գործեր» վարժությունից՝ համապատասխան փոփոխություններով և մշակումներով: (Մարդու իրավունքների երիտասարդական ձեռնարկ-Եվրոպայի խորհուրդ)

3. Ինչն է պատճառը, որ տղամարդիկ ավելի շատ են բռնություն կիրառում կանանց նկատմամբ, քան հակառակը:
4. Ինչպե՞ս կարելի է կանխարգելել ընտանեկան բռնությունը: Ինչ քայլեր կարող են և պետք է ձեռնարկեն՝
   - պետական իշխանության մարմինները
   - տեղական համայնքը
   - բռնության ենթարկվողները
   - ընտանիքի այլ անդամները, ընկերները և հարևանները:

Խմբերի ստացած արդյունքներն ու քննարկման ընթացքում բարձրացված հարցերը համեմատել նախնական մտքերի տարափի արդյունքում վեր հանված խնդիրների ցուցակի հետ, տեսնել՝ այդ ցուցակում ընտանեկան բռնությունը ներառվա՞ծ էր, թե՞ ոչ, եթե ոչ՝ ինչո՞ւ:

ՔԱՐՏ 1 - Ականատեսի վկայություն[18]

Հայկանուշ

Ամուսինը մշտապես ծեծում էր Հայկանուշին, ընդ որում՝ հոր ձեռքից չէին պրծնում նաև որդին ու աղջիկը: Ամուսինը, ոչ միայն ծեծում էր կնոջը, այլև նրան ու երեխաներին տանից դուրս էր հանում:

Մի օր էլ կնոջը դանակով մի քանի անգամ հարվածում է. ինչի արդյունքում կինը հաշմանդամ կդառնար, եթե բժիշկները ժամանակին բուժօգնություն չցուցաբերեին:

Կնոջ դանակահարության օրն էլ ամուսինը՝ Գառնիկը, սպառնացել էր, որ սպանելու է, վերջ է դնելու նրա կյանքին: Ու չնայած այս սպառնալիքներին, մշտական հետապնդումներին, տիկին Հայկանուշը, դատարանի դահլիճում որդու խնդրանքով հայտարարում է, որ ներում է ամուսնուն, ինչն էլ հիմք է հանդիսանում քրեական գործը կարճելուն և քրեական հետապնդումը դադարեցնելու համար:

Տիկին Հայկանուշը դատարանում հայտարարում է նաև, որ չի ցանկանում ամուսնու հետ ապրել մի հարկի տակ, ուզում է ամուսնալուծվել: Ամուսինն էլ խոստանում է, որ այլևս չի անհանգստացնի կնոջը: Ամիսներ անց Գառնիկը իր սեփական երեխաների բնակարանը դիտավորյալ հրկիզում է. բարեբախտաբար, այս անգամ ընտանիքի անդամները ֆիզիկապես չեն տուժում, սակայն տան մեծ մասը մոխիր է դառնում:

Խմբային քննարկման հարցեր

1. Ընթերցելով վկայությունը՝ ինչ եք մտածում.
   – որտեղ կարող էր այն կատարված լինել
   – կարող էր կատարված լինել ձեր շրջապատում:
2. Ո՞րն է հանցագործության պատճառը:
3. Կա՞մ արդյոք նման հանցագործությունն արդարացնող որևէ հանգամանք:
4. Ինչպե՞ս կարող էր զոհը պաշտպանել իրեն:
5. Գիտե՞ք կամ լսե՞լ եք վերջերս կատարված ընտանեկան բռնության որևէ դեպքի մասին:
6. Ինչ ձևերով է դրսևորվում ընտանեկան բռնությունը մեր հասարակության մեջ:
7. Ինչ կարող են անել տուժողները, եթե նրանք օգնության կարիք ունեն:
8. Բռնության մասին ահազանգ ստանալու դեպքում ոստիկանությունն արդյո՞ք պետք է միջամտի, թե՞ պետք է ժամանակ տալ խնդիրն ինքնուրույն լուծելու համար, արդյո՞ք դա համարվում է միջամտություն ընտանեկան գործերին:
9. Ինչ իշխանությամբ է օժտված կինն այդ իրավիճակում: Ինչ իշխանություն ունի տղամարդը:
10. Գիտե՞ք ընտանեկան բռնության դեպքեր, երբ տուժողը տղամարդ է:

---

18 Բոլոր դեպքերն իրական են՝ գրանցված Հայաստանում: Ոչինչ ավելացված չէ, փոփոխված են միայն անունները:

ՔԱՐՏ 2 - Ականատեսի վկայություն[19]

Լիլիթ

16 տարվա ամուսնության ընթացքում ամուսինները հազվադեպ էին հաշտ ու խաղաղ ապրել, իսկ սպանության նախորդ օրը Լիլիթը արդեն հայտարարել էր, որ պատրաստվում է ամուսնալուծվել, և համատեղ բնակարանից իրերը հավաքել ու դուրս էր եկել:

Հաջորդ օրը ամուսնու եղբայրը, ցանկանալով հաշտեցնել եղբորը կնոջ հետ, Լիլիթին հրավիրել էր իր բնակարան, որպեսզի Լիլիթն ու Վազգենը՝ Լիլիթի ամուսինը, զրուցեն, լեզու գտնեն միմյանց հետ և նորից միասին ապրեն:

Խոսակցության ընթացքում հաշտության եզրեր չգտնելով՝ զայրացած Վազգենը դանակահարում է կնոջը: Նրանց անչափահաս դուստրը՝ 15–ամյա Սվետլանան, տեսնում է կատարված ոճիրը, և հազիվ է հասցնում 5-ամյա եղբոր աչքերը ձեռքով փակել, որպեսզի նա չտեսնի այդ զարհուրելի տեսարանը:

Խմբային քննարկման հարցեր

1. Ընթերցելով վկայությունը՝ ի՞նչ եք մտածում.
   – որտե՞ղ կարող էր այն կատարված լինել
   – կարո՞ղ էր կատարված լինել ձեր շրջապատում:
2. Ի՞նչն է հանցագործության պատճառը:
3. Կա՞մ արդյոք նման հանցագործությունն արդարացնող որևէ հանգամանք:
4. Ինչպե՞ս կարող էր զոհը պաշտպանել իրեն:
5. Գիտե՞ք կամ լսե՞լ եք վերջերս կատարված ընտանեկան բռնության որևէ դեպքի մասին:
6. Ի՞նչ ձևերով է դրսևորվում ընտանեկան բռնությունը մեր հասարակության մեջ:
7. Ի՞նչ կարող են անել տուժողները, եթե նրանք օգնության կարիք ունեն:
8. Բռնության մասին ահազանգ ստանալու դեպքում ոստիկանությունն արդյո՞ք պետք է միջամտի, թե՞ պետք է ժամանակ տալ խնդիրն ինքնուրույն լուծելու համար, արդյո՞ք դա համարվում է միջամտություն ընտանեկան գործերին:
9. Ի՞նչ իշխանությամբ է օժտված կինն այդ իրավիճակում: Ի՞նչ իշխանություն ունի տղամարդը:
10. Գիտե՞ք ընտանեկան բռնության դեպքեր, երբ տուժողը տղամարդ է:

---

19 Բոլոր դեպքերն իրական են՝ գրանցված Հայաստանում: Ոչինչ ավելացված չէ, փոփոխված են միայն անունները:

ՔԱՐՏ 3 - Ականատեսի վկայություն[20]

Նարինե

Նարինեի ամուսինը՝ Հրաչյան, ժամանակ առ ժամանակ իրեն նվիրում էր հարբեցողության, գալիս էր տուն ու տանեցիներին բռնությունների ենթարկում: Հրաչյան մշտական աշխատանք չուներ և օրվա հացը վաստակում էր տարբեր ֆիզիկական բնույթի աշխատանքներ կատարելով: Ամուսինները հաշտ չէին ապրում, և Հրաչյան հենց երեխաների ներկայությամբ ծեծի էր ենթարկում կնոջը, նվաստացնում և հայհոյում նրան: Նարինեն բազմիցս դիմել է իրենց համայնքի ոստիկանական բաժանմունք: Ոստիկանության աշխատակիցները սովորաբար խոստանում էին խոսել Հրաչյայի հետ, նախատել նրան ու համոզում էին Նարինեին, որ ամուսնու վրա բողոք չգրի՝ ասելով, որ ի վերջո ընտանիք են, անախորժություններ բոլորի ընտանիքներում էլ լինում են և շուտով կհաշտվեն: Մի օր ծանր վիճաբանությունից հետո նա Նարինեի աղջիկների՝ 17-ամյա Գայանեի և 14-ամյա Լուսինեի աչքի առաջ սպանում է 35-ամյա կնոջը: Կնոջ դին թողնելով՝ փախուստի է դիմում: Երեխաներն ականատես լինելով խորթ հոր արարքին, ապարդյուն ջանքեր են գործադրում՝ փրկելու իրենց մորը: Օգնություն են խնդրում հարևաններից և այն չստանալով՝ սարսափած և ոտաբոբիկ վազում են ոստիկանություն, վերջինս մեկուկես ժամ անց է միայն արձագանքում աղջիկների աղաղակներին և աղերսանքներին:

Խմբային քննարկման հարցեր

1. Ընթերցելով վկայությունը՝ ի՞նչ եք մտածում.
   – որտե՞ղ կարող էր այն կատարված լինել
   – կարո՞ղ էր կատարված լինել ձեր շրջապատում:
2. Ի՞նչն է հանցագործության պատճառը:
3. Կա՞մ արդյոք նման հանցագործությունն արդարացնող որևէ հանգամանք:
4. Ինչպե՞ս կարող էր զոհը պաշտպանել իրեն:
5. Գիտե՞ք կամ լսե՞լ եք վերջերս կատարված ընտանեկան բռնության որևէ դեպքի մասին:
6. Ի՞նչ ձևերով է դրսևորվում ընտանեկան բռնությունը մեր հասարակության մեջ:
7. Ի՞նչ կարող են անել տուժողները, եթե նրանք օգնության կարիք ունեն:
8. Բռնության մասին ահազանգ ստանալու դեպքում ոստիկանությունն արդյո՞ք պետք է միջամտի, թե՞ պետք է ժամանակ տալ խնդիրն ինքնուրույն լուծելու համար, արդյո՞ք դա համարվում է միջամտություն ընտանեկան գործերին:
9. Ի՞նչ իշխանությամբ է օժտված կինն այդ իրավիճակում: Ի՞նչ իշխանություն ունի տղամարդը:
10. Գիտե՞ք ընտանեկան բռնության դեպքեր, երբ տուժողը տղամարդ է:

20 Բոլոր դեպքերն իրական են՝ գրանցված Հայաստանում: Ոչինչ ավելացված չէ, փոփոխված են միայն անունները:

ԿԱՐԵԼԻ Է ՓԱԽՋԵԼ

ՆՊԱՏԱԿ Աշակերտները կհամոզվեն և վստահություն կձևավորեն, որ յուրաքանչյուր իրավիճակից հնարավոր է ելք գտնել, կհստակեցնեն այն գործոնները, որոնք խանգարում են կնոջն ազատվել բռնարարից և բռնի գործողություններից:

ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ 25-30 րոպե

ՏԱՐԻՔ միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Ուսուցիչը խմբի անդամներից որևէ մեկին խնդրում է գալ սենյակի կենտրոն և նստել կա՛մ հատակին, կա՛մ աթոռին (հաշվի առնելով սենյակի հնարավորությունները): Այդ աշակերտը պետք է կատարի մի կնոջ դեր, ով տանը, ընտանիքում ենթարկվում է բռնության: Ուսուցիչը խնդրում է խմբին մտագրոհի միջոցով թվարկել այն բոլոր հնարավոր պատճառները, որոնք թույլ չեն տալիս կամ խանգարում են այդ կնոջը լքել բռնարարին (երեխաներն առանց հայր կմեծանան, ֆինանսական կախվածություն, ամոթ հարազատների և հարևանների մոտ): Թվարկված պատճառները գրեք մեծ թղթի ձախ մասում:

Յուրաքանչյուր անգամ, երբ երեխաները մի նոր պատճառ են ասում, մեջտեղում նստած կնոջ վրա մի ծածկոց են գցում (լավ կլինի նախապես 10-12 ծածկոց, կամ մեծ թղթեր պատրաստել):

Երբ բոլոր պատճառները թվարկում են, ուսուցիչը հարցնում է խմբին՝ ի՞նչ կարելի է անել, որպեսզի կինն ազատվի այդ ծանրությունից:

Պատասխանները գրվում են պատճառների դիմաց՝ թղթի աջ մասում: Յուրաքանչյուր անգամ, երբ աշակերտները մեկ ելք են առաջարկում, կնոջ վրայից ուսուցիչը մի ծածկոց է հանում:

Պետք է խրախուսել երեխաներին, որպեսզի հնարավորինս գործող տարբերակներ առաջարկեն, ասեն, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ այդ գործողությունը կնոջ, ինչպես նաև ընտանիքի մյուս անդամների վրա:

Կնոջ կերպարը մարմնավորող մասնակցին վերջում պետք է հարցնել, թե ինչ էր նա

զգում, երբ ծածկոցներն ավելանում էին, ինչ էր զգում, երբ ծածկոցները, հակառակը, պակասում էին, ինչ լուծման տարբերակներ ինքը կառաջարկեր:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

1. Ինչպիսի՞ տպավորություններ ունեցան:
2. Ի՞նչն է խանգարում լուծումներ տեսնել դժվար իրավիճակներում:
3. Ի՞նչն է օգնում լուծումներ գտնել:
4. Հասարակությունն ինչպե՞ս կարող է օգնել նման իրավիճակների և ճակատագրերի թվի նվազեցմանը:

ԲՌՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԶԵՐԾ ԸՆՏԱՆԻՔ

ՆՊԱՏԱԿ	Աշակերտները կվերլուծեն ընտանիքի համերաշխության և հարմարավետության պայմանները յուրաքանչյուր անդամի համար, կարժևորեն բռնությունից զերծ լինելը՝ որպես ընտանիքի երջանկության գրավական, կիմանան երջանիկ ընտանիքի մասին մյուսների պատկերացումների մասին:
ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆ	45 րոպե
ՏԱՐԻՔ	միջին և ավագ դպրոց

ԸՆԹԱՑՔ

Մասնակիցներին հանձնարարվում է անհատական աշխատանք կատարել՝ նկարել իրենց պատկերացմամբ բռնությունից զերծ ընտանիք: Յուրաքանչյուրին տրամադրվում է 10 րոպե անհատական աշխատանքի համար: Ապա աշակերտները 4-5 հոգանոց խմբեր են կազմում: Խմբում նրանք ուսումնասիրում են միմյանց նկարներն ու դուրս բերում այն հիմնական պայմանները, որոնք ապահովում են ընտանիքի համերաշխությունն ու փոխադարձ հարգանքը:

Խմբային աշխատանքում նրանց հանձնարարվում է պատասխանել հետևյալ հարցերին.

- Ինչպիսի՞ պայմաններ կային յուրաքանչյուր ընտանիքում:
- Ինչպիսի՞ վարքագիծ ուներ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը:
- Ինչպե՞ս էր իրեն զգում ընտանիքի անդամներից յուրաքանչյուրը:
- Որո՞նք են երջանկության հիմնական գրավականները:
- Ինչպիսի՞ ազդեցություն կունենար բռնությունն ընտանիքի յուրաքանչյուր անդամի վրա:

Խմբային աշխատանքից հետո խմբերն իրենց աշխատանքի և վերլուծության արդյունքները ներկայացնում են մեծ խմբին:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Ուսուցիչն ամփոփում է աշակերտների աշխատանքը: Շեշտադրվում են բռնության նախադրյալներն ու հետևանքներն ընտանիքի յուրաքանչյուր անդամի վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Գենդերային հավասարություն և գենդերային բռնություն թեմայով դասընթացի մոդուլ», ՀՀ ԿԳՆ Կրթության ազգային ինստիտուտ, 2015 թ., Երևան

Պ. Բրենդեր, «Կողմնացույց» Մարդու իրավունքների կրթության երիտասարդական ձեռնարկ. Council of Europe Publishing, 2002

Ա. Մովսիսյան, «10 հայ ականավոր թագուհիներ». Երևան: Զանգակ հրատ., 2014

Ն. Ֆլաուերս, Մ. Է.-Ս. «Կողմնացույց». (թարգմ.՝ Լ. Չ. Ա. Անտոնյան) «Հայկական սահմանադրական իրավապաշտպան կենտրոն» ՀԿ Վանաձոր, 2012

Գիլմոտո, Ք. Զ. «Նորածինների սեռերի անհամամասնությունը Հայաստանում» ժողովրդագրական տվյալների հավաքածու, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ, Երևան, 2013. Կապուղի՝ http://bit.ly/1U3X3tc

«Ձերծ պահիր ինձ քո կարծրատիպերից» սոցիոլոգիական հարցում, «Հասարակություն առանց բռնության» ՀԿ, Երևան, 2011. Կապուղի՝ http://bit.ly/1QJ2tc9

Մելքոնյան Ա., Սիմոնյան Ա., Հայոց պատմություն 11-րդ դաս Կապուղի՝ http://bit.ly/1gExDPi

«Dasaran.am» միջդպրոցական ինտերակտիվ ցանց. Կապուղի ՝ http://bit.ly/1LPKVtc

«Ինչպես Դու» էլ. պարբերական «Ֆեմինիզմ. պատմությունից իրականություն» Լ. Սարգսյան. Կապուղի ՝ http://bit.ly/1GYnMhG

Բուն TV գիտամասնագիտական առցանց հեռուստատեսություն: «Ֆեմինիզմ և պատմություն. Պատմաբան Ծովինար Տերտերյան». Կապուղի՝ http://boon.am/feminizm-terteryan-tsovinar/

«Լռությունը պատվաբեր չէ. Հայաստանում ընտանեկան բռնության դեմ պայքար» զեկույց, «Ամնեսթի Ինթերնեյշնլ», Երևան, 2008

«Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունն ու ճնշումը Հայաստանում» համազգային հարցում, Կանանց իրավունքների կենտրոն և Հայաստանի ամերիկյան համալսարանի «Թուրփանջյան հասարակական հետազոտությունների կենտրոն», Երևան, 2007

«Հասարակական կարծիքի հարցում ՀՀ-ում ընտանեկան բռնության վերաբերյալ», «Պրոակտիվ հասարակություն» իրավապաշտպան ՀԿ, Երևան, 2011

«Հայաստանի կանայք և տղամարդիկ» վիճակագրական գրքույկ, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Երևան, 2015. Կապուղի՝ http://bit.ly/1OV5Xbt

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Երբ կանայք են ղեկավարում» Կապուղի՝ http://bit.ly/1Gx6vwb

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Կանայք Հայաստանի իշխանությունում/ ինֆոգրաֆիկա». Կապուղի՝ http://bit.ly/V1gwRB

Սիվիլնեթ առցանց լրատվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց կանանց» Կապուղի՝ http://bit.ly/1L6gq01

Սիվիլնեթ առցանց լրտվական կայք. «Հայաստանը մեկ օր առանց տղամարդկանց». Կապուղի՝ http://bit.ly/1kQFuPs

Առողջապահության և բժշկության հայկական տեղեկատու Doctors.am. Կապուղի՝ http://bit.ly/1MbJcRv

Domestic Abuse Intervantion Project, “Power and Control Wheel”. Կապուղի՝ http://bit.ly/1sTBdyA

International Human rights training program, participants manual (2011). Equitas

“The Cost of Violence Against Women and Their Children”, The National Council to Reduce Violence against Women and their Children, Australia, 2009. Կապուղի՝ http://bit.ly/1Wl2K7p

Гендер в устойчивом развитии – Сборник упражнений для проведения тренинга для тренеров (ToT). (2014). Германия: WECF, Женщины Европы за всеобщее будущее

Вер. Деннис вон дер, «Гендерные вопросы», Пособие по вопросам гендерного насилия, затрагивающего молодежь. Совет Европы, 2007

Е. Минченя, О. С. (2013). Гендерный ликбез: брошюра. Вильнюс: Белорусский дом прав человека

Мониторинг и реализация Женской конвенции в странах СНГ, книга для тренеров (2005). Алмата: ЮНИФЕМ для стран СНГ

О. Андрусик, М. О. (2013). «В поисках гендерного воспитания». Харьков: Золотые страницы

Проект Женской интегрированной правовой грамотности. (2003). Изучая права женщин: Пособие для тренеров. Ташкент: Винрок Интернэшнл

Всемирная организация здравоохранения, (2002). “Насилие и его влияние на здоровье” Доклад о ситуации в мире

Օրենսդրական փաստաթղթեր

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր (1948): Կապուղի՝ Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ինտերնետային կայք՝ http://bit.ly/1Mbh0Jp

ՄԱԿ-ի Հազարամյակի հռչակագիր (2000): Կապուղի՝ Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ինտերնետային կայք՝ http://bit.ly/1Mbg5J5

ՀՀ Սահմանադրություն (2015): Կապուղի՝ ՀՀ իրավական տեղեկատվական համակարգ http://bit.ly/1QR7DR6

Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների մասին ՀՀ օրենքը. Կապուղի՝ ՀՀ Ազգային Ժողովի պաշտոնական կայք: http://bit.ly/1LWfdgz

Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա. Կապուղի՝ Հայաստանում Միավորված ազգերի կազմակերպության (ՄԱԿ) ինտերնետային կայք: http://bit.ly/1RDulMq

Կազմակերպության մասին

«Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն կին իրավապաշտպանների կազմակերպություն է, որի առաքելությունն է կրթել ու քաջալերել երիտասարդ կանանց ու աղջիկներին, բարձրացնել իրենց մասնակցությունը որոշումների կայացման և խաղաղաշինական գործընթացներում, նպաստել գենդերային հիմքով խտրականության և բռնության վերացմանը, ինչպես նաև բարձրացնել իրավասու մարմինների պատասխանատվությունը և հաշվետվողականությունը՝ պաշտպանելու և իրացնելու կանանց իրավունքները:

Ծրագրի մասին

Համաձայն Ամնեսթի Ինթերնեյշնլ 2008թ.-ի զեկույցի՝ Հայաստանի կանանց մեկ քառորդը ենթարկվում է ֆիզիկական, իսկ երկու երրորդը՝ հոգեբանական բռնության:

Ներկա իրավիճակն ու վիճակագրությունը հրամայական են դարձնում հասարակությունում գենդերային բռնության կանխումը՝ այդ թվում հասարակության իրազեկման ու իրավագիտակցության բարձրացման միջոցով:

Այս նպատակով «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն Կանանց հանդեպ բռնությունների կանխման ՄԱԿ-ի հավատարմագրային հիմնադրամի աջակցությամբ իրականացնում է «ՀՀ 2011-2015 թթ. ազգային ռազմավարական ծրագրի շրջանակներում գենդեր և գենդերային բռնություն առարկայի ներդրումը ուսումնական պլանում» ծրագիրը:

Ծրագրի նպատակն է պայքարել գենդերային խնդիրների և գենդերային բռնության դեմ՝ ներառելով այդ բաղադրիչն ուսումնական ծրագրերում, որը կնպաստի արական և իգական սեռի աշակերտների գենդերային հարցերի շուրջ իրազեկվածության բարձրացմանն ու կկոտրի առկա կարծրատիպերը:

Ծրագիրն իրականացվում է Կրթության ազգային ինստիտուտի, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարության, մարդու իրավունքներով զբաղվող մի շարք ՀԿ-ների և այլ գործընկերների հետ մշտական ու խորը համագործակցությամբ:

ԿԻՆ ԵՎ ՏՂԱՄԱՐԴ՝ ՏԱՐԲԵՐ, ԲԱՅՑ ՀԱՎԱՍԱՐ: ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

www.swv.am

Պատվեր՝ : Տպաքանակ՝ 1000:
Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 60x84/8: տպ. մամուլ:
Տառատեսակը՝ GHEA Arpi Sans:

Տպագրված է **«Տիգրան Մեծ»** հրատարակչություն ՓԲԸ տպարանում